



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

84

B-47

2595

90

Pa. 1855

2011

28

1911

1911
1911
1911

A 230

193

G. E. G. S. G. T. P.

ԳԵՂՈՒԹՅԱՆ

ԲՈՒՐՆ

Ի ՖԵՐԵՆԼԷ



Ի Թարգմանութեամբ

Յակոբայ Արքեպիսկոպոս

և

Մատթէէ Պատմաբանաց

ՄԵՐՆԵՐԲԵՐԻ



Ի ԹԻՖԼԻՉ

1856

2003

Handwritten signature or initials in cursive script, possibly reading "W. H. [unclear]".

4386

ԳՒՂՁՍՆԻՔ

ԻՆԿՍՒՐՉԻՑԻԼՅՑԻ

ԲՕՄԸՆ

ՖԵՐԷԼԻՒՑ

Ի Թարգմանութեանց

Յահողայ Կարկնեանց

և

Մհայեղէ Գապիսնեանց:



Ի Հայրապետութեան Տեառն Տեառն Ե՛ՆԵՐ
ՍԻՍԻ Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց,
ճայրագոյն Գատրխարդի առաքելական մայր Ե՛թող
սրբոյ Կաթողիկէ Լ՛ջմիածնի:

ՄԸՍՆ ԵՐՐՈՐԴ

Ի ԹԻՖԼԻՍ

Ի Տպարանի Ներսիսեան Ուսումնարանի ընծայեցելոյ յաղնուական
Գեորգայ Լ՛րժրուելոյ:

Ի 1855 ամի. և Լ՛ղղական 1304.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Ценсур-
ный Комитетъ узаконенное число экземпляровъ.

Тифлисъ, 4 Марта 1854 года.

Неправомощій должность Цензора Протоіерей І. Орбели.



10246-58

(22275.59) 9

Դ Լ Ի Ը Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Հանդարտ և խիստ մութ երեկոյ էր : Աւելիկոյ քուչերը կա-
մաց կամաց դատարկուում էին : Վախազալեւիվեր դետեղերքից արդէն
քաշում էին հնաեղև գիշերւայ խիստ ուշ մնացող մանեկողներն էլ :

Միմիայն նրանցից մինը, ինչպէս երևում էր, դեռ չէր ու-
ղում հնաեղևից հեռանալ : Այս շատ կամաց էր գնում և յանկարծ
հանդնեցաւ նաւահանգստի մօտ : Մին քանի ըսպէից յետոյ նրան
մօտեցաւ մին անցորդ, որ գայեա էր դէմադէմից : Այս անձանօթ-
ները լաւ մտիկ տալին մէկզմէկու, իբրու թէ ջանալով իրարու ճա-
նաչել, բայց մ'Թնումը չը ջոկելով . մերջապէս նրանցից մինը, այ-
սինքն նա, որ յետոյ եկաւ նաւահանգստի մօտ, ասաց միւսին՝

— Դոն Ալեքո, դո՞ք էք :

— Դոն Աստեվան, աղաղակեց միւսը, ես հաղիւ թէ ճա-
նաչեցի ձեզ ձեր ձայնից էս ի՞նչ անիծած մութն է : Հա,
դոն Աստեվան, դուք չտխարուեցաք, ես Ալեքոն եմ

— Այս ձեզ մնարում էի, դոն Ալեքո, ասաց Աստեվանը
համարեա՞ թէ քչիչալով :

— Եւ է, որ չմտաացաք անտութեան անդը, որը որ նշանա-
կեցի ես պանդուկու մը, պտտասխանեց դոն Ալեքոն նոյնպէս ցած :

— է, ի՞նչպէս է գնում գործը, ի՞նչ է անում Արդօզո կումար:

— Արդօզո կումարն կ'այրեն մին շարաթից յետոյ, եթէ մենք չ'ազատենք նրան:

— Ա՛, հիմի տեսա՞ք . . . տխրը ես ձեզ չ'ասացի, թէ թագաւորի թուղթն էլ չ'ի ազատիլ նրան:

— Ա՛յ իմ բարի, իմ աղնիւ բարեկամ: Այժմ իմանա՞ք, թէ ի՞նչ տեսակ մարդ է էդ Արբուէսը . . .

— Այս նրան ձեզանից լաւ եմ ճանաչում, դօն Աստեփան: Բայց բանը էդ չ'է, այլ պէտք է Արդօզո կումարն ազատելու հընարքների վրա մտածել, և՛ էստեղ էտուր վրա միտք անելու տեղ չ'է. գնանք էստեղից, ուր որ ես կըտանեմ ձեզ, և կըխօսինք ճանապարհին:

Այս ասելով նա հեռացաւ նաւահանգստից: Աստեփանը դընաց նրա ետեւից:

Նաւահան ժամանակ նրանք դնացին լուռ. յետոյ դօն Ալեքըն հարցրուց իրա ուղեկցին՝

— Հիմի դուք ի՞նչ էք մտածում անելու, դօն Աստեփան:

— Այս հէնց էտուր համար եկայ էստեղ, որ խորհուրդ անենք միասին, թէ ի՞նչ պէտք է անենք, խնդրել ձեզանից ինձ հընարք յոյց տալ: Իսկ ես իմ կորնից ամէն բանի պատրաստ եմ:

— Ամէ՛ն բանի, դօն Աստեփան, կտրական, ամէ՛ն բանի:

— Կտրական ամէն բանի, ձեռք և իմ տեղծօղը վերայ:

— Ուրեմն լսեցէք, դօն Աստեփան: Իսպանիումը միայն դուք չ'էք դո՛հ ինկվիզիցիայի անիրաւութեանը և հալածանացը: Չեզ պէս հազարաւոր տարաբողոքներ, բարկացածներ և ամէն բանի պատրաստներ կան, որոնք արդէն թաքցնում են իրանց սրտումը անհաշտ ատելութիւն իրանց նեղադնողներին, իրանց դահիճներին դէմ, որոնց անուններն են ինկվիզիթօրներ . . . և էս ատելութիւնը կըխորտակէ նրանց զարհուրելի իշխանութիւնը . . .

Այժմ ամենայն ինչ պատրաստ է, միայն առաջնորդներ չուկան: Առաջնորդ դառնանք մենք, դօն Աստեփան. մեզ գործակից կըլ ինին ուրիշ երկու անձինք էլ, դուք նրանց ճանաչում էք: Արբանք են՝ դօն Իսիմենէս դէ Վերրերան և դօն Կարլոսը . . .

— Մօնդէխար կոմսի փեսայն, շուտով ասաց Աստեփանը:

— Չէ, գեռ փեսայ չ'է, պատասխանեց Ալեքըն. դօն Կարլոսը գեռ չ'է պսակուել: Այսպէս էնքան ատում է ինկվիզի-

ցիւային, ինչքան առաջ սիրում էր Մօնղէխար կոմսի աղջկանը:

— Սնց որ է հաւատարու չէ, դօն Ալլերո. չախաղանց շուտ փոփոխութիւն է:

— Սակայն սրտանց և կատարեալ է. հստուր երաշխաւոր է դօն Աարլոսի բնածին ազնուութիւնը

— Բայց բաժանման պատճառն ինչ էր:

— Խիստ պարզ: Եւ փերջապէս տեսաւ, թէ նրան Ղաօնեայ Իզարելայի հետ պատկման համաձայնելու դաշինքը էր անարգ, և տեսաւ, թէ լաւ է հրաժարիլ նրա հետ պատկուելից, քան թէ իրա պատիւը կորցնել:

— Ուրեմն ես կը հաւատամ նրա հիմնկուայ դրացիանցը. բայց ի՞նչ է այժմ մեր դարսողութիւնը: Ղաւք ստացիք անբաւականներէ համար:

— Ի հարկէ, նրանք մեզ ընկեր կը դառնան, ես նրանց կը պատրաստեմ, և ափսօ — դա — ֆէ օրը, երբոր վճիռը կարգալիս կը լինին, նրանք մեր նշանը տալիս, մեր առաջնորդութեամբ Խնկվիլիթորներէ վրա կ'ընկնին . . . Ժողովուրդը անպատճառ մեր կողմը կը բռնէ, — նրանք էլ առում են էդ դահիճներին, — և մենք կ'ազատենք բոլոր մահու դատապարտուածներին:

— Ընորհակալ եմ ձեզանից, դօն Ալլերո, շնորհակալ եմ, ստաց Խստէվանը բռնելով և սաստիկ հուփ տալով նրա ձեռք: Ղաւք կ'ամենում էք արդեամբք կատարել էն խորհուրդը, որը որ ունէի ես:

— Զինց որ Խնկվիլիթորը կը սպանուի, մնացած ամէն բանը հեշտ է:

— Սպանել, առում էք դուք . . . դուք մտքերդ դրել էք սպանել նրան:

— Զարագործին սպանելը նշանակում է պատժել նրան իրա չարագործութեանց համար:

— Ղաօն Բողբիդէզ, ստաց Խստէվանը ուղևորեալ, էդ դաշինքով ես չեմ կարող համաձայնել ձեր խորհրդի հետ . . .

— Եղա ի՞նչպէս ստացիք դուք, թէ ամէն բանի պատրաստ էք . . .

— Ես էն խօսքով հասկանում էի, թէ անձնական ամէն փտանդի պատրաստ եմ . . .

— Եւրը մենք եթէ չըստանենք Եւրբուհսին, նա կը լիչտցնէ

Հաղարաւոր անմեղ և առաքինի մարդկերանց . . . ի՞նչ վատ
կրկնի, երբոր մենք սպանենք մին չարագործին, Հաղար զսհեր ա-
զատելու համար . . .

— Ինչ կ'ուզէ լինի, էդ մարդասպանութիւն է, յանցանք է
. . . մէկէլ որ Արքուէսի բոլոր չարագործութիւնները ծածկու-
մ է նրա սրտոնք . . .

— Իսոյց ուրիշ հնարք չըկայ, ասաց Ապերոն թախծաղին:

— Իսոյց, ասաց Լատկ վանք մին ըսպէ մտածելից յետոյ, եթէ
մենք շատուր լինինք, էն ժամանակը մենք կարող ենք յաւիշտա-
կել Արքուէսին և, առանց սպանելու նրան, ազատել դատապար-
տեալներին . . .

— ()ձին խնայելը վտանգաւոր է. շուտ թէ ուշ՝ օճը անպատ-
ճառ կրկայթէ իրա ազատողին:

— Ինտեղ, ուր օճեր շատ կան, նրանցից մինին սպանելը ոչ
լնչ է. կրտսանես մինին, կրտսանուիս միւսից: Արքուէսի տեղը
դուրս կ'ուզայ ուրիշ գահիճ: Ախրը Արքուէսին սպանելը դեռ չէ
նշանակում Ինկիլեղեցիան փչացնել . . . իսկ նրան փչացնելը մեր
բանք չ'է, դոն Ապերո. մեզ հարկաւոր է միայն Արգօղօ կոմսին
և միւս տարարողներին ազատելուն համար մտածել:

— Իսոյց Արքուէսին յաւիշտակելը, այսինքն նրան սրիւններից
խլելը, և նրա հետ միասին նրանց ձեռից դատապարտեալներին խը-
լելը մեզ չ'է յաջողուիլ: Սրիւնները և նրանց հետ Սեւիլիայի միջև
Ինկիլեղեցիայի կողմնակաճները, համարեալ թէ, ամբողջ բանակ են.
էն էլ նրանք զինուորեալ են, իսկ մերոնքը, որքան էլ շատ լինին,
էլի շատ հեռու են: Իսկ եթէ Արքուէսը զգուշութեամբ զբիւրի
էն կեանքը, նրան շրջապատողներէ մէջ շիտթ կ'ընկնի, և մենք,
հարկաւորութիւն չ'ունենալով մեր զօրութիւնը բաժնելու, զլուխ
դուս կրտանենք նրանց հետ, որանց ձեռին կրկնին դատապարտեալ-
ները:

— Մենք զլուխ դուս կրտանենք, դոն Ապերո, բոլոր սրիւ-
ներէ և Ինկիլեղեցիայի կողմնակաճների հետ:

— Ինչո՞վ:

— Չեր ասած անբուռնիաններից ջոկ, մենք ուրիշ բազմա-
թիւ օգնակաճներ էլ կ'ունենանք:

— Աւրիշ . . . ովքեր են, և մեզ համար ո՞վ կըզանի նրանց:

— Արանք ովքեր են, ևս յետոյ կ'ասեմ ձեզ. իսկ մեզ հա-

մար կըգտնի նրանց փողը, դուք հարուստ էք, դոն Ալեքո:

— Մին ժամանակ հարուստ էի, դոն Նասիվան:

— Սրեմն ինձ յանձնեցէք սարքել էս բանը, ես միջոց ունիմ, և մենք հարկաւորից աւելի գործակից կ'ունենանք: Ես կըգտնեմ, կամ աւելի լաւը, ևս կըվարձեմ համարձակ, սուր և ճարպիկ մարդ գիբ . . .

— Ալեքսէն . . . համարչա՛յ . . . ճարպի՛կ . . . և դուք երբ են . . . Ես հասկացայ, դուք մտածում էք սարքել պատուարժան և մեծանուն « Վարդունիի ընկերութեան », փառաւոր անգամներին: Եւրո նրանք խարերաներ են, դոն Նասիվան. մէկ էլ որ նրանք հողով և մարմնով մտերիմ են Ինկվիզիցիայի:

— Խարերայ են, թէ չ'է, մեզ համար ողջը մէկ է, միայն թէ անեն, ինչ որ մեզ հարկաւոր է: Իսկ նրանց մտերմութեան մասին, նրանք սովորաբար նրանն են, ովոր փող կըտայ, նրանց համար ողջը մէկ է՝ Ինկվիզիցիան է, մենք ենք, միայն թէ փող լինի: Հանձնեցէք ինձ գործել, և դուք կըտեսնէք, որ մենք առանց մարդասպանութեան զլախ կըտանենք:

Ես վերջի խօսքերը ասելիս, դոն Բողրիզէզը հանդնեցաւ մին բաւական գեղեցիկ ասն դրան առաջը, և դուռը դիպակացրուց:

— Ես ում տանն է, հարցրուց Նասիվանը:

— Իմն է, կամ աւելի ճշմարիտը, իմ բարեկամ դոն Խիսելենն գե Վերրերայինն է, պատասխանեց ծերը: Ես նրա մօտ եմ կենում, հնդուր որ ես ինձ համար տուն չ'ունիմ, և կէք ինձ հետ, և երեքս միասին խորհրդակցելով, էլի կըխօսինք մեր գործի համար:

Դուռը բացուեցաւ. Նասիվանը և ընկերը ներս մտան դոն Վերրերայի սենեակը: Ալեքոյի բարեկամը մինակ էր. Նասիվանին անսնելով, նա համարեալ թէ դարմայաւ:

— Դան Խիսելենն, ասաց ծերը: Մենք այժմ մին յուսօգի ընկեր էլ ունինք: Դոն Նասիվանը կարահան արաւ միանալ մեզ հետ:

Վերրերան լռութեամբ հուփ տուեց Նասիվանի ձեռը:

— Դոն Ասրլուր այսօր կըգայ մեզ սօս, հարցրուց ծերը իրա տանակը:

— Դոն Ասրլուր ամենեին չ'է կարող մտնակից լինիլ մեր գործին, պատասխանեց Վերրերան թախծազին: Նրան բռնեցին, և այժմ Ինկվիզիցիայի գետնափորելի մէջն է . . .

— Բացումը իմ, էլի մին զոհ, ոգևորեալ ասաց Ալլերոն .
ուսմից լսեցիք դուք էդ բանը :

— Գօնեայ Իզարելայից . նա այնպէս սիրում է իրա առաջ-
ուսաց նշանածին, այնպէս վերաւորած է նրա քամբադդութեամբը ,
որ նրան մտիկ տալը ցաւալի է . մենք էլ զրկուելով դօն Աարլոսից
քիչ բան չըկորցրինք :

— Բնկարծիք, ասաց Լասէվանը . բայց մենք էլի երեք ենք,
և նրանց օգնութեամբը , որանց համար ասացի դօն Տօդրիգէզին

— Ի՞նչ օգնութիւն, հարցրուց Գերրերան :

Լասէվանը յայտնեց նրան իրա դիտաւորութիւնը « Գար-
դուներան ընկերութեան », անդամների վրա :

— Ի հարկէ, նա աւելացրուց յետոյ , շատ ախորժելի է
էս տեսակ մարդկերանց հետ բան բռնելը . բայց հարկի հետ կը-
ռուիլ չէ կարելի : Աթէ նրանք մեր կողմը չը լինեն, մեզ հակա-
ռակ կը լինեն, և էն ժամանակը աստուած դիտէ ինչ դուրս կը-
գայ մեր մտադրութիւնից :

— Արեմն դուք ճանաչում էք նրանց , ժպտալով հարցրուց
Գերրերան :

— Լ. կամայ, դօն Խիմենէս : Իմ տարաբաղդ հանգամանքը
տախտեց ինձ ճանաչել նրանց : Նրանք միանգամ ազատեցին իմ
նշանածին : Նրանք հիմի էլ կ'օգնեն ազատելու նրան . ինձ յանձ-
նեցէք նրանց հետ տեսնուիլը և նրանց մեր կողմը գծելը :

— Դուք էս խորհուրդը հաւանում էք , դօն Տօդրիգէզ ,
հարցրուց Գերրերան :

— Հա՛, էնդուր որ լաւը չըկայ , սլատասխանեց ծերունին .
Լյս համարում էի, էլի համարում եմ, անհրաժեշտ , որ Լը-
բուհօը սպանուի : Բայց որովհետեւ դուք և դօն Լասէվանը հա-
կառակ էք սրան, որեմն ես կը համաձայնեմ ձեզ հետ :

— Համաձայնում ենք, ասացին երիտասարդները միաբերան :

— Եւրամակ է բաժանուիլ ձեզանից, պարոնայք, ասաց Լա-
սէվանը :

— Ար և երբ մենք էլի կը տեսնուինք, հարցրուց Գերրերան :

— Ի՞նչք վաղը կէս զիշերից առաջ էն աւերակը , որ ինչ-
պէս ձեզ յայտնի է, Տրիանի արուարձանի ծայրումն է : Սովորա-
բար էնտեղ հաւարում են Գարդուներանները :

— Արդանք, դօն Լասէվան, ասաց Ալլերոն, որեմն մինչև վաղը :

— Մինչև վաղը, պարոնայք, պատասխանեց Նստեվանը, և սենեակից դուս գնաց :



II

ԵՐԿՈՒ ՄԻԱՅՆԱԿԵԱՅՆԵՐ :

Մեւիլիայի մօտ, էն կողմումը, ուր էր վարժապետի առանձնական բնակարանը, կար բաւական մեծ քարանձաւ, որ բնական շինուել էր ժայռի մէջ մին գեղեցիկ սարի կողքին, որի կանանչ գաղաթը, կարծես թէ, քաշ էր բնկած Մանսանարէսի վրա :

Դա քարանցաւի մուտքը համարեալ թէ բոլորակ և այնքան բարձր էր ; որ նրա մէջ կարելի էր մտնել առանց գլուխը խոնարհեցնելու, և նման էր ծաղկեայ պսակի : Մին բարակ խաւ հողի վրա բուսել էին առատութեամբ և իրանց բարունակներով, սստերով և արմատներով բռնած ունէլին էն խաւը թուփեր, գեղեցիկ խաղողի վազներ, հոտաւետ ջղախոտեր, ծորի թուփեր իրանց կարմիր ձութերով :

Քարանցաւի մէջ պատերի վրա և ամէն տեղ կանաչ հիւսուածներով փռուած էին բաղեղներ և ուրիշ բոյսեր, որոնք դուրս էին եկել ապառաժի ճեղքուածներէ միջից :

Գլշերը վրա հասաւ :

Դն քարանցաւի մէջ, համարեալ թէ, դրան մօտ վառած էր մեծ կրակ, որ չորս կողմը տարածում էր պոյծառ լոյս և ոչնչացնում էր խոնաւութիւնը՝ որը որ տարուայ շատ տար ժամանակն էլ զգալի էր քարանցաւի մէջ : Արակից մին փոքր հեռու շնորհաշուք նստած էր հասարակ հոսած աթոռի վրա ջահել գեղեցիկ կին. նրա մօտ

պառկած էր թեքքնկած նրա ծնկան վրա մին տղամարդ շապկանց,
կուրծքը բաց և կտուեայ վարտիքով: Աս ջահիլ մարդը լուռ էր.
նրա խոժոռ և վառվառն դէմքի վրա նկարած էր թախիժ. կար-
ծես թէ, նա ամենեւին բանի տեղ չ'էր գնում իրա ընկերոջը, թէ
և սա մտիկ էր անում նրան վառեալ սիրով:

Աս միայնակեացներն էին՝ մեր Հին ծանօթ Մանօֆինան և
նրա մանրիւմ «Միրենան»:

Նրանք մին ժամից աւելի լուռ էին:

Միրենան կամենում էր, բայց չ'էր համարձակում խօսիլ իրա
ընկերի հետ: Նա սպասում էր, որ Մանօֆինան ասէ նրան գոնէ
մին խօսք: Բայց վերջապէս տեսնելով, որ նա աւելի մտածմանց է
տալի իրա գլուխը, յանկարծ շոշափեց իրա փոքրիկ ձեռովը նրա
սե և խիտ խուճուճները:

Հրաժարեալ Գուապօսը վեր թաւաւ, ծանր վերցրուց գլուխը,
և տրամութեամբ մտիկ տալով իրա սիրեկանին, ասաց՝

— Կարելի է, քեզ իբրևն է հարկաւոր, հոգի ջան:

— Ինձ, ոչինչ հարկաւոր չ'է, Մանօֆինա, պատասխանեց սի-
րենան թախճադին: Միայն թէ, ինձ շատ ցաւելի է քեզ մտիկ
տալը. դու էլի միշտ էդպէս տխուր ես . . . էլի միշտ լուռ ես
. . . դու տարաբաղդ ես, Մանօֆինա . . .

Հրաժարեալ Գուապօսը ամենեւին չբացատրեց:

— Հա, շարունակեց ջահիլ կիճարմատը, դու տարաբաղդ ես,
եւ էդ տեսնում եմ, եւ էդ բանին համոզուած եմ. ես գիտեմ,
դու չ'ես գանկատում քո այժմեան վիճակից, նաև հաւատաց-
նում ես քո առաջուայ ընկերներին, երբ պատահում ես նրանց,
թէ քեզանից աւելի բաղդաւոր մարդ չըկայ աշխարհումը: Բայց էդ
կեղծաւորութիւն է, Մանօֆինա. քեզ համար էստեղ նեղութիւն
է, էստեղ բանտիցը վառ է քեզ համար:

— Ա՛վ, Կուլեւրինա, ինձ մի՛ մեղադրիր. ես արի էն ամէնը,
ինչ որ դու ուզում էիր, եւ հնազանդեցայ վարժապետին. ի՞նչ
անեմ, որ ինձ համար էնպէս ծանր է, որ ասել էլ չեմ կարո-
ղանում . . .

— Վերջապէս վեղդ առար:

— Այլ կարողութիւն չունայ, Կուլեւրինա. եւ միշտ կարծում
էի, թէ անցկրկենայ, թէ եւ կ'ընտելանամ մեր այժմեան ասլիկաւն,
թէ դու ոչինչ չ'ես նկատում . . .

— Գու ախտոսում ես Գարդուենեան ընկերութիւնը :

— Ես ախտոսում եմ անցեալ ժամանակները, ես ի՞նչ եմ հիմն . . . շան պէս ընկած եմ հստեղ, և իսկ շան պէս կերակրում եմ ողորմութեամբ—մեջուսիցսով : Իսկ դիշերը, Աուլեւրինայ, երբ դու քնած ես իմ կողքին, ես համարեալ թէ, աչքերս չ'եմ խփում : Երբեմն իբրու թէ լսում եմ սքիւնի մահամտան անքոյ, իբրու թէ սքիւն իմ կողքիս մեռնում է, երբեմն աչքիս երևում է մին դեղնած, բարձր և հիւժեալ հրէշ, և ես ամաչում եմ ասելու, ես զարհուրում եմ :

Մանօֆինան, էս ասելիս, դեղնած էր մեռելի պէս . նրա ճակատը լքուեցաւ քրտինքի ոլուն կաթիլներով, նրա աչքերումը էր մեծ նեղութիւն : Միտնան հրաժարեալ Գուապոսի գլուխը մտքը բարձրացրուց, և կռանալով դէպի նրան կաթողին մօր պէս, որ կռանում է դէպի իրա հիւանդ երեսին, համբուրեց նրա ճակատը :

Իս համարողը, համարեալ թէ, կինդանարար զօրութիւն գործեց : Մանօֆինան աչքերը կամաց ծածկեց և կամաց կպաւ դլսովը իրա սիրեկանի կուրծքին :

Երկուսն էլ լուռ մնացին մին քանի րոպէ :

— Իս ամէնը էնդուրից է, յետոյ ասաց Մանօֆինան, որ ես երդումս կտարեցի, որը որ ասուել էի ընկերութեանը :

— Մի թէ մտացել ես դու, որ էդ մեղքին ալ ճակում տուեց վարժապետը, պատասխանեց Միտնան, չընի՛ թէ դու չ'ես հաւատում նրան :

— Այո՞, ես նրա ամէն մին խօսքին հաւատում եմ, ասաց Մանօֆինան, առաջուանից աւելի հանդիտա ձեռով . տեսնում ես, հողի ջան, էդ բանը ամենեւին իմ միտս չ'էր գալի . . .

— Եւ ի՞նչպէս նա քեզ համար բարի է կամենում, Մանօֆինա . ախր նա խնդրեց քեզ համար առողջութիւն, երբ հիւանդ էիր, ասլա թէ ոչ՝ դու վեր չ'էիր կենալ : Ախր քո միտդ գալիս է, ի՞նչ զարհուրելի ցաւ ունէիր, որ քեզ մօտ ոչ ով չ'էր կամենում գալ :

— Հա, ուրիշները, և ոչ թէ դու, Աուլեւրինա . դու չը վախեցար, թէ քեզ էլ կը դիպէ էն հիւանդութիւնը և կը մեռնիս :

— Չ'էի վախենում, օ՛հ թէ մեծ բան է իլել, ասաց ջահել կինը, մտքը ինչ բարձրացնելով ուսերը : Ներիցէք ինձ հարցնել,

— Ես ի՞նչ պիտք էր անէի, եթէ դուք դնայիք էն աշխարհը և ինձ
չըտանէիք ձեզ հետ հը

— Առլեւրինա, աղաղակեց Մանօֆինան, յայտնի ուրախա-
ցած Սիրենայի վերջի խօսքերից. Առլեւրինա, դու յերաւի սիրում
ես ինձ, քիչ կրմնայ սր, խմ քեզ սիրածից աւելի:

— Արեմն, դու միայն հիմի՞ ես հասկանում: Հասկացիր,
վերջապէս, աղաչում եմ, էն էլ, որ « ընկերութիւնից, հրաժա-
րուելը քեզ հարկաւոր էր:

— Դու կարծում ես:

— Կարծում եմ էնդուր համար, որ էսպէս ասաց վարժա-
պետը:

— Ի՞նչ խօսմ էդպէս է, պատասխանեց Մանօֆինան, մտած-
մունքով, բայց, տեսնում ես, Առլեւրինա, էսպէս ապրիլ, ինչ-
պէս ես հիմի ապրում եմ, մէկ խօսքով, էլ կարողութիւն չըմնաց:
Միշտ նստած ձեռերը ծալած. քմբշամարտութիւն երազումս էլ իս-
կի չ'եմ տեսնում, և հիմի նչով ինձ չ'ի ասում՝ «Քէրէ՛մ, Մա-
նօֆինա, դռադ բարեհիմ, խոսի պրծացրեր Մէկ էլ,
երանի թէ լինէր, ինչպէս ասաց վարժապետը, աղաատել Ինկվիզի-
ցիի անմեղ զոհերին, այսինքն, ինչպէս մենք ենք ասում, ձեռերս
ժած տալ սբիրների վրա. ուր է . . . էն էլ չըկայ

— Համբերէ՛, կրլինի պատեհ:

— Ե՞րբ, և ո՞ւր կըգանես նրանց, էն զոհերին . . . ո՛հ թէ,
ինչպէս կ'աշխատէի, հողի ջան:

Ինչ բոպէին կրակի վրա դրսից քամիի պէս լքմին վիշեց, և
խակոյն քարանոցաւի մուտքի մօտ բուսած թուփերը և նրա վրայից
քաշ արած խիտ տերեւները սկսան խշխշալ և ձայն հանել:

— Ա՛յլ է, աղաղակեց Մանօֆինան, վեր կենալով և հա-
նելով իրա դաշնակը:

— Բնաանի է, պատասխանեց մին ձայն, և խակոյն կանանչներէ
միջից երեւեցաւ մին աղամարդ:

— Ա՛յս ողորմութեան, աղաղակեց սիրենան, էս մեր Աօհօն
է. ի՞նչպէս է պատահել . . . էս ժամանակումը:

— Ի՞նչ ես ուզում . . . մին բանի համար խոսմ հարկաւոր չ'ենք
. . . հը, շուտով վրա բերեց Մանօֆինան:

— Ա՛յ քաջ էդպէս կրլինի, պատասխանեց Աօհօն. թէ և
ճգնաւոր ես դառել՝ էլն առաջուայ պէս ես . . . հարկաւոր է՛ պատ-

բաստ եմ . անֆէրիմ , եղբայր :

— Ա՛խ , Ա՛ստուած իմ ողորմած , քանի ժամանակ է , ես չեմ
լսած այդպիսի բառեր , տխրութեամբ պատասխանեց հրաժարեալ
Վառապօսը . այ , դու բաղդաւոր մարդ ես , բարեկամ Ղօղօ . դու
քեզ համար գնում ես , ուր կամիս , անում ես , ինչոր քեզ հար-
կաւոր է , սիրտդ չ'է նեղանում . իսկ ես

Իսա վերջի խօսքը ասելիս սիրենան յանկարծ դրեց նրա բեր-
նին իրա սպիտակ , պստիկ ձեռք , և Վանօֆինան չլսեց ջարդուց
սկսած բանը . բայց էս նախազգուշութիւնը 'ի զուր էր . խորա-
մանկ Ղօղօն արդէն կարաց հասկանալ , թէ ի՞նչ կայ հրաժարեալ
Վարդունոսի սրտումը :

« Ի՛նչ է , մտածեց նա . սրա հոգուն է հասել այժմեան մի-
այնակեցութիւնը , և սա մերն է , , ,

— Ի՞նչ նոր համբաւ կայ քաղաքումը , հարցրուց սիրենան ,
ջանալով խօսակցութիւնը փոխել :

— Հատ բան , պատասխանեց Ալգվազիլը մին խորհրդաւոր
գէմբով :

— Ի՞նչ , ի՞նչ բան կայ , աղաղակեցին Վանօֆինան և օր-
բենան , մտիկ տալով Ղօղօյին անյադ հետաքրքրութեամբ :

— Ի՞նչ շտապօղ էք . . . բոլորը միասին չ'ի ասուիլ .

— Ինչպէ՞ս թէ բոլորը միասին , ասաց Վուլեւրինան , գու-
քեզ համար ինչպէս կ'ուզես պատմէ , քիչ քիչ , Ա՛-եւ լաւ կը-
լինի , նստիր մեզ մօտ . կարծեմ բաւական դադրած կըլինիս :

— Յիրաւի , նստիր , Ղօղօ , շարունակեց Վանօֆինան :

Ղօղօն նստեցաւ . Վանօֆինայի աչքերը , որոնք անթարթ նրան
մտիկ էին տալի , պսպղում էին :

— Ա՛մենից առաջ , Վանօֆինա՛ , ասաց խորամանկ ալգվա-
զիլը , պէտք է գիտենաս , որ Վարդունեան ընկերութիւնը քո
տեղը գեռ . ոչ ովի չ'է գտել :

— Կարծեմ որ , շուտով պատասխանեց սիրենան . ես կ'ուզէի
էլ իմանալ , տեսնենք ո՛ւմը կը գանեն

— Խօսքը մի՛ կտրիր , Վուլեւրինա , ասաց Վանօֆինան :

— Հա՛ , բարեկամ , ասաց ալգվազիլը , ձեր տեղը գեռ պա-
րապ է :

— Ի՛նչ , ի՞նչ անեմ , որ պարտապ է , ասաց Վանօֆինան :

— Ա՛լէնչ , իսկ ընկերութեան գործերը լաւ են առաջ գնում ,

խիստ շատ ճաշարիք ունի և ընկերութիւնը նրանց ծառայում է հաւատարմութեամբ:

— Չըլինի՞ թէ ինձ յանդիմանել ես մտածում, բարկութեամբ ասաց Մանօֆինան:

— Դատուած մի՛ արացէ, բարեկամ, պատասխանեց Ղոկօն, ես միայն ուզում էի ասել, թէ ընկերութիւնը այժմ շատ դերազանց յանձնարարութիւններ ունի:

— Ինձ ի՞նչ հարկաւոր է. չէ որ ես հրաժարուել եմ նըրանից:

— Քա կամքն էր հրաժարուիլը, ասաց Ղոկօն:

— Սարժապետը հրամայեց, ասաց Մանօֆինան:

— Քեզ համար ամօթ չէ՞, Ղոկօ, վատ ճանապարհ տանել սրան, ասաց սիրենան նեղանալով, չէ որ սա քո բարեկամն է:

— Վատ ճանապարհ, պատասխանեց ալգլազիլը, հէնց իսկոյն՝ վատ ճանապարհ. դեռ չըլտած դուշակութիւն էք անում. դեռ համբերեցէք, մերջացնեմ, և էն ժամանակը մեղադրեցէք, եթէ պատճառ կը լինի:

— Ի՛նչ, լա՛ւ, մի՛ բարկանար, մենք դուշակութիւն չ'ենք անիլ, միայն պատմէ:

— Ինչ է որ, դուշակութիւն չէք անիլ . . . հիմի ես մտապայ, ինչի համար էի խօսում . . . այ ինչ է խօսքը կարելը . . . ինչի՞ համար էր . . . ախ, հա, ընկերութեան համար: Արեմն տեսնում էք, յանձնարարութիւն հիմիկուայ յանձնարարութիւններն են. Ինկվիզիթօրները յանձնում են նրան խաւարացիներ հերետիկոսներին. հերետիկոսները խոստանում են նրան լաւ փող, եթէ նա համաձայնի խաւարացիներ . . . չէ, չըխաւարացնել, այլ յափշտակել Ինկվիզիթօրներին:

— Ի՞նչ ինչպէս բան է, խօսքը կարելով ասաց Մանօֆինան, որի աչքերը պայծառ պսպղացին Ալգլազիլի մերջին խօսքը լսելու:

— Հա, էդպէս է, Մանօֆինա, պատասխանեց Ղոկօն. քաղաքումը, խօմ գիտես, խելքից հեռու բաներ կան. Դաւթուայնա հանդապետին այրում են, իսկ նրա աղջկան զցել են բանտը յաւիտեան:

— Յիսուս իմ, աղաղակեց սիրենան, իսկ դօն Լատիվա՞նը, նրա՞ն ինչ արին:

— Նրան, գիտես, դեռ ձեռ չ'են տալի, և հէնց նա է մը-

տածել յաշխատակել Ինկվիզիթորներին էն ժամանակը, երբ նրանք կը հաւաքուեն ամսօ—դա—ֆէ . և հէնց էնտեղ էլ խլել սրիբներէ ձեռնից և տանել իրա նշանածին և ծերին, այսինքն նրա հօրը:

— Եւ թան է, աղաղակեց Մանօֆինան. ի՞նչ լաւ կը լինի եթէ հնար լինէր ինձ էլ հղտեղ աշխատել:

— Կարելի է, Մանօֆինա, պատասխանեց Աօկօն, միայն եթէ կամք կըտաս. էս էնպէս թան է, խօմ գիտես, առանց ընկերութեան չեն կարող գլուխ տանել:

— Եւ ի՞նչը ես հրաժարուել եմ նրանից, տխրութեամբ ասաց Մանօֆինան:

— Ի՞նչ աւելի լաւ, որ հրաժարուել ես:

— Ինչի՞:

— Եւ ինչի. դու հիմի ուրիշ ամենից լաւ մեծաւորի խելքը կը հաճեցնես էս գործը վիզն առնել. Աս, եղբայր, քեզ համար հողին չի խնայիլ, և երբ դու միայն գնաս նրա մօտ և խօսիս քաղցրութեամբ, և պատմես նրան, թէ ահա գտել ես լաւ յանձնարարութիւն, թէ արանով կարելի է հարստանալ, թէ դու քո կողմանէ վիզդ ես առնում, . . . դէս, դէն . . . էն ժամանակը նա կը համաձայնի ամէն թանի, որ միայն դու կրկին միանաս ընկերութեան հետ, և նա էտուր վրա յոյս կը դնէ . . .

— Եթէ նա էտուր վրա յոյս կը դնէ, ուրեմն նշանակում է կը խաբուի, բայց ես խաբելու միտք չ'ունիմ:

— Ա՛յլ է հրամայում քեզ խաբել, դու ոչինչ մի խոստանար, թե՞ ծառայող ինչ կ'ուզէ կարող է մտածել, և եթէ սխալուի, մեղաւորը ինքն է: Միայն մին թանու՛մը դու կարող ես յուսադրել նրան, էնդուրումը, որ դօն Վաստէվանը ոչինչ չի խնայիլ, — դրա համար ես քեզ երաշխաւոր:

Հրաժարեալ Ղարգունասի սիրտը սաստիկ խփում էր, պըռքները ժաժ էին գալի, աչքերը վառւում էին: Մին թանի ընդհանուր չըկարաց ներքին սաստիկ աղմկից ասել մին խօսք, յետոյ յանկարծ վեր թռաւ, դրստուեցաւ, կապեց կարմիր դօտիկը, որի վրա քաշարած էր իրա դաշնակը, և աղաղակեց սուր և ուրախ ձէնով:

— Գնանք:

— Արեւնան, որ մինչև էն ժամանակը չէր հեռացրել իրա աչքերը իրա սիրեկանից, նոյնպէս վեր թռաւ հուսած աթոռի վը

բայից և կանգնեցաւ Մանօֆինի կողքին:

— Դձը ուր ես գնում, հարցրուց նրան կօկօն:

— Չեղ հետ, համարձակ պատասխանեց ջահիլ կինը: Մե
թէ գու կարծում ես, թէ ես յե՞տ կըմնամ սրանից:

Մանօֆինան մտիկ տուեց նրան կաթողին, և նրանք երեքը
քարանցուից գուրս եկան:

III

Գարգունեանցի իրիտաց Ռեժարե :

Քանի աւելի մտկանում էր Մանօֆինան Գարգունեայի պալատին, էնքան աւելի քայլերը շուտ շուտ էր մտխում : Արա սնչերը սաստիկ բարձրանում էին, և նա անյագարար շունչ էր առնում իրան—իսկ արարացի ձիու պէս, երբ նա հեռուից տեսնում է իրա տիրոջ վրանը :

Հէնց Սիրենան էլ կատարեալ հանգիստ չ'էր. նա էն զգացմանց իշխանութեան ներքոյ էր, որոնք սովորաբար զարթում են մարդու սրտի մէջ էն տեղերը տեսնելիս, որոնց նա սիրում էր, բայց երկար ժամանակ չ'էր տեսել, և տեսնելու յոյս էլ չ'ունէր :

Գիշերն էր հանգարտ, մութ և հիանալի :

Մտենալով համարեալ թէ աւերակին, Աօկօն և նրա ուղեկիցները կանգնեցան զարմանալով : Պալատումը երևում էր, որ հանդէս կար. էնտեղից գալիս էր խաղի ձայն, կիթարի և պանդուրայի հնչմանց հետ միասին, և կիսարաց գունից գուրա էր գալի այսօրու լուսի երկայն շերտ :

— Ի՞նչ քե՛՛՛՛՛ թէ մէջ են սրանք հասեղ, ասաց սիրենան հա-

85-94201
(22 275-59)
(85-94202)



առաջելով ,

— Աւելի լաւ , պատասխանեց Աօհօն : Մենք էլ սրանց հետ
քէֆ կ'անենք :

— Հանդիսաւոր զր է , ի՞նչ է դրանցը , հարցրուց Մանօֆինան :

— Ինչպէս երեւում է , մեծ բան չըկայ , պատասխանեց Աւգ-
վաղիլը : Ինչի՞ կանգնեցանք հատեղ , ներս մտնենք :

— Հա , ներս մտնենք , ասաց Սիրենան ողևորեալ ,
որի ոտները արդէն ազամայ շարժում էին իրա սիրեկան և ծանօթ
եղանակների հետ :

Եւ նրանք շուտով գնացին դէպի դուռը անցկենալով երեք
մարդկանց մօտից , որոնք նրանց համառօտ խօսակցութեան ժամա-
նակը կանգնած էին մին քանի քայլ հեռու բաւական բարձր և խիտ
թուփերի քամակին : Մանօֆինան և Սիրենան — մինը՝ մեծաւորի
հետ առաջակայ տեսութեան մտածմունքով , միւսը՝ առաջակայ ու-
րախութեան երեւակայութեամբը — ամենևին չըտեսան երեք անծա-
նօթներին : Իսկ Աւգվաղիլը ձեացնում էր , իբրու թէ չէ տես-
նում նրանց :

Սիրենան և մանօֆինան անհամբեր ցանկանում էին տես-
նուիլ իրանց առաջուայ ընկերների հետ , բայց մօտենալով նախա-
դրանք և կարդացողին արդէն յայտնի դահլիճին , նրանք յանկարծ
կրկին կանգնեցան : Նրանց խիղճը տանջում էր երեւիլ էն մարդ-
կերանց , որոնցից ինքը ինչ առաջ ինքնակամ կտրել էին հին բա-
րեկամութեան կապը :

— Եւ ի՞նչ էք մտածում , գնացէք , ասաց Աւգվաղիլը :

— Առաջ դու գնա , ասաց Մանօֆինան իրա սիրականին :

— Զէ , պատասխանեց Սիրենան , թող Աօհօն առաջ գնա՛ ,
իսկ ես և դու նրա ետեւից :

— Ես , խօսմ ես , ասաց Աօհօն բռնելով Սիրենայի ձեռից ,
հէնց իսկ անդալուզեան քաղաքաւարութեամբ : Գնանք , մի՛ վա-
խենա՛ք , բարեկամք :

Եւ յետոյ շուտով բաց անելով դուռը նա հանդէսով մտը-
րուց Սիրենային դահլիճը . Մանօֆինան , արդէն ինքը ինչ քա-
ջալերելով , մտաւ հնտեղ նրանց ետեւից :

Մին քանի քայլ դահլիճումը առաջ գնալով Աւգվաղիլը
կանգնեցաւ , գդակը վէր առաւ , և ասաց , ուրախ մտիկ տալով բաղ-
մաթիւ մարդկերանց և կնանոց , որոնք մին ըսպէ՛ս առաջ մտիկ էին

տալի հէնց նոր դադարած պարին (տանցին)

— Մեր ամենախոնարհ յարգանքը պատուելի ժողովիդ:

Սրա պատասխանն էր զարմացման աղաղակ, որ դուրս եկաւ բաղնաթիւնից: Արտիճեալ մեծ կարեայ կերօններից, որոնք տընկած էին սիւների վրայ՝ տարածուած էր պայծառ լոյս, էնդուր համար Մանդամիենտօն, գուապօսները, կօսերտերանները, սիրենանները, չիվատոսները, մէկ խօսքով դահլիճի մէջի ամէնքը ճանաչեցին Մանօֆինին և նրա ընկերին:

Մին ըստէ անցնելից յետոյ Մանդամիենտօն վերկացաւ իրա տեղից, շուտով մօտեցաւ նորակներին, և դառնալով դէպի Մանօֆինան և նրա ընկերին ասաց նրանց վաղաքշահան և ուրախ ձեռով:

— Դուք ինչ լու արեք, իմ բարեկամք, որ մտքներդ բերեք մեզ տեսութիւն գալ . . . դուք մեզ, չեմ իմանում, թէ ինչ շնորհ էք անում, որ եկաք հստեղ . . . ուրեմն բարի եկաք, ընկեր, յաւելցրուց նա յետոյ տալով ձեռք իրա հին ստորագրելոյն, բարի եկաք . . .

Մանօֆինան էլ իրա կողմից ձեռք տուեց, բայց էս բանը արաւ ոչ յանկարծ, ահամայ: Նա կարծեց, թէ ձեռք մեծաւորին տալը նշանակում է մին տեսակ յարակցական պարտք: Մանօֆինան սրտանց չէր ուզում էդ բանը:

Քաղցր ընդունելութիւնը, որ ցոյց տուեց մեծաւորը կուլեւրինային և Մանօֆինին, պատճառեց խիժտ բարի ազդեցութիւն: Գարդուենտները ուրախութեան աղաղակներով թափեցան իրանց հին բարեկամների վրա, պատեցին նրա չորս կողմը և սկսան դրկել և համբուրել:

Իս ուրախութեան յայտնելու ժամանակը, միւս սիրենաններից սիրունութիւնով փոքր ինչ պակաս մին Սիրենայ, որ կանգնած էր փոքր ինչ հեռու, ասաց իրա մօտ կանգնած պառաւին, որ նախանձով և նեղանալով մտիկ էր տալի կուլեւրինային:

— Մտիկ տուր, մայրիկ, ինչ քոզ ունի դլխին, հէնց իսկ ձօնձի է, նրա կապան էլ բոլորովին խուճացած է, հէնց իմանաս հասակի եկած օրիցն է հագնում:

— Հա՛, հա՛, չար սրտով պատասխանեց պառաւը, ինքն էլ էնպէս դեղնած է, որ կարծես թէ քրքումով է ներկած . . . երևի

քաղցածութիւնիցն է, խեղճը . հախն է . . . չ'եմ ուզում, ա-
սում էր, մնալ ձեզ հետ: Ա՛յ քո չ'եմ ուզում:

— Չէնդ կտրէ, պառաւ կաշաղակ, ասաց մեր հին ծանօթ
Ղարաբաբուն, որ էս բոպէին կանգնած էր պառաւի կողքին: Ինքդ
էլ չ'ես իմանում, ինչ ես դու տալի: Առլեւերինան էլի էնպէս է,
ինչպէս որ էր: Ա, ձօնձինքի մէջն էլ - յաւելցրուց նա, կողմնակի
մտիկ տալով սիրենային, որ ամէնից առաջ սկսաւ խօսել Մանօֆի-
նայի սիրեկանի վրա, — մին քանիսներին դէնք կը դնի, թէ՛ և նրանք
դարդարած են մարդարիտներով և երիզներով (լէնտերով):

Ա՛յ պառաւը, ո՛չ սիրենան չըհամարձակեցան ասել մին խօսք:
Արբ հասարակաց ուրախութիւնը փոքր ինչ դադարեցաւ, Ման-
գամիկնուն, ամենեւին չ'աշխատելով իրա ուրախութիւնը թարցնե-
լու, գոցեց Առլեւերինայի կուռը իրա կռանը և ասաց տանելով նրան
գէպի խտրը, որ գցած էր գետնի վրա սիւների մօտ, և որոնց վրա թեք
ընկած էին ընկերութեան կանայք:

— Ղառ նստի՛ր էստեղ, հոգի իմ, և փոքր ինչ հանգստա-
ցի՛ր, ես կարծեմ, որ բաւական դադրել ես, մինչև ես երկու խօսք
խօսիմ Մանօֆինայի հետ:

Առլեւերինային էս առանձին շնորհք ցոյց տալուց յետոյ, մե-
ծաւորը բռնեց Մանօֆի՛նի ձեռից, աչքով արաւ Ղօկոյին և գնաց
նրանց հետ բաւական հեռու Ղարդունսաների բազմութիւնից, ո-
րոնք էլի սկսեցին պարը:

— Մանօֆինայ, ասաց նա էկադուապոսին անչափ քաղցր ձևով,
գու, ՚ի հարկէ, էստեղ ՚ի զուր չ'ես եկել: Քեզ, կարելի է, հար-
կաւոր է մեր օգնութիւնը . . . և թէ էդպէս է, մենք կ'օգնենք
քեզ, բարեկամ, որչափ կարող ենք. ախրը, թէ և դու թողի՛ր մեր
« արժանայարդ ընկերութիւնը », բայց մենք էլի սիրում ենք քեզ
առաջուայ պէս և համարում ենք քեզ ընկեր:

— Մանօֆինան, վրա բերեց Ղօկօն, ոչովի օգնութեանը կա-
քօս չ'է, ընդհակառակն պէտք է նրան համոզել, որ նա մեզ օգնի:

— Ի՞նչ խօսք է, զարմանալով ասաց մեծաւորը:

— Ա՛յ տեսնում էք, շարունակեց Ալգիլազիլը, ձեզ յա-
ռաջադրում են մին թեթեւ գործ, և եթէ դուք գլուխ կըտանէք
Մանօֆինի հետ, լաւ փող կայ:

— Ի՞նչ գործ է:

— Մին ջահել երեւելի պարոն՝ ուզում է . . .

— Ազդում է, խօսքը կտրեց մեծաւորը, որ մենք խառնարաններ
նրա հակառակորդին... Պատրաստ ենք ծառայել նրան:

— Ամենեկն չէ... Էնպիսի թեթեւ գործ է, Մանդամիենուտո,
որի նմանը դեռ «ընկերութեան», ոչ մին ժամանակ յանձնուած չէ:

— Ի՞նչ է, էդ ի՞նչպէս բան է:

Սոկո՞ն ամենեկն պատասխան չտալով, մտիկ տուեց չորս կողմ
մը մին խորհրդական ձեով: Ղարդունոսները պարերով զբաղուած
նրանցից տասնեւհինգ քայլ հեռու էին, ուրեմն չէին կարող լսել
նրանց խօսակցութիւնը: Բայց դրան մտիկ չտալով, Ալգվազիլը
աւելի զգուշութեան համար տարաւ մեծաւորին և Մանօֆինին
աւելի հեռաւոր սիւներից մինի մօտ, կռայաւ դէպի առաջինը որ
բան կարելի էր մօտիկ, և ասաց կիսաձայն՝

— Պէտք է օգնել մեզ առաջուայ նահանգապետին ազա-
տելու:

— Ի՞նչպէս:

— Ընկերութիւնը պէտք է յաւիշտակի մեծ Ինկվիզիթորին,
երբոր նա դուրս կը գայ աֆսօ—դա—ֆէ դնալու, և յետոյ չ'ար-
ձակել նրան երկու օր: Ինչ երկու օրումը Արգօնո կոմսի աղջկայ
նշանածը, դօն Դաստէվան դե Վարգասը — որ և յառաջադրում է
ձեզ էս թեթեւ գործը, — վրա կը հասցնէ փախչել կոմսի և իրա
նշանածի հետ մինչև մերձաւոր ծովեզերեայ քաղաքը, և դնալ էն-
տեղից մին ուրիշ երկիր:

— Չընի՞ թէ դու գժուել ես, Սոկո՞, ասաց Ղարդունիայի
մեծաւորը. ասրը էդտեղ, եղբայր, գլուխ վէր դնելու բան է...

— Ի հարկէ, օգուտեալ ասաց Ալգվազիլը: Վտանգ կայ,
բայց հատուցումն էլ լաւն է, երկու հարիւր հազար թէալ:

— Արկու հարիւր հազար թէալ, կրկնեց Մանդամիենուտոն,
որին էս գումարի մեծութիւնը, ինչպէս ասում են, բոլորովին
չչկեցրուց. երկու հարիւր հազար թէալ, և դրանց համար պէտք է...

— Եւ յաւիշտակել մեծ Ինկվիզիթորին և չ'արձակել նրան ընկե-
րութեան գետնափորից երկու օր, շտապով յաւելցրուց Ալգվա-
զիլը:

— Ի՞նչ, բայց երբ մենք կ'արձակենք նորին սրբազնութիւնը,
մեզ կ'այրեն նրա հրամանով: Չէ, եղբայր... իսկ եթէ խառնարաններ...
գլխիս վրա: Ասրը մեռածը էլ ոչինչ հրաման չի կարող տալու:

— Բայց նորին յարգութիւնը, դօն Դաստէվանը, խաւարաց-

նել չ'է ուզում :

— Կորին յարգութիւնը միամիտ է, ինչպէս ոչխար : Եթէ դօն Իստէվանը դեռ գերեզմանի մէջ չ'է, էդ բանու՛մը մեղաւորը, 'ի հարկէ, հայր մեծ Ինկվիզիթօրը չ'է :

— Բայց ի՞նչ անենք. չէ ուզում էլի :

Մանդամիենտօն մին քանի բոպէ լռեց : Երեսանց կարելի էր կարծել, թէ նա մտածում էր Իստէվանի առաջարկութեանը համաձայնի թէ ոչ . բայց նա տես ի՞նչ էր մտածում — « չ'է ուզում . . . հայ թէ խելք է . . . իմ ձեռք ո՛վ կրբունի հայր Ինկվիզիթօրին էն կեանքը զրկելու, երբ նրանք կրփախչեն էս տեղից . . . յետոյ կ'ուզարկեն նոր Ինկվիզիթօր . . . նա ոչինչ չ'ի գիտենալ, և կրդառնայ մեր ճաշարի . . . իսկ փողը մենք կ'առնենք. հանաք բա՛ն է, երկու հարիւր հազար բէալ » :

Ի հարկէ էս մտքերը Կօկոյից և Մանօֆինից թաքուն մտցին : Մանից ջոկ, խորամանկ Մանդամիենտօն հարկաւոր համարեց բռնել սատակ զբաղածի կերպարանք, և էս կերպարանքով նա վերջապէս ասաց Վլադադիլին՝

— Սատանան գիտէ, ինչ պէտք է անել . Մանօֆինան էլ համաձայնում է :

— Ընկարծիք, կը համաձայնիմ, ասաց էկազարդունոսը :

— Ուրեմն, որ էդպէս է . դու կրկին մտադիր ես ընկերութեան մէջ մտնելու, հարցրուց Մանդամիենտօն սատանի պէս մըտիկ տալով իրա առաջուայ ընկերին :

— Դէ, մեծաւոր, չ'եմ ուզում խաբել, մտադիր չ'եմ, պատասխանեց Մանօֆինան . ինձ միայն դուր է գալի յանջնարարաւիւնը, որի համար ասաց Կօկօն, և ես յօժարութեամբ կը կատարեմ էդ բանը ձեզ հետ, եթէ դուք էլ կամք կըտայք : Կուլերինան էլ կ'աշխատի, շարունակեց նա պարծենալով : Իսկ դուք խօմ գիտէք, մեծաւոր, որ համարձակութեան կողմից Կուլերինան լաւ Գառապօսներից յետ չ'ի մնալ :

— Հասկանում եմ, ասաց Մանդամիենտօն, կկոցելով իրա միայլուն, խաբէական աչքերը, հասկանում ենք . . . դուք Կուլերինայի հետ ուզում էք աշխատակից լինել մեզ, էնդուր որ մեծ վարձ է խոստացած . . .

— Մեծաւոր, պատասխանեց Մանօֆինան, սատակ անուատուած մարդու ձեռով : Ես երբէք չ'է չ'եմ ասել աշխատութիւ-

նով և սրտառով ստանալու վարձին: Քայց հիմի դու կարող ես ամենևին բան չըտալ ինձ. ես էլի յօժարութեամբ վիզս կ'առնեմ յանձնարարութիւնը, և կրկատարեմ, ինչ որ ինձ կըհրամայեն, հէնց հնպէս, ինչպէս թէ ես էլի ընկերութեան մէջն եմ:

— Քայց ինչի՞ դու կրկին ընկերութեան մէջ չըլինիս, քողցութեամբ ասաց Մանգամիենտօն, որ, ինչպէս ասել էր Կոկօն, շատ ցանկանում էր, որ Մանօֆինան կրկին մտնի ընկերութեան մէջ:

— Ը՛նեմ կարող, մեծաւոր, պատասխանեց Մանօֆինան, ինչ որ արած է, արած է, միանգամ հրաժարեցայ, միւսանգամ էլ յարմար չէ: Ի՞նչ դու միայն ստա ինձ, համաձայն ես դու, որ ես և Կուլեւրինան միանանք ձեզ հետ էս գործումը:

— Գեռ սա ինքն էլ չէ ասել — համաձայն է էս գործին թէ չէ, ասաց Կոկօն: Ուրեմն դու ի՞նչպէս ես մտածում, աւելցրուց նա դառնալով դէպի Մանգամիենտօն, վիզդ առնում ես թէ չէ:

Մանգամիենտօն կրկին լռեց մին քանի ըսպէ, իբրև թէ դեռ երկմտելով — ընդունի Մ. Մ. Մ. առաջարկութիւնը, թէ ոչ, — և վերջապէս ասաց Կոկօն:

— Փոքր ինչ ահ ունի, բարեկամ . . . քայց, ի՞նչ ուզում է ըլնի, վիզս եմ առնում:

— Ուրեմն ես կարօղ եմ բերել էստեղ դօն Լաստիվանին և նրա երկու բարեկամներին: Երանք ուզում են խօսիլ երես երես:

— Կարող ես, պատասխանեց Գարդուենի մեծաւորը. իսկ քեզ, Մանօֆինա, շարունակեց նա դառնալով նրա կողմը, մենք ուրախ ենք տեսնել, թէ և կարճ ժամանակ: Քեզ և Կուլեւրինային մենք ամէն ժամանակ կ'ասենք՝ բարի եկաք:

— Ուրեմն որ էդպէս է, հրաման տուէք ինձ կատարել իմ առաջուայ պաշտօնս էն օրը, երբ հարկաւոր կըլինի յանձնարարութիւնը կատարելու, և տո՛ւր ինձ, էն օրուայ համար մին քանի մարդ իմ իշխանութեան տակ:

— Ուրախութեամբ, Մանօֆինա, ուրախուէ՛ք. և յետոյ դու կըմտածես, կընկատես: Կարելի է, գիտես, բոլորովին միտքդ կըփոխես:

— Ե՛ւ յժմ, ասաց Կոկօն, ես կըկանչեմ էստեղ դօն Լաստիվանին:

— Կանչէ՛, ասաց Գարդուենի մեծաւորը, մենք կըխօսինք. իսկ դու, բարեկամ, աւելցրուց նա դառնալով դէպի իրա առաջուայ ստորագրեալը, չե՛ս ուզում Կուլեւրինայի հետ մին Ծանդան:

գօ պար գալ :

— Ինչի՞ չէ, ասաց Մանօֆինան :

Եւ խկոյն նա տարաւ Առւելերինային քէֆ անօղ Ղարդու նոսների մօտ : Սկսաւ Ֆանդանգօն :

Իս ժամանակուսը Կօկօն դուրս սլքուեցաւ պալատից և մօտեցաւ էն երեք անծանօթներին , որոնց համար վերը խօսեցանք , և որոնք դեռ կանգնած էին առաջուայ տեղուսը :

Մրանք էին — Իստէվանը , դօն Տօդրիգէզ դէ Սալերօն , և դօն Խիմենես դէ Ղերրերան :

Թէ և շատ մութն էր , բայց առաջինը ճանաչեց Սալերօնին :

— Հ'ը , ի՞նչ է , հարցրուց նրան :

— Ի՞նչն բանը սարքած է , պարոն ասպետ : Ղարդունիի մեծաւորը համաձայնում է կատարել ձեր ցանկութիւնը :

— Հիմի տեսնում էք , ասաց Իստէվանը իրա ընկերներին , ես ձեզ չէի՞ ասում . . . այժմ մենք կարօղ ենք յոյս ունենալ գլուխ գալուն : Ղնանք պալատը :

— Ղնանք , ասաց Սալերօն :

— Համարձակում եմ ձեզ յայտնել , պարոնայք , ասաց Կօկօն . դուք էնտեղ հասարակ մարդու պէս վարուեցէք , այսինքն առանց ամենայն պատուասիրութեան . պէտք է , գիտէք , որ ոչինչ չըհասկանան . իբրու թէ , գիտէք , եկել էք էնպէս , մին դարդակ գործի համար : Եւ շատ վատ չէ լինիլ , եթէ դուք , սինեօր դօն Իստէվան , բարեհաճէիք պարի մէջ մանել գոնէ Առւելերինայի հետ :

— Իսկ ես ում հետ պար գամ , հարցրուց Սալերօն :

— Արդտնուին խաղացող կանայք ձեզ համար էլ , պատասխանեց Կօկօն քմ ծիծաղելով : Ղարդունիայի ընկերութեան մէջ ներանցից շատ կան :

— Ուրեմն տա՛ր մեզ , ասաց Իստէվանը :

Եւ նրանք Սալերօնին ետեւից մտան պալատը :

Երբ նրանք մտան դահլիճը , Մանօֆինան և նրա ընկերը արդէն վերջացնում էին Ֆանդանգօն : Ղարդունոսները ուրախացած կարաւօղների նազելիութեամբ , անթարթ գցելով աչքերը դէպի պարը , ամենեին չըտեսան նրանց . միմիայն Մանդամինտօն , որ սպասում էր նրանց , խուսից դուս եկաւ : Ղրան մօտեցաւ Կօկօն :

— Պէտք է , վոքը ինչ սպասել , ասաց նրան Ղարդունիի

մեծաւորը, Փանդանդօն էս ըսպէիս կրկերջանայ, և մերոնքը կըսկը-
սեն իրիկուայ հաց ուտել: Արեմն խօսել, գիտես, յորմար չի լի-
նիլ, աւելի լաւ է իրիկուայ հացից յետոյ ընդարձակ տեղումը:

Ղօկօն էս խօսքերը հասցրուց Աստեվանին և նրա բնկերներին:
Համարեալ թէ էս խօսքերի հետ Փանդանդօն վերջացաւ էն
բաղմու թեան բարձր աղաղակներով, և սկսուեցաւ իրիկուայ հացի
պատրաստութիւն: Այս պատրաստութիւնները շատ պարզ էին: Ար-
եմաներից մինը և երկը շիւտտոսներ փուեցին գեանի վրա խօսի, գրին
նրա վրա մին քանի աման Գաժարիս (1), մին մեծ ախտէ Վառ-իդա-
րօ (2) և չորս խորոված հաբիթաւ, ուրիշ ոչինչ, ամանիք և գդալ-
ներ ամենեւին չըկային: Գարդուստները սովորաբար ուտում էին
խորը ամանից կամ ախտէից, և գդալի տեղ գործ էին ածում իրանց
մատները:

Փանդամիենայի ստորադրեալները իսկոյն նստան խօսիի չորս
բայրքը, իսկ մեծաւորը մօտեցաւ իրա մեծանուն մուշտարիներին,
և հրաւիրեց նրանց մասնակից լինիլ իրա որդկերանց աղքատ սե-
ղանին:

Նրա հրաւերը ընդունեցաւ, Ալեքօն, Խիմէնէսը և Աս-
տեվանը նստեցան սեղանի մօտ, գարդուստների պէս, պարզաբար
գեանի վրա. վերջինը, իբրու թէ դիպուածով նստաւ Ղօկու-
րինայի կողքին: Իսկ զ՝ Արեմայի աչքերը լքցուեցան արտասուն-
քով: Նրա միտքը եկաւ, սր իրա մօտի երիտասարդի սրտումը ամե-
նեւին ուրախութիւն չըկայ, բայց նա աշխատում էր ժպտալ որքան
կարելի է ուրախ:

Իրիկուայ հացը սկսուեցաւ:

Աստեվանը ցոյց տալով, իբրու թէ ուրիշներից յետ չի մտում,

(1) Գաժարիս Անդալուզիի շատ սիրական կերակուրներից մինն
է: Նրան պատրաստում են հսպէս: Աճում են հաց, կոտորում
կամ բրդում են և ջրով թրչում են, յետոյ թրչած հացի կտոր-
ների վրա ցանում են պղպեղ, իւղ, քացախ և աղ. վերջապէս էս
խառնուրդի վրա էլի բաւական ջուր են աւելացնում: Հարուստ
մարդիքը բաց յայնմանէ զցում են նրա մէջ աղը դրած մսի կտորներ:

(2) Միս պաճարի (տաւրի) և ոչխարի կտրտած և համեմեալ
բուղլամայ սոխով և բահարներով:

քաղցրութեամբ ասաց իրա մօտ նստողին՝

— Գու ախոր ինձ հետ պար կը դա՞նս :

— Ա՛յ, սինեօր, պատասխանեց Կուլեւրիճեան մին տխրադին ձեւով . ես, յիրաւի, սիրում եմ պար գալ, ինձ համար մեծ բաղդ կը համարէի, եթէ դուք ինձ հետ պարէիք, բայց մեր երեկոյեան ուրախութիւնը արդէն վերջացել է . իրկուայ հացից յետոյ ամէն մարդ կ'երթայ էն տեղ, ուր որ մեծաւորը հրամայել է : Եւ դուք, սինեօր, աւելցրուց նա կամայ և մտիկ տալով նրան կարեկցութեամբ, — դուք հիմի պարելու ժամանակ չ'ունիք :

— Ի՞նչընչ կուլեւրիճեա, ասաց Լսատիլանը :

— Մն՛ք կը պարենք ձեզ հետ, աւելցրուց նա, տօնախմբութեան մէջ : Իսկ այժմ կերէք և ինձ հետ շատ մի՛ խօսիք . ապա թէ ո՛չ, ահա սիրենաները աչքի տակից մեզ մտիկ են տալի . նրանք կը նախանձեն, որ դուք ինձ հետ էդպէս քաղցր էք :

Լսա ժամանակումը կերակուրները վերջացան զարմանալի արագութեամբ : Գարդուհոսների աղօթքները աշխատում էին անօրինակ ջերմեռանդութեամբ . դօն Ալեքօն ընկերութեան շատ քաղցած անդամներից պակաս չ'էր ուտում, և միանգամայն սիրուրտում էր իրա մօտ նստող ջահիլ աղջկերանց հետ . դօն Գերբերան ծիծաղում և համարներ էր անում մին խիստ սիրուն սիրենայի հետ, (որ անցկենալով ասէնք, շատ յօժարութեամբ կը խօսէր իրա Գու ապուին հս հարուստ հագուած, սիրուն, ջահիլ մարդու վրա) :

Գարդուհոսների միտքն էլ չ'եկաւ, թէ էս արտաքին ուրախութեան տակ թաքցրած կայ համարձակ և երկիւղալի դիտաւորութիւն :

Երբ նրանց համար բոլոր պատարաստածները կերան վերջացրին, նրանք վեր կացան և շուտով, ինչպէս ասաց Կուլեւրիճեան, գնացին ամէնքը Գարդուհոսի մեծաւորի դեռ պարելից առաջ տուած հրամանները կատարելու :

Դահլիճի մէջ մնացին միայն Մանդամիենտօն, ալգլաղէլը, Մանօֆիման, իրա սիրեկանը, Լսատիլանը և իրա ընկերները :





IV

Գ Լ Ե Ն Ե Դ Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ե

243

Ահա գիշերը արդէն շատ անցել էր, երբ Գարդուհուսները ցրուեցան իրիկուայ հացից յետոյ:

Մանդամիւնտօն, ինչպէս ցոյց տուինք վերի գլխի մէջ, մնաց պալատումը իրա բարձրանուն մուշտարիներէ, Ալգվաղելի, Մանօֆինայի և նրա սիրականի հետ, բայց արաւ մեծ կաղնեայ արկղ, որ դրած էր դահլիճի մին անկիւնումը, և հանեց կնտեղից դեղնած կեղտոտած մագաղաթի կապոց, կլէկի Թանաքաման և կոպիտ կտրած գրիչ: Յետոյ ծածկեց արկղը և դրեց նրա վրա էս բոլոր առարկայքը: Գարդուհի մեծաւորը մօտեցաւ դրանք, որ վաղէ, բայց էն ըսպէին դռները բացուեցան հէնց կարծես իրանք իրանց և դահլիճը մտաւ խօզէն:

Ալգվաղելը ամէն բանը առաջուց իմաց էր արել Արբուէսի սիրելոյն:

Նրան տեսնելիս խստէվանի գոյնը Թուա բարկութիւնից և նա ասաց Վօլոյին ցած ձէնով՝

— Դառ մատնեցիր մեզ, մատնիչ:

Վօլօն ամենեւին չը շիտթեցաւ էս բանից և արատաւանեցաւ մենեին հանդարտ ձևով՝

— Դուք սխալուում էք, Մինեօր իմ մարիցա էլ չէ անցել ձեզ մատնելը:

Իսկ հանդարտ կերպարանքը և ձեռ ստիպեց Վանէվանին իրա



կարծիքի ճշմարտութեան վրա կասկածել :

Եւ միջոցումը Մանդամիենտոն, ամենևին տեղեակ չը լինելով Ղաովինիկեանի գալու պատճառին, ընդունեց խօսքին շատ քաղաքավարութեամբ, և սկզբնական բարեւելից յետոյ հարցրուց նրան

— Ղուք իբրի՞ն էք կամենում մեզանից, հայր իմ :

— Ես կամենում եմ խօսիլ այ էս պարտնների հետ, պատասխանեց խօսքին, ցոյց տալով Ղատէվանին և նրա ընկերներին :

Մանդամիենտոն յօնքերը կախեց :

— Ի՞նչ է ուղում հատեղ էս Ղաովինիկեանը, հարցրին Ալլերօն և Ղատէվանը :

— Եւ հիմա մենք կ'իմանանք, պատասխանեց երիտասարդը և մտեցաւ Լորբուհսի սիրելոյն :

Խօսքն քաղցրութեամբ ձեռք տուեց :

Ղատէվանը իրա ձեռք նրան չըտուեց, բայց անթարթ նրա երեսին մտիկ տալով ասաց

— Չեղ համար բաւական չ'ելաւ մատնիչ լինելը, դուք, յայտնի բան է, ցանկանում էք ինձ էլ կորցնել :

— Ես ձեր մատնիչը չ'եմ իլած, պատասխանեց խօսքն արխութեամբ, և բնաւ միտս չ'եմ դրած միշտցնել ձեզ . ընդհակառակն կամենում եմ առաջարկել իմ օգնութիւնս :

— Իսկ Ղաջօրէ՞սը, աղաղակեց Ղատէվանը, որի նախանձը կրկին շարժեցաւ Ղաովինիկեանին տեսնելիս : Ա՛ր է նա այժմ :

— Չեր նշանածի համար դուք կարօղ էք հանդիստ լինել, դօն Ղատէվան, պատասխանեց Ղաովինիկեանը : Ես ձեզ կըվերադարձուի, երբ ժամանակը գայ . . .

— Կըդարձուի . . . կրկնեց Ղատէվանը բարկութեամբ, 'ի հարկէ, յետ կըդարձուի, էնդուր որ ես կ'աղաատեմ նրան . . . հա՛, ես կամ ուրիշ մինը . . . բայց ձեր կողմից, 'ի դուր էք աշխատում դուք յուսադրել ինձ . . . ախրր ես հասկացայ ձեզ, պատուարժան դօն խօսք . . . Եւ ես միայն եթէ կամենայի . . . դուք . . . տեսնում էք, մենք հինգս էդ մինիդ դէմ . . . Ղուք անխոհեմութիւն արիք, դօն խօսք, որ հատեղ եկաք :

— Հէնց էդ հաստատում է, թէ ես չ'եմ վախենում ձեզանից, պատասխանեց խօսքն : Եթէ ես, ինչպէս դուք ասում էք, ձեր մատնիչը լինէի, կըգայի՞ հատեղ մենակ հասկա ուշ ժամանակ :

— Կատուած իմ, աղաղակեց Ալլերօն, ախրր դուք, հայր

խմ, աղատեցիք ինձ անցեալ օրը ձեր բնկերներէ յարձակումից :
Կերեցէք ինձ շնորհակալ լինել ձեզանից գրա համար և ասել ձեզ ,
թէ իմ խելագարութիւնս անց կացաւ . . .

— Թոյլ տուէք ինձ իմ կողմից եւ ծանուցանել ձեզ , թէ ձեր
համարձակութեան համար ձեզ վերջապէս կենդանւոյն կ'այրեն ,
սառը պատասխանեց Խոզէն :

— Վ'են այրիւ . Ինկվիզիթօրները ինձ խելագար են համար
ըում , պատասխանեց Սալերօն :

— Ինկվիզիթօրները վերջապէս կարօղ են նկատել , թէ դուք
վտանգաւոր խելագար էք , և էնպէս կըլարուեն ձեզ . հեա , ինչ
պէս վարուում են ուրիշ խելագար չ'ըլածներէ հեա :

— Իհ , կ'այրեն ի՞նչ կ'այրեն , ախոսալու բան չըկայ . ար
դէն տարիքս կերած եմ , հայր իմ , պատասխանեց Սալերօն , բարե
կամարար երկնցներով ձեռք դէսլի դօմինիկեանը . իսկ քանի որ
կենդանի ենք , բարեկամ լինենք :

Խոզէն պինդ հուզի տուեց ձեռք և ասաց նրան սիրտ առած

— Հա , բարեկամ լինենք , Ղօն Սալերօ բարեկամ
կենաց և մահու մէջ : Ես իմ գլուխս էդ պատուին անարժան չ'եմ
համարում , և երբեիցէ կըհասնի էն օրը , երբ ես ցոյց կըտամ ձեզ ,
թէ չ'եմ սխալուում էս մասին :

Սալերօյի վարմունքը և Խոզէի վերջի բանը սաստիկ ներդործեցին
Ղաստիվանի վրա : Քայց նա դեռ բողորովին չ'էր կարանում աղա
տուիլ իրա կասկածից և նախանձից :

Նա լռեց մին փոքր ժամանակ և վերջապէս ասաց Խոզէին

— Ղօն Խոզէ , եթէ դուք կամենում էք , որ ես հաւատամ
ձեր խօսքերին , դարձուցէք ինձ Ղօլօրէսին և նրա հօրը . . .

— Սի՞ թէ դուք կարծում էք , պատասխանեց Ղօմինիկեանը ,
թէ Ինկվիզիցիայի ձեռից հեշտ է նրա զոհերին խլելը :

— Ի հարկէ , չ'է . բայց Խոզէն , Ինկվիզիթօրի սիրելին ,
ինչ կամենայ , ամէն բանը կարօղ է անել :

— Խոզէն , անկարծիք , շատ բան կարօղ է անել , պատաս
խանեց Ղօմինիկեանը . բայց չ'ի կարօղ դուրս բերել բանտից էն
մարդուն , որի ձեռերը և ոտները կտորտեցին և այրեցին :

— Տէր Աստուած , ի՞նչ էք ուզում ասել :

— Ես ուզում եմ ասել , թէ երէկ Մանուէլ Արդօզօ կոմ
սին ենթարկեցին կրակի և ջրի չարչարանքներէ . թէ ես չ'եմ կա

բող աղատել նրան, կնդուր որ նա ման գալ չի կարող :

— Իսկ Վալորէսը, Վալորէսը, աղաղակեց երիտասարդը աւատմելի աղէտիւ :

— Նրա համար, կրկնում եմ, հանդիստ կացէք. նրան չեն չարչարել, և ես կ'աղատեմ նրան : Աթէ ափսո — դա — Ֆէլից յետոյ դուք չըգտնէք նրան Խուանայի տանը, արէք ինձ ինչ որ կ'ուզէք, դոն Խատէվան :

— Ուրեմն դուք երդում կանէք, որ Վալորէսին կըվերագարձնէք ինձ :

— Այ երբէք և ոչ ինչ բանումը ես երդուած չեմ . բայց ես կըխօսեամ ձեզ, ես ձեզ խօսք կըտամ :

— () , ուրեմն դորձը սկսե՛ք, պարոններ, աղաղակեց Խատէվանը ողևորեալ : Վաշնագիր լինե՛ք, թէ ինչպէս աղատե՛ք Վալորէսը հոմսին : Վա՛ր, շարունակեց նա, դառնալով դէպի Մանդամլենտօն, որ նրա Խոզէի հետ խօսելիս կանգնած էր փոքր ինչ հեռու, դուք համաձայն էք մեզ օգնելու :

— ()գնութիւնը օգնութիւնից դանազան է, սինիօր. նոյնը կըչափուի մեզանումը վարձատրութեան չափսով, որը որ կ'առաջարկեն ընկերութեանը :

— Վնի համար միամիտ կացէք, ես կըվարձատրեմ առատօրէն :

— Մեր բարեկամ Աօհօն ասաց, կարծեմ, երկու հարիւր հազար ըէալ :

— Վա՛ր կըստանաք էդ գումարը, եթէ կընկերայացնէք մեզ երեք հարիւրից մինչև չորս հարիւր հոգի :

— Որտեղաց կարող է ձարել էդքան հոգի, կամաց ասաց Վերբերան :

— Հարկաւոր ժամանակը նա կըգտնի տասնապատիկ աւելի, պատասխանեց Խոզէն, նոյնպէս կիսաձայն :

— Ի՞նչ էք ասում, շարունակեց Խատէվանը, կարօ՞ղ էք կատարել մեր ցանկութիւնը :

— Կարող եմ, պատասխանեց Մանդամլենտօն, մին ըռպէ մտածելից յետոյ. Միայն, պարոն Մապետ, պէտք է աւելցնէք էլ ըբոան հազար ըէալ . . . ծախսի համար, գիտէք, հաւարելու ժամանակը : Ախր ինձ հարկաւոր է օգնութեան համար կանչել մեր ընկերութեան անդամներին միւս շրջակայ քաղաքներից :

— Իսկ քսան հազար ընտանիք էլ գուր կըստանար ինձանից ,
ասաց դօն Խիմենէս դէ Վերրերան :

— Արովհետեւ սրան էլ համաձայն էր , ասաց Վարդունիի
մեծաւորը , ուրեմն չէք բարեհաճիլ զրով կապել դաշնագրու-
թիւնը : Մեր կարգն էսպէս է :

— Իսկ , պատասխանեց Իստիվանը :

Վարդունիի մեծաւորը տուեց նրան մին թերթ մագաղաթ և
գրիչ : Իստիվանը գրեց նրա վրա այսպէս՝ « Իսկ , Իստիվան
կոմս դէ Վարդաս , խօսք եմ տալի իմ պատուով , որ հաւանցա-
նեմ Վանդամիենայոյին , Վարդունիի ընկերութեան մեծաւորին ,
ափսոս—դա—ֆէից յետոյ միւս օրը , որ պիտի լինի ներկայ տարւայ
յունիսի 4 , գումար երկու հարիւր հազար ընտանիք :

Տուաւ Մեւիլիուսը , 27 Մայիսի 1534 ամի :

Իստիվան , կոմս դէ Վարդաս , ,

— Հիմի , ասաց դօն Խիմենէսը , երբոր Վալորէսի նշանաձը
բարձր ձէնով կարգաց էս թուղթը , տուէք որ ես էլ ստորագրեմ .
սխալը չէ կարելի առաջուց գիտենալ , թէ ինչ կարելի է պատահի :

Իսկ յետոյ շուտով նա գրեց էլի միւսնոյն մագաղաթի վրայ
Իստիվանի ստորագրութիւնից վերջը ինչ ցածր՝

« Եթէ էստեղ նշանակուած գումարը չըստացուի դօն Իս-
տիվան դէ Վարդասից , պարտաւոր եմ ես վճարել սինիօր Վան-
դամիենայոյին էստեղ նշանակած օրումը :

Խիմենէս դէ Վերրերա , , ,

— Իսկ բուռնաբան է , պարսնայք , ասաց Վանդամիենայոն , լսե-
լով էս գրածն էլ . այժմ ես կըզրեմ մեզանումը սարքուած ցու-
ցակումը էս ձեր յանձնարարութիւնը :

Իսկ նա գրեց իրա ցուցակումը այսպէս , կարդալով բարձր տ-
մէն մին յօդուածը՝

« Զանձնարարութիւն Վարդունեան ընկերութեան Սինիօր
դօն Իստիվան դէ Վարդասից , 27 Մայիսի 1534 ամի :

« 1. Ներկայացնել յիշեալ պարսնին Վարդունեան ըն-
կերութեան պատկանեալ չորս հարիւր մարդիք՝ այսինքն ունկրն-
դիւններ , չիվապաններ , դուապօսներ և կնանիք , որոնց ամէն մինը
իրա գործովը միօրինակ պիտանի է ընկերութեանը և միակերպ օգ-
նուի է նրա ծաղկեցնելուն :

« 2. Ներկայացնել նրանց վերոյիշեալ ափսոս—դա—ֆէ օ-

բումբը , և այնպէս ամէն բանը կարգի դնել , որ խառնարանի հայր
մեծ Խնկվիղիթօրը

— Մարդասպանութիւն հարկաւոր չ'է , սինիօր Մանդամիենտո
շուտով ասաց Դասէվանը : Խառնարանի բառը ջնջեցէք . դուք պէտք
է միայն յափշտակէք Արքուէսին և սրահէք նրան ձեր գեանաւա
րերումը :

— Հա՛ , վրայ բերեց Խօզէն մին տխուր ոգևորութեամբ .
Միայն յափշտակել . . . Եւ վայ քո գլխին , եթէ դու համար
ձակիս նրա կեանքին դիպչել :

Պարզունիի մեծաւորը այնպէս ցոյց տուեց , իբրու թէ
ջնջեց վերջին բառը , և նորէն թաթախելով թանաքամանի մէջ գը
րիչը , որը որ մին բոպէ առաջ ծածուկ ցամաքացրել էր իրա կա
պին քսելով , դրեց մին քանի բառեր . յետոյ կարդաց հետեւեալը

« Եւ ընդհանրապէս այնպէս կարգի դնել , որ նրանք յափշ
տակեն հայր մեծ Խնկվիղիթօրին , ազատեն նորին ողորմածութիւն
սեփնից նախկին կառավարիչին , որ անիրաւացի դատաւարաւած
է Խնկվիղիթօրներէից սրտժուելու :

« 3. Յիշատակեալ էստեղի նախկին կառավարիչին ազատե
լից յետոյ յանձնել նրան դօն Դասէվան դե Վարդասին :

— Կամ ինձ , ասաց Խօզէն :

— Հրամայում էք գրել , հարցրուց Մանդամիենտոն դատ
նալով դէպի Դասէվանը :

— Հա՛ , պատասխանեց Դասէվանը , գրեցէք :

— Հիմի , կարծեմ , վերջացաւ , ասաց Մանդամիենտոն , գը
րելով էլի մին քանի բառեր :

— Յաւելցրու , ասաց Խօզէն , « չ'արձակել մեծ Խնկվիղի
թօրին ընկերութեան գեանաւորից մինչև էն ժամանակ , երբ դօն
Խօզէն հրամայէ Մանդամիենտոյին դուրս հանել նրան էստեղից :

— Իդ բանը աւելացնել հարկաւոր չ'է , պատասխանեց Պար
զունիի ընկերութեան մեծաւորը : Երբոր մենք իր խառն . . . այսինքն ,
կը յափշտակենք հայր մեծ Խնկվիղիթօրին , դուք կարող էք նրա
համար հրամայել ինչոր կամենաք — ամէնը կը կատարուի :

— Չէ՞ կարելի ինձ յանձնել նրա հախիցը դալ , ասաց յան
կարծ Մանօֆինան , որ մինչև էն ժամանակը չ'էր համարձակում
խառնուիլ խօսակցութեան մէջ :

— Կարելի է , պատասխանեց Մանդամիենտոն , մին ուրիշ

ձեռով մտիկ տալով Մանօֆինին. ես քեզ յետոյ կ'ատեմ, ինչ որ պէտք է անելու:

— Իսկու թեամբ կը հաստատեմ, ասաց Մանօֆինան:

— Մենք էլ կ'աշխատենք ձեզ օղնելու, Մանդամիենտո, եթէ ձեր Ղարդունոսներէ բանը վատ կը դայ, ասաց Լյատի վանք:

— Չէ, իմ Ղարդունոսներէ կողմից, պատասխանեց մեծաւորը, ներեցէք, ոչինչ բանի մի' խառնուիք. մենք առանց ձեզ էլ գլուխ կը տանենք . . . Իսկ միայն, եթէ կարելի է, ժողովուրդին պատրաստեցէք հնպէս, որ նրանք մեզ կանք տան . . .

— Իսոյց էլ ինձ հնպէս է թուում, ասաց Վալերօն, եթէ ժողովրդեան մէջ խառնակութիւն գընէք, բոլոր դատապարտեալներին կ'ազատենք:

— Չէ, դօն Վալերօ, պատասխանեց Խօղէն. ժողովրդեան խառնակութիւնից հիմն միայն էն դուս կը դայ, որ Ինկվիզիցիայի խատու թիւնը և նրա զօհերի թիւը կը շատանայ. ախրը հակառակ կողմը բոլոր զգուշութեան միջոցները դործ կ'ածի բռնութեան դէմ կենալու. ուրեմն մեր կողմից հարկաւոր է միայն ճարակութիւն և խորամանկութիւն . . .

— Դօն Խօղէն ճշմարիտ է ասում, յաւելցրուց Ղերրերան. հասարակաց շիտթը նման կըլինի թաղաւորի դէմ կենալու դիտաւորութեան. իսկ մեր բանը ախրը միայն Ինկվիզիցիայի հետ է:

Իսոյց ըստին լուեցաւ դրան ծեծելու սաստիկ ձայն. Բոլորը սարսափեցան. Մանդամիենտօն էլ միւսներէ պէս չ'էր հասկանում, թէ ո՞վ կարող էր դառնալ հնաեղ հնպիսի ուշ ժամանակ: Աս իսկոյն հուրի տուեց մին զսպանակ (պրուժին) սիւներից մէկի վրա, սիւնը պտուտ եկաւ, և պատի վրա բաց իլաւ դուռը, որ տանում էր էն դահլիճի կից սակաւ ինչ լուսաւորած սենեակ. հս էր Մանդամիենտայի առանձնարանը:

— Բոլորդ հատեղ մտէք, ասաց Ղարդունի մեծաւորը:

Երբ ամենքը թաք կացան առանձնարանի մէջ, Մանդամիենտօն կրկին հուրի տուեց զսպանակը. և երբ իսկոյն սիւնը եկաւ իրա առաջուայ տեղը, նա վաղեց և բաց արաւ դուռը:

Դահլիճը մտաւ Չապան, դեղնած, սիրտը կոտրած և արտասուներով:

— Ի՞նչ է քո հալը, Չապա, հարցրուց Մանդամիենտօն. ձեզանումը հըդէ՛հ խօսմ չըկայ:

Իստ հարցումին պատասխան չբառելով, Չասլան ինքը հարց-
րուց Վարդունիի մեծաւորին՝

— Իզբայրս եւր է:

Վարդունիի մեծաւորը նմանապէս չբառատասխանելով հար-
ցումին հուփ տուեց սիւնը և ասաց՝

— Պարոններ, կարող էք դուրս գալ, ոչինչ վտանգ չըկայ:

Մաննձնարանի մէջ իլաճները բոլորը դուրս եկան դահլիճ:

— (), եթէ դուք գիտենայիք, պարոններ, աղաղակեց Չա-
սլան, տեսնելով Խատէվանին և նրա ընկերներին, թէ ինչ տարա-
բաղտութիւն է պատահել:

— Ի՞նչ, ի՞նչ է պատահել, հարցրին միասին Վանդամի-
կնտօն և նրա ընկերները:

— Վարժապետը մեր բարերարը, ասաց Չասլան,
պատասխանը առուի պէս թափելով:

— Կատուած իմ, աղաղակեց Խատէվանը. ասա՛, Չասլայ,
ասա՛, նրան ի՞նչ պատահեցաւ:

— Նրան . . . բռնեցին Ինկիլիզեցիի հրամանաւ,
հնդուր համար, իբրու թէ նա ասել է հերետիկոսական վարդա-
պետութիւն

Վահլիճի մէջ տիրեց երկար լռութիւն:

— Իստ տարաբաղդութիւնը, ասաց վերջապէս Խատէվանը, ի՞նչ
հարկէ, մեծ է, բայց ես չեմ յուսահատուում. Յովհաննէի լեռ-
նի մասին Ինկիլիզեցիան չի կարող վերջին հնարքները դործ անել.
Նրա բոլոր Խասանիումը յարգելի անուներ կ'ազատի նրան . . .

— Իստ էլ էդպէս եմ կարծում, ասաց դօն Խիմենէսը:

— Իսկ մեր գործը, հարցրուց Վալերօն. մենք ի՞նչ կտրա-
կան պիտի անենք վերջապէս:

— Հա՛, հէնց հնպէս, ինչպէս հիմի խօսեցանք, պատասխա-
նեց Խատէվանը. Մինեօր Վանդամիկնտօն իրա մարդկերանցով
կը յափշտակի Ինկիլիզիթօրին և դօն Վանուէլ Մոգոլօյին. իսկ մենք
կը պատրաստենք ժողովրդին, որ նրանք արդելք չը լինին մեր գործին:

Իստ խօսքերից յետոյ Խատէվանը, նրա ընկերները և դօն Խո-
ղէն դուրս գնացին:



V

Փ Ո Ր Ց

Հասաւ Կը Յունիսի — ափսոս-դա-Ֆէի համար նշանակած օրը :
 Սեւիլիոյ գամիկները հաւարուած էին փողոցներումը շատ կա-
 նուխ առաւօտուց . նոյնպէս էն օրը շատ կանուխից ման էին դալի
 քաղաքումը փողոցից փողոց մին քանի ազնուական մարդիք , որոնց
 մէջ էին դօն Տօդրիպէզ դէ Սալերօն , դօն Խիմենէսը և Վասէ-
 վանը : Մին ԹախծուԹիւն երևում էր նրանց երեսին , և նրանց
 վարմունքը մին զարմանք բան էր : Նրանք երբեմն մտադրութեամբ
 մտիկ էին տալի լռութեամբ իրանց հանդիպած գամիկ ժողովուրդին ,
 երբեմն յանկարծ կանգնեցնում էին նրանցից մին քանիսին , և նը-
 բանց հետ բան էին խօսում գաղտնի կերպիւ . երբեմն յանկարծ
 իրանք կանգնում էին և իբր Թէ մին բանի համար խորհուրդ էին
 անում իրանց մէջ :

Սերջապէս մայր եկեղեցւոյ ժամացոյցը խփեց ուԹը :

Ժողովուրդը ազաղակով դիմեցին դէպի Խնկիկեղեցիայի պա-
 լատը :

Եւս բաղմունքեան մէջ կային բաւական շատ մարդիկ ձեռնե-
 րին բռնած երկայն փէր ողորձէ , և սրանք մէկզմէկու աչքից ջրհե-
 ապցնելով աշխատում էին որքան կարելի է մէկմէկու մօտ կանգ-
 նել :

Սրանք էին մեզ յայտնի Ղարդունոսները :

Հազիւ Թէ առաջ դնացող բաղմունքիւնը հասաւ Խնկիկեղե-

ցիայի պալատին, էս տանից դուրս եկաւ հանդէսը:

Առաջ դուրս բերին մեծ սպիտակ խաչ — խաչվառ դովնիկ կեաններէ. յետոյ եկան նոյն դովնիկեանները իրանց երկար վերաբերով. նրանք ամէնքը ունէին վզերին անցկացրած փեր սպանդէս և սպիտակ խաչ սև փորուրայններէ վրա:

Միանց ետեից գնում էր Սեդիկայ — Սելի կամար ձեռին բռնած « հաւատոյ խաչվառ, ասուածը. կարմիր ապրեշմեայ ճոթի վրա, որից շնամբ էր էն խաչվառը, ապրեշմէ թելով կարուիէ էր մին կողմումը Իսպանիոյ դրօշը, միւս երեսին դարնիի տերեւներէ մէջ հանած թուր մակագրութեամբ « պրապտեփան և պարմաճոփան, »

Հերցօղի ետեից գնում էին նախարարները և Ինկվիզիցիայի սքիբները. էս վերջնները խիտա շատ էին. նրանք, նմանապէս և դովնիկեանները, անձայն աղօթք էին կարդում:

Դողսլուրդը հանդէսին մտիկ էր տալի զարհուրանօք և լռութիւնով դուս եկան և դատասպարտեալները — տղամարդիք և կնանիք, ծերեր և ջահիլներ: Նրանք էին յիսուն հոգի:

Առաջ գնում էին թելե պատիժի դատասպարտեալները. նրանց ամէնի վրա կար քաթանի շապիք մեծ խաչով դեղին կտակից կուրծքի վրա. նրանց դլուխները բաց էին և ոտները բոբիկ:

Իս տարաբաղդներին յաջողուել էր մահու պատիժից աղատուիլ. բայց, այնու ամենայնիւ, նրանց դէմքերը չափազանց տխուր էին: Նրանք զգում էին, թէ Ինկվիզիցիայի վճիռը կըսցի նրանց անարդանաց և մշտնջենական հրաժարման տակ:

Միանց ետեից գնում էին արքորանաց, թիոյ մշակութեան, ծեծի և բանտարկութեան դատասպարտեալները:

Հուտով արանցից յետոյ դուրս եկան այնպիսի դատասպարտեալները, որոնց Ինկվիզիցիան դատասպարտել էր ինքեւ, այն պայմանաւ, որ յետոյ նրանց մարմինը այրուի. արանց ամէնի գլխին կար կոպոց (թագ) մին կանգուն բարձրութեամբ, և նրանց շապիքի վրա նկարած էին սատանէք և բոցեր վառուած գլխիվայր:

Սերջապէս դուրս եկան նրանք, որոնց յիշատակեալ դատարանի վճռով պէտք էր այրել կենդանւոյն: Միանց շապիքներէ վրա նմանապէս նկարուած էին սատանէք և բոցեր, բայց վերջնները վառուում էին դէպի վեր. նրանք էլ նմանապէս ծածկած ունէին կորացաներ:

Դատասպարտեալներից ամէն մինը բռնած ունէին ձեռերին դե-

դին մեղրամամ, և սլառեղու դատաւարտեալների ամէն մինի հետ
 գնում էին երկու սբիրներ և մին հողեորական . Իս բոլոր նահա-
 տակները էին լղարած , գեղին և տկար . Արանցից մին քանիսը գը-
 նալ էլ չէին կարող , նրանց բռնած էին , կամ աւելի լաւ ասել ,
 քաշում էին սբիրները և հողեորականը :

Արանցից վերջինն էր տարաբաղէ Մ. ըգօղօ կոմսը , նրան էլ
 նմանապէս քաշում էին սբիրները :

Չորչարանքով կորատած , հողւոյ վշտերով տանջած , բան-
 տարկութեամբ մաշուած՝ նա չէր կարողանում գնալ իրա մինչև ոս-
 կորները դաղած ոտներով . նրա հիւանդագին կապտացած երեսի վրա
 արդէն երևում էր մահուան ախար . նրա աչքերը արդէն անշարժ
 էին :

Աւելիից նախկին կառավարիչ — արդարադատ , հեղ , քա-
 ղարոււր հասարակաց սիրոյ արժանաւոր մարդուն տեսնելիս — խառ-
 նիճադանձից շատերը խորը սրտից շարժեցան և արտասուէք թա-
 վեցին . բայց արտասուէքից ջոկուրիչ բանով իրանց կարեկցութիւնը
 յայտնելու չէին համարձակում , ոմանք աշխատում էին արտա-
 սուէքներն էլ թաքցնելու . Արանք , իբրու թէ աղօթք անելով ,
 քաշ էին տալի գլուխները իրենց կցած ձեռերի վրա :

Շէնց սյրելու դատաւարտեալները բանտից դուրս եկան , նը-
 բանց մօտկացան մին քանի մարդիք երկար տէր սղորմէի ձեռերին :

Արանք էին մեղ ծանօթ Վարդուհնոսները , որոնք հասել
 էին ամէնից առաջ անցնիլ :

Արանք , իբրու թէ առանց ամենայն դիտաւորութեան , իբրու
 թէ ջերմեռանդ աղօթք անելով , գնում էին դատաւարտեալների
 հետ , և քանի հեռու էր գնում հանդէսը , նրանց աւելի մօտե-
 նում էին Վարդուհնոսները , կամաց կամաց ամբսխը ձղելով :

Ա երջապէս լուս ընկան Բնկիլիզիցիայի վայրենի Գանատիզմի
 վերջին զոհերը , որոնք չէին վախենում տանջանքից և փայտա-
 կոյտից :

Իստոնք էին արիւնարբու դատարանի բանտերոււր վիչացած
 նահատակների ոսկորները , էն դատարանի , որի իշխանութիւնը այն-
 քան ծանրացել էր Խապանիոյ վրա . ոսկորները բերում էին արկեղ-
 ներով , և նրանց հետ միասին կուպիտ խաւարարտից (մուխաւայ)
 շինած նրանց պատկերները , որոնց էին ոսկորները . Ալ էս ոսկոր-
 ները և պատկերները վճաւած էին սյրել հրապարակի մէջ :

Հանդէսի բոլոր գնալու ժամանակը հասարակութեան մէջ տիրում էր խորին լռութիւն: Հաղարարու աչքեր կարեկցու թեւակք և տխրութեամբ մահի դատաւարամտ ասորադպրների քամակից մտիկ էին տալի, հաղարար սրտեր իբրև հիւանդագին տրիում էին էս տանջանքից կտրտած, կիտակենդան մարդիքը տեսնելիս, բայց ոչ միտեղ ոչ բարձր շնչառութիւն, ոչ համարձակ աղաղակ...

Մէկնից վերջին դուրս եկան սիրուն ձիերի վրա Սեւիկիայ Ինկ վեղիցիայի անդամները,

Մբուէսը դուրս եկաւ ամէնից յետոյ Խօզէի և իրա թիկնապահներէ հետ:

Հէնց որ դուրս եկաւ նա հասարակութեան առջև, նրան մօտեցան Սանօֆինան և Կուլիւրինան. ոչ ով նրանց վրա չըդարձուց ուշք, և նրանք գնացին Մբուէսի ետեից այնպէս ձեանալով իբրու թէ ջերմեռանդ աղօթք են անում լռութեամբ:

Իս ժամանակումբ մեծ Ինկիվիլիթօրի առաջից և ետեից դընացող ձիաւորներին մօտեցան ուրիշ Վարդուհաններ:

Յանկարծ լուեցաւ երկար, բարձր շան հաչիւն:

Իս հաչիւնն էր Վաւապօնների խօսք կտալած նշանը, որ նըշանակում էր, թէ նրանք արդէն գանաւում են նրանց համար նըշանակած տեղերումը:

Հաչիւնը կամաց կամաց լռեց և Սանդամիինտօն, որ գնում էր իրա ասորադպրեալների ետեից, և որին նրանք էլ աչքից չէին վախցնում, համբուրեց իրա գէշ ողբերան ջերմեռանդ երեսը խաչակրներով:

Հէնց որ տուեց նա էս նմանապէս առաջուց խօսած նշանը, երկու քաջ դուապօններ, որանք գնում էին Մբոգօ կոմսի ետեից, խլեցին նրան սրկրների ձեռից, զրկեցին և մտան բազմութեան մէջ:

Ետդուրդը յետ յետ քաշուեցան, իբրու թէ կամենալով դորձակից լինել նրանց դիտաւորութեանը, և սրկրները յետոյ ՚ի զուր աշխատում էին անցնիլ ջիւլտանների միջից, որանք արդէն սրտեղ էին նրանց չորս կողմը:

Վաւապօնները իրանց բեռնով թաք կացան Սեւիկիայ ծուռումուռ վտարայններումը:

Մյնու ամենայնիւ հանդէսը չըհանգնեցաւ, նախ՝ կնդուր որ ոչ առաջապահները և ոչ մեծ Ինկիվիլիթօրը, որ Մբոգօ կոմսի տեղից շատ հեռու էր, չըտեսան սրտապահները, և երկրորդ՝ կնդուր,

որ ժողովուրդը աւելի աւելի վրա պառկելով նրա մէջ մանուկից ներին, խօսք կապածի պէս, վրա թափեցան սաստիկ առաջ քշելով վերջի ձիաւորներին :

Յափշտակութիւնից մին քանի ըստէ յետոյ, Վանօֆինի ձտից կը լսուեցան շան հաշիւներ :

Հէնց որ էն հաշիւնը դադարեցաւ, Վանօֆինան թռաւ քամակից մեծ Խնկվիզիթօրի ձիու վրա, խփեց նրա վզին դաշնակով և խկոյն վէր թռաւ ձիից և թարկացաւ բաղմուժեան մէջ, որունք նրա առջեւն էլ յետ քաշուելով ճամբայ բաց արին :

Իսկ ամէնը դործուեցաւ այնպէս շուտ, որ նաև մերձաւոր թիկնապահները չընարացին տեսնել, թէ ո՛վ յանուանէ վստահացաւ այսպիսի յանդուգն մեծագործութեան :

Իսոյց հէնց որ էս բանը դործուեցաւ, հէնց որ Վանօֆինան կարաց սլքուիլ ժողովրդեան մէջ, իջուլիւրինան, որ մինչև էն ժամանակը, ինչպէս անպատճառ չէ մնացած կարգացողը, դանոււմ էր իրա սիրեկանի մտ, պիտա բռնեց Խնկվիզիցիայի սրիւնքի մինի ձեռից և աղաղակեց, չըթողնելով իրա ձեռոււմը սաստիկ հափառած սրիւրի ձեռք :

— Մէն ահա մարդասպանը . . . տեսէք, այ, ո՛վ էր կամենում մեռցնել նորին սրբազնութեանը :

Թիկնապահները և Խնկվիզիթօրները, լսելով սիրենայի աղաղակը, շուտով շրջապատեցին Մ. ըրբուէսին, որ Վանօֆինի խրփելից ժառ էլ չ'եկաւ :

— Չեր սրբազնութեան կեանքը վտանգի մէջ էր, ձեր սրբազնութեան թանկագին օրին չարադործների փորձութիւն եկաւ . . . ձեր սրբազնութեանը մեռցնելու յանդգնեցաւ մին անդգամ . . .

— Ի՞նչ եղանակաւ . . . ո՛վ էր նա . . . ասացին Խնկվիզիթօրները :

— Փորձութիւնը կար, պատասխանեց Մ. ըրբուէսը ուրախ գէմքով, բայց ինձ աղատեց Վ. մենակսրողը . . . Մէն էս յանցաւոր փորձութեան միակ պատուը, յաւելցրուց նա, ցոյց տալով փոքր կորած իրա ծիլանի վերարկուի վրս, որ յերաւի միայնակ պրտուղն էր էն սաստիկ հարուածի, որ անպատճառ կը մեռցնէր ուրիշին մարդու որ կպած լինէր :

— Հրաշք . . . հրաշք . . . աղաղակեցին յանկարծ մին քանի հողեորականք :

Մտտիապաշտ բազմութիւնը չ'երկբայեցաւ էս օղաղակի ճըշմարտութեան վրա . նա չ'էր իմանում, թէ Արքուէս շարերի տակից հագած ունէր պինտ դրահ:

Իս գործը կատարուելու ժամանակուսը սրիւնները բռնեցին իրանց էն ընկերին, որին Աուլեւրինան մեղապարտեց մեծ Անկիլիզիթօրին սպանելու դիտաւորութեան մէջ:

Իսկ ինքը, հէնց հնախա, ինչպէս Մանօֆինան, Թաքկացաւ բազմութեան մէջ:

Արքուէսը և իրա բոլորքի ձիաւորները, մին ըսպէ կանգնելով Մանօֆինի յանդուգն յարձակումից յետոյ, ուզում էին նորէն առաջ գնալ . իսկոյն մեծ Անկիլիզիթօրին յայանեցին Արգօզ կոմսի յաւիշտակելը:

Արքուէսը չարացած յօնքերը տօթեց, մին ըսպէ լռեց և ընդ միջելով ասաց էս համբաւը բերող սրիւրին՝

— Ա՛ֆաօ—դա—ֆէ հանդէսից յետոյ սաստիկ հետադատութիւն արէք . յանցաւորը անպատճառ պէտք է գտնուի: Իսկ հիմի, յաւելցրուց նա, դառնալով դէպի Անկիլիզիթօրները, յառաջ գնանք . մենք չ'ենք կարող ստիպել նորին մեծութիւնը մեզ սպասելու:

Իւ հանդէսը կրկին շարժեցաւ դէպի մեծ հրապարակը:

Իս ժամանակուսը, Անկիլիզիցիայի պալատից դուրս եկող դօմինիկեաններից մինքը ծածուկ յետ մնաց հանդէսից, Թաքկացաւ բազմութեան մէջ, և վազելով բազմութեան միջից շտապով գնաց էնտեղ, ուր էր Այուանայի տնակը, կանդնեցաւ, դուռը բաց արաւ իրա ձեռին բռնած բանալիքով, մտաւ Այօղէի սնուցչի առանձին բնակարանը և դուռը ներսից փակեց:

Սա էր Այօլօրէսը, ծպտեալ դօմինիկեանի շորով:

Իւօզէն կատարեց իրա խօստուսը:

VI

ԼՖՏՕ—ԴԼ—ՖԼ:

Մեծ հրապարակումը, ուր պէտք էր կատարուէր աֆսո—դափէ, էս զարհուրելի հանդէսի համար ամէն բան պատրաստած էր, պակաս էր միայն զոհը:

Թագաւորի և պալատականների կացած տանը աջ ու ձախ կողմերումը շինած էին բարձր թախտեր աստիճաններով ամիսի թէ աւրոնի ձևով. նրանցից մինը, որ տանը աջ կողմումն էր, նշանակած էր մեծ Խնկվիզիթօրի, նրա մերձաւորների և գլխաւոր խորհրդարանի անդամաց համար: Միւսը — պատժուելու դատնապարտեւոց համար: Ընդհանրապէս պատուանդանի վրա կանգնեցրած էր պատարագի սեղան և խաչ պատած սև շղարշով:

Ահրոյիշեալ երկու տախտերի մէջտեղումը կար ուրիշ քիչ փոքր երրորդ տախտ: Նրանց վրա կանգնեցրած էին երկու վանդակներ, որանց մէջ, Խնկվիզիցիայի կանանների զօրութեամբ, պէտք էր փակել դատապարտեալներին նրանց վճիռը կարգալու ժամանակին: Իսկ վանդակների մէջտեղում կանգնեցրած էր մեծ վայտեայ խաչ, իսկ նրանց երկու կողմերումը կային ամբիոններ:

Էւուումը, հրապարակի աների երկայնու թեամբ սարքած էին պաշտօնականներ տէրութեան աստիճանաւորների և ուրիշ տէրութեանց գեապանների համար. նրանց քամակին էին տեղեր հասարակ ժողովուրդի համար:

Ահրջապէս, հրապարակի հէնց մէջտեղումը, բարձրանում էր լայն քարեայ սալայատակ, և նրա ամէն մին անկիւնումը կային մին մին մեծ ալեբաստր քարից սիւներ. նրա վրա երևում էին տասն և հինգ փայտակոյտներ կուռքով և ուրիշ խղային հիւթերով օժած:

փայտերով և յարգով : Իս շորս սիւների ամէն մինի կողքումը կա-
յին էլի փայտակոյտներ հեշտ հրուելու փայտից :

Իս տախտի անունն էր Իշտաթօտ (Քուէմադերօ) :

Մեր անցած գլխումը յիշատակած հանդէսը դեռ կէս ճանա-
պարհումն էր, իսկ հանդէսի ուղեկից բազմութիւնը արդէն հրա-
պարակումն էր : Արդօղօ կոմսին յափշտակելից և Վանօֆինի ան-
յաջող փորձից յետոյ, հանդէսը նրանց համար հետաքրքրական
բան չընկերկայացրուց և նրանք առաջ անցկացան :

Կարլ Ա, նրա պալատականքը, տէրութեան աստիճանաւոր-
ները, օտար երկրի դեսպանները նմանապէս արդէն բռնած ունէին
իրանց համար նշանակած տեղերը : Թագաւորի հանդերձը շքեղ
էր, այլ ոչ հազուադէպ : Նա ոչինչ բանով չէր ջնկոււմ իրա
պալատականներէց : Բայց նրան դժար չէր ճանաչել իրա մըրի
դոյնից, որ էր սակաւ ինչ շէկ, ինչպէս որ էր միւրօրը Քօստըիլէ
մարիտանեան Պրէնադի մերձին տիրապետողի, որ տիրութեամբ
բաժանուել էր իրա խանդակաթ սիրած քաղաքից :

Կարլ Աից և պալատական աստիճանաւորներէից ջոկ պաշտօնաւ-
բումը կային փառաւոր հազուած շատ տիկիներ :

Եւամանակը երկարեցաւ, և Թագաւորը, Թէ և շատ յարգում
էր Ինկվիզիցիային, արդէն բարկացած ծնրերը աօթեց : Նրա ան-
համբերութեան, նրա անհաւատալի փութաճանութեան համար
անտանելի էր ամենայն դանդաղութիւն :

Արջուպէս հանդէսի առաջնութեանը երեւցան հրապարա-
կի մէջ, Կարլ Աի դէմքը բացուեցաւ :

Արբ բոլոր հանդէսը մտաւ հրապարակը, մեծ Ինկվիզիթօրը,
նրա մերձաւորները և ծայրագոյն խորհրդարանի անդամները, տախ-
տի վրա Թագաւորական պաշտօնաւորի աջ կողմումը իրանց տեղերը
բռնեցին, իսկ դատաւարտեալներին, որոնց ուղեկից սրիւնները
և հողեորականները առաջ անցկացրին քարէ պատուանդանի մօ-
տից, և յետոյ յիշեալ պաշտօնաւորի տակից, կանդնեցրին նրա ձախ
կողմի սալայատակի վրա :

Մեծ գրօշակիր հերցօղ Մեդինա — Սելին կանգնեցաւ Թա-
գաւորի պաշտօնաւորի վրա, ուր արդէն նստած էր տիկնանց հետ
նրա դուստր Վօնետայ Իզաբելլա : Իսեղճ աղջկայ երեօից երեւում էր
խորին տիրութիւն :

Իս միջոցումը Ժողովուրդն էլ տեղաւորեցաւ մին մասը նրա հա-

Տար շինած քարայտափակների վրա, միւս մասը նրանց մօտերումը:

Կամայ կամայ հրապարակի մէջ տիրեց խորին լռութիւն:

Իսկ լռութեանն էին սպասում: Հէնց խսկոյն նրանից յետոյ սկսաւ պատարագ. էս խորհուրդը կատարեց դամբնակեաններից մինը, ժողովուրդը, մտանալով մին ըսպէ իրա գաղանային հետաքրքրութիւնը, լսում էր նրան իրա սովորական ջերմեռանդութեամբը. հրապարակի մէջ պանուած հաղարաւոր հոգեւորականները աղօթում էին ծունկ չոքած:

Պատարագի կէսին, վերոյիշեալ կողքերումը դրած ամպիոններից մինի վրա կանգնեց մին դամբնակեան, և միւսի վրա՝ Կնկվեղիցիայի դատավճախի հարդացողը:

Պատարագի կատարումը մնաց և ամէնքը վերկացան:

Խսկոյն ամբիոնի վրա կանգնած դամբնակեանը սկսաւ քարոզ:

Քարոզը վերջանալից յետոյ, որ տեւեց քսան ըսպէ, պատարագը աւարտեցին և յետոյ սկսան դատավճիռները կարդալ:

Դատավճիռները լսելու համար, փայտեայ վանդակների մէջ առաջ վազեցին կարմելիտեանների մայրապետ Ֆրանցիսկա Լերմային և տարաբաղդ Վերրեզուելոյին, որին հարցրել էին Ֆրանցիսկայի հետ:

Վերրեզուելոն մին ըսպէ էլ չըկողորուց տրիութիւնը:

Հանգիստ, առանց դեղնելու, լսեց իրա մահուան դատավճիռը և անվրդով դարձաւ իրա առաջուայ տեղը:

Իսպէս չէր Ֆրանցիսկան: Մահուան պատիժի չարչարանքների մտածմունքը սասանեցրուց նրան: Իսկ երբ կարդացողը արտասանեց՝ այրուելու է ինքսանայն, խեղճ կինը զարհուրելով աղաղակեց՝

— Ս'է, չ'է, կենդանւոյն չ'է, ես ամէն բանը վիզս եմ առնում . . . ես կրող ջամ մեղքերիս վրա . . . չ'եմ ուզում մեռնիլ անտուրք խղճիւ:

— Գոհութիւն ամենակարողին, ասաց մեծ Կնկվեղիթօրը, ձեռքերը իրա սրտի վրա ծալելով, ճշմարտութեան լոյսը լուսաւորեց այս մեղօք խաւարեալ հոգին:

Երա, կարծես թէ, մտքումն էլ չ'եկաւ, թէ ինքն էր Ֆրանցիսկայի կորստեան պատճառը . . .

Վանդակների մէջ դրին ուրիշ երկու դատապարտեալներ: Արանցից մինն էր Չահիլ, սիրուն և բարեկիլթ երիտասարդ: Նա

Իստալիայի շատ երևելի ազգատոհմաց էր առաջ եկած և պատեհ
ուսնեցաւ Վարլ Նշին վեհմ ծառայութիւններ ցոյց տալու . բայց, մտիկ
չըտալով դրան, նա էն զոհերի միջումն էր, որոնց Ինկվիզիցիան
դատաւարտել էր զարհուրելի պատիժի — այրուելու :

Նրա անունն էր դոն Վարլոս դէ Յեզու Ննցիկենալով Թագա-
ւորական պաշտօնաւրի գէմուդէմ, նա աչքը գցեց գէպի Վարլ Նշ-
նրա հայեցումքը ցոյց էր տալի յանդիմանութիւն և մին տեսակ
կարեկցութիւն :

Միւս վանդակի մէջ վախած էր Իստանցիակ Քոխաս դօմի-
նիկեանը : Նա իրա կողքի հոգեբրահանի խրատներին ամենեկին
պատասխան չէր տալի, և նոյնպէս լռութեամբ շեց իրա դատաւճիռը :

Դոն Վարլոսին և Քոխասին իրանց առաջուայ տեղը դարձ-
նելից յետոյ, վանդակի մէջտեղումը կանգնեցրած միայակայ խաչի
մօտ բերին տասը այրելու դատաւարտեալ « հրեութիւն անօղ
հերետիկոսներ », Նրանցից ամէն մինը ձեռք դրեց խաչի վրա
և դահիճները ամէն մինի ձեռք գամեցին խաչի վրա մեծ բեւ-
ռով : Օգարհուրելի էր շարչարուողներին անքոցը և վայնասուներ, բայց
նրանք չը շարժեցին, չը շիտթեցին շարչարողներին :

Իսս վիճակի մէջ « հրեութիւն անօղները », շեցին իրանց
դատաւճիռները և հնդէս մնացին մինչև մահու պատիժի վախճանը :

Յետոյ կարդացուեցան էլի նմանապէս այրելու դատա-
ւարտած մին քանի տարաբաղձների դատաւճիռները . յետոյ
արտորանաց, ծեծելու, և բոլոր կենացը մէջ բանտարդելութեան
դատաւարտածների դատաւճիռները : Վերջինների կարգումն էր
Ֆրանկօ, որ միայն հնդրով էր մեղաւոր, որ չըկարաց համբերել իրա
կնոջ պոռնկանալուն :

Իսս միջոցումը Վարլ Նշի տխուր գէմքի վրա երևում էր խո-
րին մտածմունք : Նա դեռ առաջին անգամն էր, որ ներկայ գրա-
նուեցաւ ափսօ—դա—ֆէ զարհուրելի հանդէսների նախատօնակ-
ներին և էս հանդէսները մերկացրին նրա առջևը Ինկվիզիցիայի չա-
րագործութեանց խռովարար հոգին — էն շարագործութեանց, որ
հարան ճարտարութեամբ Թաքցել էին նրանից : Վարլը Թախծու-
թեամբ մտածեց իրա մէջ, Թէ նրա զօրութիւնը, որքան կ'ուզէ
մեծ լինի, անզօր էր Ինկվիզիցիայի վրա . Թէ հասարակութեան
աչքումը էս բողոքին նա երկրորդ կարգի տեղ էր բռնած, հնգու-
որ առաջինը Նըբուհսինն էր :

Եւ յիրաւի, մեծ Կնկիկիկիթորը էն ժամանակը լիապէս իաւ
ռաւորութեան ծայրն էր հասել : Միմիայն Մարգոց կամսի
յաւիշտակուելու միտքը աղմկում էր նրա գազանական սիրտը :

Նրա փոխարէն, նա մտածում էր չարչարանքներ Վօլօրէպի
համար, որի վրա հիմի հաւաքուել էր բոլոր նրա ցասումը :

Մարտէսը չքակակի, թէ Կստէմանի նշանածն էլ իրա իշխաւ
նութեան տակը չ'էր, և թէ խեղճ աղջկայ ազատութեան պատճառը
իւր սիրելին էր, այսինքն Կոզէն, որ էս ժամանակուի կանգնած
էր նրա մօտ ախուր և լուռ : Օտարհուրելի սղբերգութեան վերջը
և գլխաւոր անցքը, որի մէջ ինքն էլ գործող անձն էր, հիմի
մօտակոցաւ, և նրա գէմքի վրա երևում էր մին եղերական, մին
ներշնչական բան :

Միայն, դեռ նա աշխատում էր, որքան կարելի էր, թարցնել
իրա զգացմանքը : Կն ժամանակը նա երեսանց նայնչալի մտադրու
թեամբ, ինչպէս ուրիշներն էլ, մտիկ էր տալի ամէն բանի, ինչ
որ գործւում էր մեծ հրատարակումը :

Մ. յժմ գտնանք դէպի էս աւուր խկական անցքը :

Վատամիճիւնները կարգալից յետոյ, այրելու դատապարտեալ
ներին բերին մայրտակոյաների մօտ :

Կնչ ժամանակ նրանք հասան փայտակոյտներին, Կարլ Ե հե
ռացաւ իրա առանձնարանը :

Կստեղ, գահիճներից մինի մէջ, նրա առջևը ծունկի վրա
քնկաւ հերցոզ Վօնգէլսարի աղջկիք, դեղնած, շիտթուած և ար
տասու աթոր :

— Ի՞նչ ևս ուզում, որդեակ իմ, զարմանալով հարցրուց նրան
Կարլը :

— Գթացէք, թագաւոր . . . Կթացէք իմ նշանածին . . .

Նրան բռնեցին . . . նա դցած է բանտը Կնկիկիկիկիայի հրամա
նաւ, պատասխանեց Վօնիա Կղարելլա :

— Որդեակ իմ, ասաց Կարլը, խորք սրտից շարժեալ ջահի
աղջկայ անկեղծ աստիկ թախմութիւնից, որդեակ իմ, ևս չ'եմ
կարող քեզ օգնել : Կնկիկիկիկիան ինձ ստորագրեալ չ'է . . . Մեկը
լուր, խնդրէ քա պատից, հերցոզ Վեդինայ — Սեւից . նա կարող է
բարեխօսել քեզ համար, ինչ որ ուզում ես :

— Թագաւոր, պատասխանեց հերցոզ Վեդինայ — Սեւի, որ
Թագաւորի հետ էր էս բոպէին . նա, որի հետ նշանած էր սա,

իրա գլուխը անուպատուեց . . . սուրբ դատարանը ուրիշ տեսակ չէր
կարող վարուիլ . . . Միանգամայն, նա իրա գլուխը ինքը պատ-
ժեց իրա յանցանքի համար. կամեցով աղատուել խայտառակ պա-
տիժից, նա իրա գլուխը ջարդեց բանտի պատին խփելով :

Կարլ Ե զարհուրելից և խղճալից ահամայ աղաղակեց : « Դա-
նիա իզարեւլան անզգայ վեր ընկաւ գետնի վրա :

Նրան դահլիճից դուրս տարան Հերցոզի նշան տալով : Թա-
գաւորը լուծեամբ հեռացաւ ներքին առանձնարանը :

Դս անցքի ժամանակը դատապարտեալները հանած էին Նշա-
ֆոթի վրա :

Երբոր նրանք ամէնքը վեր ելան նրա վրա, ամէնքն էլ չորեցան
ճնկան վրա իրանց համար նշանակած փայտակոյտների առջևը :

Հոգևորականները նորմէկանց սկսան նրանց խրատել, որ ա-
պաշխարեն իրանց վրա բարդեալ յանցանքները . բայց նրանք չա-
պաշխարեցին էդ չիլած յանցանքների վրա :

Սերջապէս սկսան մահուան պատիժները կատարելու : Մա-
ջին զոհերն էին « հրէութիւն անօղները », : Նրանց չորսին փակե-
ցին սիւնի մէջ, որի համար վերը խօսեցանք, և որոնց մէջերը դար-
դակ էին. իսկ միւս վեցին կապեցին փայտակոյտների մէջ ցցած սիւ-
ների վրա :

Դահլիճները կրակ տուին փայտակոյտներին :

Մաջ բարձրացաւ Թանձր, սև ծուխի փաթուժ. յետոյ էստեղ
էնտեղ շողշողային բոցեր. յետոյ նրանք սաստկանում, գալարում
և պատում էին :

Դս բոցը տեսնելիս երկու ջահիլ կրօնաւորուհիք, որոնց, նմա-
նապէս Ինկվիզիտոյի վճռով, պէտք էր կենդանւոյն այրէին դէպի
լուտերականութիւն դառնալու համար, յանկարծ շուռ եկան իրանց
մօտի կանգնող հոգևորականին, և յայտնեցին, թէ նրանք յան-
ցաւորութիւնը վերն են առնում, հրաժարում են լուտերի վար-
դապետութիւնից և կամենում են խոստովանիլ :

Դաւմինիկեանք նրանց կողքին չորած լսեց նրանց խոստովա-
նութիւնը : Դս զղջումը փոխեց կրօնաւորուհիների վիճակը. նրանք
ընկալան, շնորհիւ ապաշխարութեան, իրաւունք մեռնելու, ոչ թէ
փայտակոյտի վրա, այլ դահլիճների թակով :

Խոստովանութիւնը վերջանալից յետոյ դահլիճները տարան
նրանց Ֆրանցիսկա Վերմայի մօտ, որ սպասում էր նոյնօրինակ պա-

տիժի:

Օարհուրեի էր մայրապետին մտիկ տալը: Նա էր լղար, իբրև
երկար ժամանակուայ մաշող հիւանդութիւնից էն բուսիին աղա-
ած սրմին: Նրա մահագոյն դեղնած երեսը նշխուած էր կապտա-
գոյն գիծերով. խոկ նրա, մին ժամանակ չքնաղ ամպագոյն աչքերը,
սրտը առաջ նման էին երկու գերազանց շափիւղաների, այժմ
էին անկենդան և մութ:

Պատիժի կատարումը, որին սպասում էին նա և երկու կրօ-
նաւորութիւնները, սկսուեցաւ վերջիններեց:

Ղահիճները նստեցրին նրանց աթոռի վրա և կապեցին,
և յետոյ միւս զահիճները գցեցին նրանց վեզը թակի օղակ և
ձգեցին:

Չարչարուողների գլուխները քաշ ընկան, բոլոր նրանց անդամ-
ները դողացին, նրանց աչքերը մ' թնայան, նրանց դէմքերը առաջ
ծիրանի գոյն բռնեցին, յետոյ լրժացան և ապա կասկեցան. . .
լսուեցաւ ցածր խորդալ — և ամենայն ինչ վերջացաւ. նրանք չար-
չարանքից սրժան:

Պրանցիակի չարչարանքը մին փոքր երկար քաշեց: Նն բուսիին
երբ զահիճը նրա վեզն անցկացրուց օղակը, կամքի զօրութիւնը
կրկին զարթեցաւ մայրապետի մէջ. նրա աչքերը կրկին պայծառա-
ցան, և նա աղաղակեց, երկարացնելով ձեռերը գէպի էն տախտը,
ուր կանգնած էր Մ. Բրուհար՝

— Մի՛ծեալ լինիս դու, անի՛ծ . . .

Վերջին բառի վերջին վանկը սառեցաւ Պրանցիակի պռօշ-
ներումը, զահիճները այնպէս սաստիկ ձգեցին օղը, որ կեանքը
թողեց նրան յական քթթել:

Նա երեք կանանց մարմինները զահիճները գցեցին փայտա-
կոյտի վրա, որ արդէն վառւում էր:

Նրան մօտիկ կապած էր դեռ չլիւսուած փայտակոյտի մէջ
ցցած սիւնի վրա համարձակ դէ Յէզոն:

Նրա առջևը, միւս նոյն փայտակոյտի վրա, ծնկան վրա չոքած
էր մին դամբնիկեան, խաչելութիւնը ձեռին, և ասում էր նրան՝

— Հաշտուիր, որդեակի իմ, բո խղճմտանքի հետ . . . փրկե
քո հողիդ յաւիտենական կորուստից:

Ղամբնիկեանի խօսքին պատասխան տալու փոխարէն, դէ Յէզոն
չուռ եկաւ գէպի զահիճները և բղաւեց նրանց վրա բարձր ձայնով

— Իստեղ կրակ . . . կրակ . . . վառեցէք փայտակոյտը . . .
Հրամանը կատարուեցաւ . դօմինիկեանը վէր եկաւ փայտակոյտից,
և դէ Յեղօին շրջապատեց Թանձր ծուխը:

Իս ժամանակումը, անվեհեր դէ Յեղոյից մին քանի քայլ հե-
ռու, խեղդեցին դօմինիկեան դէ Քօխասին և էլի ուրիշ երկու հո-
գեւորականների, որոնք կենդանի այրուելու մտածմունքից զարհու-
րելով, զղջացին:

Սերջապէս, փշանալու կարգը հասաւ Ղերբեղուելօին: Նա
արդէն կապած էր զարհուրելի սիւնին, բոցը արդէն պատում էր
նրա անդամների բոլորքը, բայց նրա երեսումը ամենևին չէր
երևում վեշտ, և նրա մօտ կանգնող դօմինիկեանի սովորական յոր-
դարանքների պատասխանն էր միայն հեղնութիւն:

Յանկարծ սբիրներից մէկը, բարկանալով այս անսովոր քա-
ջութեան վրա, իրա նիզակով խորը վերաւորեց Ղերբեղուելօին:
Սեղեցիապի արիւնք աղբիւրի պէս բղձեց, և նա մեռաւ, համբե-
րելով տանջանքներին հսկայական անդորրութեամբ:

Բոցը փայտակոյտներից բարձրանում էր վեր ու վեր. ծուխը
տարածում էր լէն ու լէն Քուէմադերոյի վրա, սեբանդից արդէն վէր
էին եկել դօմինիկեանները, դահիճները և սբիրները: Արքեմէնէս
զարհուրելի տախտի վրայից լուում էին խղճալի անբոցներ, Թափան-
ցիկ աղաղակներ և մահամերձ խռմբոցներ . . . Աւ ահա դուրս ե-
կաւ էն տեղից էրած մարմինների ճենձահօտը, նաւթօտ փեշտերի
հոտի հետ խառը:

Օճկան վրա չորած ժողովուրդը վախից քարացած լուռ
կային:

Կամաց կամաց անբոցները բոլորովին լուռեցան . բոցը, նիւ-
թից սլակասելով, սկսաւ հանդչիլ, և ժողովուրդը սկսաւ կամաց
կամաց ցրուել:

Մեկնայն ինչ կատարեալ էր:

Իրիկունը հասաւ: Հրատարակումը մնացին միայն դօմինի-
կեաններ և սբիրներ: Արքուէսը իրա փառաւոր նստարանի բար-
ձրութեանից աչքերը էն կողմը դարձրուց, և յետոյ երկօր ժամա-
նակ մտիկ տուեց էշաֆոթին, որի վրա մինչև վերջը այրեցան փայ-
տակոյտները:

Սերջապէս նա էլ հեռացաւ իրա ծառայակիցների հետ միասին:

Իարտակ հրատարակի վրա տիրեց դերեզմանական լութիւն:



VII

Ն Ա Ն Ա Տ Ա Վ

Ղուատպօսները, որոնց մեք տեսանք վերի դլխումը, թաք
 կացան Մ. րդ օղօ կամսի հետ Սեւիլիոյ ծոռումուռ փողոցներումը,
 կարային աֆոօ - դա - Ֆէ շիւթի ժամանակը բերել իրանց որսը
 իշուանայի տան դուռը սրիւնների նրանց վրա համեւից առաջ:
 Գանիլը խիոյն բացուեցան և հէնց որ ղուատպօսները մտցրին դօն
 Սանուէլին ներս, կրկին փակուեցան, հէնց կարծես, իրանց իրանց:
 Կրանց բացարար և յիտոյ կրկին փակեց իշուանան: Մէն բանը
 առաջւոյ խմանալով իշողից, նա վաղուց լաստիվանի և Գօ
 լորէսի հետ սպասում էր բնկերութեան անդամներին, և առաջ
 նա տեսաւ հն սղտիկ պատուհանից, ուր քիչ մնաց որ տեսնում էր
 Գօլորէսին մեծ ինկիլիգիթօրը իրա սիրելւոյ ծծմերի դանից անց
 կենալիս:

Ղուատպօսները, Մ. րդ օղօ կամսին սենեակը մտցնելուց յետոյ,
 զգուշութեամբ պառկացրին նրան լայն դիւանի վրա:

Տարաբաղդ կամսի մէջ, ինչպէս երևում էր, կենդանութեան
 նշան էլ չըկար: Կրա մարմնիւր, շատ տեղերումը խորը վերքերով
 լիքը, առած էր, նրա ձեռերը ձգած էին մարմնի երկայնութեամբ,
 աչքերը խիտած, դէմքումը արեան նշան չըկար:

Նաև նրա առաջուոյ սե և խիտ մազերի տեղ, հիմի երևում
 էր միայն փոքրիկ փունջ սիպտակ, և հն էլ միայն ակահնջների մօտ:

Սանից ջսկ նրա դունգները, երևիս զունգի պէս, կահուղ,
 դեղնագոյն էին և խիտ երկար:

Գօլորէսը տեսնելով, թէ ինչ լիճակ են հարցրել իրա հօրը շար
 շարանքները և բանաը, բղաւեց զարհուրելից, և անպատմելի տրև

ըութեամբ ընկաւ ծնկան վրա դիւանի առջևը, ուր դրին Գուա-
սրաները Արդօզո կոմսին:

Յետոյ նա խլեց նրա ստուած ձեռքը, և եռանդով համբուրեց
նրան:

Չնոր ժաժ չ'եկաւ, կոմսի աչքերը բաց չ'ելան:

— Դաստէվան, աղաղակեց խնդճ աղջկէր, Դաստէվան, սա չ'է
ղգում, թէ ես իրա ձեռք բռնել եմ սա չ'է շնչում . . .

Դաստէվանը, որ նմանապէս սաստիկ նեղացած էր կոմսի վե-
ճակովը, երկիւղեա մտեցաւ դօն Մանուէլին և դրեց ձեռք նրա
սրտին. նա դեռ խփում էր, բայց հազիւ հազիւ թէ խնայուում էր,
և երբեմն համարեալ թէ 'ի սպառ ստում էր:

Մահաբեր տխրութեամբ սրտի, աչքերը արտասուէրով մտիկ
էր տալի 'Վօլօրէսը Դաստէվանի իւրաքանչիւր շարժմանը:

— Ի՛նչ, ի՛նչ է, ասաց նա վերջապէս, ինչի՞ յոյս ունենամ
ես . . . ասացէք էլի, Դաստէվան:

— Սիրտը դեռ խփում է, պատասխանեց եթիտասարդը, պէտք
է քաշել տալ կոմսին որպիսի և իցէ հետքերօղ (սեփիլ) հոտ:

— Տուէք նրան քաշել էս արաբիական քաղցրահոտից, ասաց
կոմսանան, տալով 'Վօլօրէսին յախճապակի շուշայ ոսկեայ ամուր
պնդանով:

'Վօլօրէսը շուտով խլեց շուշէն, և դէն գցելով պնդանը,
մտկացրուց նրան կոմսի քնթին:

Արդօզո կոմսը գլուխը շարժեց և աչքը կիսաա բաց արաւ:

'Վօլօրէսը ուրախութիւնից բղաւեց, և բարձրացնելով հօրը
գլուխը, դրեց աւելի յարմար կերպով:

— ()', Դաստէվան, ասաց նա յետոյ յուսոյ ապաւինութեամբ,
սա կենդանանում է:

'Դօն Մանուէլը յիշաւ ի կենդանացաւ, բայց կենդանացաւ մին
րոպէ, ծանր: Ամէնից առաջ նրա մէջ զարթեցաւ լսելու զգա-
ցողութիւնը: Սա լսեց իրա աղջկայ խօսքերը, բայց նրա իգէա-
նեքը դեռ պղտոր էին, և նա էն բառերի միտքը չըհասկացաւ:

Մին փոքր ժամանակ անցնելից յետոյ, նա հազիւ հասկանա-
լու ձէնով ասաց՝

— Կրակ

'Նրան այնպէս էր թւում, թէ նա մեծ փողոցի սարսափելի
տախտի վրա է

— Ղուսար իմ, շարունակեց նա, բաւական երկար լաութիւնից յետոյ, դուստր իմ . . . Ղաստէվան

— Հայրիկ, բղաւեց էն ժամանակը Ղօլօրէսը:

— Կամաց, 'ի սէր Մտուծոյ, կամաց, ասաց նրան Ղաստէվանը. դու կարելի է վախեցնես նրան: Մխրը դեռ նա բոլորովին ուշքի չ'ի եկել. նա դեռ չ'ի ճանաչում մեզ:

— Մենք հիմի ի՞նչ անենք:

— Միջնից լաւը, տանք նրան զօրացնող խմիչք, ասաց Խուանան. ես արդէն պատրաստել եմ գերազանցը: Մհա՛, յաւելցրուց նա յետոյ, առնելով սեղանի վրայից և տալով Ղօլօրէսին արծաթի բաժակ լեքք ալիկանետան գինիով հալուէի հեղուկի հետ խառը:

Ղօլօրէսը էս առողջարար հեղանիւթով թրջեց իրա հօր պըռօշները, յետոյ լքցրուց նրա բերանը նրանից մին քանի կաթիլ:

Ղս մին քանի կաթիլը լաւ ներգործութիւն արան. կոմսի դէմքը, որ մինչև էն ժամանակը մեռելի գոյն էր բռնած, կարմրեցաւ. նրա հայեցուածքը, որ մինչև էն ժամանակը շրջըծում էր առանց նպատակի, յանկարծ մնաց ջահիլ աղջկայ երեսի վրա անպատմելի սիրոյ և տխրութեան արտայայտութեամբ:

Կոմսը ճանաչեց իրա ազջկանը:

Երկար ժամանակ նա էսպէս մտիկ տուեց Ղօլօրէսին, յետոյ ծանր մտիկ տուեց իրա չորս բոլորքը և ասաց բաւական հասկանալի ձէնով՝

— Մըր եմ ես:

— Չեր բարեկամների մօտ, ձեր ճշմարիտ բարեկամների մօտ, պատասխանեց Ղօլօրէսը. դուք պրծաք, հայրիկ, և մենք շուտով կը հեռանանք Խսպանիայից:

— Հա՛, հա՛, հեռացէք էստեղից հեռացէք որքան կարելի է շուտով, ասաց Մրգօզօ կոմսը աւելի աւելի տկարացած ձէնով:

— Մենք կը հեռանանք ձեզ հետ միասին, հայրիկ, ասաց Ղաստէվանը, ընկնելով կոմսի առջևը ծնկան վրա, իրա նշանածի հետ միասին:

Տեսնե՛ ու՛ Նրանց այստեսակ միտք միւսի կողքին, համազուած մին մտքով, մին զգացութեամբ, դօն Մանուէլը ուրախացաւ մեծ ուրախութեամբ: Մտիկ չըտալով իրա թուլութեանը, նա մին փոքր վեր

բաշտեցաւ, բռնեց Վօլորէսի ձեռնից, ծալեց էս ձեռք Ղառեփանի ձեռի հետ և ասաց մտիկ տալով իրա աղջկանը և նրա նշա նաճին՝

— Աղիցի ձեր վրա Մատուածային օրհնութիւն . չըբաժա նուէք ամենեին և փախէք էստեղից . . . փախէք . . .

— Չեղ հետ, հայրիկ, ձեղ հետ, աղաղակեց Վօլորէսը յուսահառութեամբ :

— Հա . . . իմ հողի հետ . . . տարէք նրան ձեղ հետ . ապա թէ ոչ նրանք քամուն հրտան նրան . . . մնաք բարով . . . սիրեցէք մէկգմէկու . . . միշտ . . .

Ղա խօսքերը կտրեցին Մարգոզո կամսի զօրութեան վերջին մը նացորդը . նրա աչքերը խփուեցան, դու խը ծռուեցաւ ևտեղ, մարմնոյն վրա վաղեց մահուան դող : Ղա ուղում էր առել իրա աղջկայ անունը, բայց նրա պաօշները յանկարծ անշարժ մնացին և կեանքը թռաւ նրանից :

Վօլորէսը ամենեին չըհառաչեց, չըթափեց և ոչ մին առաւ սունք : Միայն նրա աչքերի մէջ կար մին տեսակ վայրենի բան, և նրա դողդոջուն պաօշները մեռելի գոյն էին բռնած :

Բաւակն ժամանակ նա աչքը չըհեռացրուց հանդուցեալից . յետոյ յանկարծ շուռ եկաւ դէպի Ղառեփանը և ասաց՝

— Մենք սրանից չենք բաժնուիլ :

— Ոչ մին ժամանակ, պատասխանեց Ղառեփանը :

Վօլորէսը կամաց դիպաւ պաօշներով հանդուցեալի երեսին, և ծածկեց նրա երեսին Խուանայից տուած բարակ ծածկոյ :

Համարեալ էս բանից յետոյ սենեակը մտաւ Խօղէն :

Ղառեփ իւրօղների որպիսութիւնից նա խիստ հատկացաւ, թէ ի՞նչ է պատահել նրա դալից առաջ : Ղա աչքերը սկսան վաղ լատակիլ բարկութեամբ, նրա ձեռքերը դողացին խշճալից :

Տեսնելով նրան, Վօլորէսը լաց իլաւ, և ընկնելով նրա կուրծքի վրա, լուրթեամբ ցոյց տուեց Մարգոզո կամսի մարմինը :

— Ես կատարեցի ամէնը, ինչ որ կարողացայ, ասաց Խօղէն թախծաղին :

— (), հա, պատասխանեց Չահլի աղջիկը : Ղառեփ ձեր կեանքը յետ դրիք մեղ համար. ախր եթէ Ինկվիզիթօյը իմանար . . .

— Կեանքըս, ախրութեամբ ասաց Խօղէն, չըթողնելով Վօլորէսին վերջացնել իրա խօսքը. իմ կեանքը ի՞նչ է, և ինչի՞ կա-

բօղ է պէտքը դալ նա :

Աս բոսկին նրան մօտեցաւ Աստիվանը :

— 'Վօն Վօղէ, ասաց նա, նա, որից մենք զրկուեցանք, ան դարձ արաւ մեզ, որ մենք խաղանիայից դուրս գնանք : Աս բանը անելը մեզ համար հիմի, երբ մեզ հետադատում են, հեշտ չէ միայն եթէ . . .

— Աս կ'օգնեմ ձեզ էդ բանումը, պատասխանեց 'Վօնի նիկեանը :

— 'Նա անդարձ արաւ մեզ նմանապէս, որ մենք տանե՛նք մեզ հետ նրա մեռեալ նշխարները . . .

— Աս կ'օգնեմ ձեզ էդ բանումն էլ . իմ դարսողութիւնս կարօտ է փոքր ժամանակի . երեք օրից դուք կ'երթաք Էստեղից, բայց մինչև էն ժամանակը թաք կացէք ամէնից, սողա թէ ոչ կը կորչէք . վագրը, որ դիպուածով խնայեց ձեզ, հիմի կըլիարուի ձեզ հետ ուրիշ տեսակ :

— Հա, ինչպէս վարուեցաւ նա Յով . . .

Աս խօսքի վրա դօմինիկեանը մտիկ տուեց նրան խորհրդաւոր կերպիւ : 'Նա չէր ուղում, որ 'Վօլօրէսը իմանայ, թէ Յովհանն Արեւանին բռնեցին Քնկվիզիցիայի անօրէնութեամբ :

— Բայց, շարունակեց Աստիվանը, չըվերջացնելով սկսած բանը, Արբուհսը խոմ, յափշտակուեցաւ . . .

— Արբուհսը տղատ է, պատասխանեց Վօղէն : Գարդու նոյնները չըհատարեցին մեր հրամանը : Մեծ Քնկվիզիթօրին յափշտակելու տեղ, նրանք փորձեցին սպանել նրան, բայց չըսպանեցին, էն դուր որ նա շորի տակին ունէր զրահ : Այժմ դուք տեսնում էք, որքան հարկաւոր է ձեզ զգուշութիւն :

— Բայց, ասաց 'Վօլօրէսը, դուք ասացիք երեք աւուր համար, և երեք օրը երբեմն շատ են երկարում . . .

— Աղպէս է, պատասխանեց Վօղէն մին նոր զարմանալի ձևով . երկար, շատ երկար է լինում երբեմն երեք օրը միայն, յաւելցրաւ նա մին բոսկ լռելով, պէտք է հնազանդիլ անհրաժեշտ հարկին, պէտք է սպասել . և ոչ մեր, և ոչ ձեր համբերութիւնը դարդակ չի անցկե՛նալ : 'Վուք կըգտնէք ձեզ համար բարեբաղդութիւն օտար երկրումը : Աս կըտեսնեմ, ինչպէս կըլսի՛ երկնից ցասումը նրան, որ հալածում է ձեզ . . . և էս ցասումը կըլսի՛ նրան ան պատճառ :

Խօղէն կրկին լռեց մին փոքր ժամանակ, և յետոյ յանկարծ
ասաց՝

— Հիմի ինձ ժամանակ է ձեզանից բաժնուելու. ես պէտք
է շտապացնեմ տնօրէնութիւնները: Արբ որ պատրաստ կրկին ինչ որ
հարկաւոր է, ես իմաց կրտամ ձեզ. իսկ դու, իմ բարի խորանայ,
յաւելցրուց նա, դառնալով դէպի իրա ծծմերը, կնայէս դարս
զուժիւն արած, որ դու էլ կարողանաս նրանց հետ շուտով գնալ:

Իսկ ասելով ջահիլ դօմինիկեանը դուրս գնաց:

Մին քանի ժամաց յետոյ, գիշերուայ լաւ ուշ ժամանակը, իսկ
տէվանը, Ղալօրէսը և Խուանան երկու գուապօսների ուղեկցու-
թեամբ գնում էին դէպի Մանդաւիհնացի բնակարանը:

Նրանց քամակից, նրանցից փոքր ինչ հեռու, ուրիշ երկու
գուապօսներ զգուշութեամբ բերում էին ուսերքի վրա մին երկար
փայտեայ տրկղ, մեծ աշխատութեամբ փաթաթած մին սեւ քանի
մէջ և թոկով կապած:

Նրանց ետեւից և Ղալօրէսի առջեւից, որ ժամանակ ժամա-
նակ հոգածութեամբ մտիկ էր տալի նրանց, գնում էին մին քանի
չիվատոսներ. վերջինները, երևում էր թէ, ճանապարհորդութեան
բոլոր ժամանակումը էին պահնորդներ:

Արբ էս բոլոր անձինքը մօտեացան Ղարդունիի մեծաւորի
բնակարանին, գուապօսներից մինը դուռը դիպիկացրուց, Ղար-
դունիի մեծաւորը դիպիկացրը լսելով, դուռը բաց արաւ և եկող-
ները խորհրդաւոր արկղէ հետ միասին ներս մտան Ղարդունիի
դռնօրը:





VIII

ՍԵՐՋԻՆ ՕՐ ԿԵՂ ԾԵՒՈՐՈՒԹԻՆԵՆ :

Եւ իրիկունը Խօզէն , Խատէվանից և Վոլորէսից բաժնուելէց յետոյ , Թախծագինն նստած էր սենեակումը , սեղանի առաջը , որի վրա դրուած էին մին քանի հոգեորական գրեանք :

Նա ուշադրութեամբ տնտղում էր մին քանի Թղթեր , և երևում էր , թէ մին բան էր հաշուում իրա մէջ :

Արանք էին մուրհակներ , որոնք տուել էր նրան մին Հրէայ սեղանաւոր Խօզէի բալոր կայքին հաւասար :

Նրանց տնտղելով , և ինչպէս երևում էր , վերջացնելով իրա հաշիւը , դրեց մուրհակները փոքրիկ կարմիր սեկէ ծրարի մէջ և ասաց՝

— Հիմի էս կարելի է տանել , ուր որ կամենան Նրանց ապրելուն հերկէ :

Յետոյ դրեց նոյն ծրարի մէջ մին նամակ , որ քիչ առաջ գրել էր , ոսկի մատանի , որը հանեց իրա մատից , և փոքրիկ մեղալիօն , որի մէջ կար ոքմինի մազեր . նա կտպեց ծրարը կանանչ ժապուէնով (լենտով) : Աերջապէս նա կնքեց ժապուէնը նոյնպէս կանանչագոյն յիստակ մամով , և Թարցրուց ծրարը իրա վերարկուի աստառի տակ :

Երբ էս ամէնը վերջացրուց , Խօզէն գրեց լատիներէն տոմսակ , այսպէս՝

“ Չեղ հզուց սիտք է դատեն , բայց ձեզ բանտը դցելու

Համար իմացում չ'են տուել բարձրագոյն խորհրդարանին: Իսս սահմանեալ կարգի գանցառութիւնը ձեզ համար պէտք ամ էք. Ինկիլիզիցիան կը հարկադրուի ձեզ ազատելու:

— Իսս, տասց նա թաքցնելով տուտակը իրա վերարկուի թեւքի մէջ, պէտք է հասցնել Յովհան Բելեանին մինչև էգոց:

— Հա, յետոյ աւելցրուց նա բաւական երկար լռելից յետոյ: Իչի մին քանի ժամ տանջողական կեղծաւորութիւն, և ես կը հասնեմ իմ նպատակին, ես գլուխ կը տանեմ իմ վրէժխընդրութեան մեծագործութիւնը Կաներ էր այն, էս զարհուրելի մեծագործութիւնը Խոնարհ ծառայի պէս իմ կեղծաւորութիւնս ծառայում էր Միգալուդիայի աւերող գաղանի անարգ կըքերին բայց էտուր համար նրա անունը հասարակաց ատելութեան օձով փաթթած է այժմ, էտուր համար իմ տկար ձեռերով փորած է նրա համար անդունդ, որի մէջ պիտի ընկնի արիւնսածարաւ հրէշը, որի անունն է Ինկիլիզիցիայ: Ետղովուրդին էս խայտառակ դատարանի երևելի անդամներից մինի դէմ ապրատամբացնելը, նշանակում է ապստամբացնել նրան իրա գէմ. և Իսպանիան վէր կը դցի նրան, երբ ես նշան կը րտամ . . . Իսկ եթէ քաջութիւնը չ'օգնի նրան . . . Թող, ինչ կ'ուզէ լինի. իմ դիտաւորութիւնս ընդունւած է, և կը կատարուի

Իչի լռեց:

— Ով Բատուած իմ, շարունակեց յետոյ Խօղէն, կռթնելով առաջը դրած սեղանի վրա և ձեռերը գլխին դէմ դնելով. Բատուած իմ, որքան չարչարանք երբ կը հասնի հանգստեան ժամը ինձ համար էն ի՞նչ օր էր վրձնուած ապրիլ աւանդ, էն բոցը, էն աղաղակները, էն մահամերձ անքոցները նրանք իմ մտքիցս չ'են հեռանում ամէն տեղ ես տեսնում եմ կապտած, զարհուրելի լղարած դէմքեր ամէն տեղ ես տեսնում եմ նրան, իմ սրտի սիրեկանին նա կանչում է ինձ իրա մօտ նրա անշնչացեալ ձայնը անմըռունչ զօրացնում է ինձ և անդադար ասում է՝ « ինձ մօտ, ինձ մօտ: »

— Գուտով . . . շուտով, յաւելցրուց նա վեր կենալով մին տեսակ վայրենի տրախութեամբ. միանալու ըուպէն մօտ է:

Հէնց էն ըուպէին նրա սենեակի դուռը ոքմին գխդխկացրուց. Խօղէի՝ մինչև էն ժամանակը տխուր և բարկացած դէմքը, յանկարծ, համարեալ թէ դիւղութեամբ, վեր առաւ հանդիստ և հեղ

տեսիլ, և Արքուէսի սիրելին վազեց դուռը բաց անելու:

Մերս մտաւ Արքուէսը: Մա գեղնած էր. նրա շրթունքները գողում էին. նրան արդէն իմաց էին արել, թէ Վոլորէսը վախել է:

— Խօզէ, ասաց նա նստելով և մտիկ տալով իրա սիրելւոյն, էսօր ամէնքը ինձ դաւաճանութիւն են անում:

— Բացի ինձանից, պատասխանեց սիրելին:

— Հա . . . դու, ես գիտեմ, ինձ հաւատարիմ ես . . . :

Միայն դու միշտ ծառայել ես ինձ առանց շահատիրութեան: Միւս ամէնքը կամենում են ինձ հաճոյանալ ոչ թէ ինձ սիրելից, այլ հարստութիւն սիրելից, յուսալով ստանալ իմ հովանաւորութիւնս: Մինը ուղում է Սելիլիոյ կառավարչի տեղը ստանալ, միւսը — Թագ . . . նրանց ջանկութիւնը կատարում եմ, բոյց դրան մտիկ չըտալով, յաւելցրուց նա կատարութեամբ, մտիկ չըտալով դրան, Մանուէլ Արգօղոյին էսօր յաւիշտակեցին, Վոլորէսը բանտից վախաւ:

— Հիմի դուք ի՞նչ էք ուղում անել, ձերդ սրբազնութիւն:

— Ինչ անել . . . Աս թիոյ ծառայութեան կ'ուղարկեմ բոլոր Ինկվիզիցիայի բանտապահներին . . . բոլորին, մէկին էլ չեմ թողնիլ . . . Աս կ'այրեմ փայտակոյտներն իրա բոլոր մատնիչներին — դովնիկեաններին, էն փախստականի հետ միասին, որ հիմի իմ շնորհիւ, կոչում է Սելիլիոյ կառավարիչ:

— Այլ շատ իրաւամբք կ'անէք, ձերդ սրբազնութիւն:

— Ամէն կողմից մատնութիւն է, շարունակեց Արքուէսը. էսօր էնպէս մարդ էլ լուս ընկաւ, որ համարձակեցաւ Սելիլիոյ մեծ Ինկվիզիթօրի կեանքին էլ ձեռք տալ, և էն մարդը Ինկվիզիցիայի սբիւր էր:

— Հա, սառը պատասխանեց Խօզէն:

— Առանց քեզ, իմ բարի Խօզէ, առանց քո հօգացօղ նախադրուշութեանը, ես էսօր մեռած կ'ըլնէի . . . ինձ աղատեց իմ զրահը: Աս հազնում եմ նրան քո խորհրդով ամէն ժամանակ, երբ մին փտանգի կասկած է լինում . . . դու, Խօզէ, իմ կենաց պահապան հրեշտակն ես . . .

— () , ձեր սրբազնութեան կեանքը ինձ համար իմ կեանքից թանկ է, պատասխանեց սիրելին մին տեսակ նորանշան ժպտով: Աս նրա համար միշտ պահապան եմ: Այլ ինչի՞, յաւելցրուց նա մին ըսպէ լռելից յետոյ, ինչի՞ դուք էսքան նեղանում էք

Մեր գոյո կունսի աղջկայ համար . . . Չեղ համար, ձերդ սրբաղ-
 նութիւն, թող մին կին պակաս լինի : Միթէ պէտք է ամուսնայ
 հարուստը, երբ որ անձիւ հարստութիւնից կորչի մին դուք-
 լոն Գրեարիսնելը դժար է և ձեզ պէտք է միտք ա-
 նել առիթ արժանաւոր առարկայի վրա, միտք անել ձեր իշխանու-
 թեան համար : Կա մեծ է, բայց նա կարող է և պէտք է աւելի
 մեծանայ . . . Մեծացրէք ուրեմն ձեր իշխանութիւնը, ձերդ սրբ-
 բաղնութիւն, կնդրով մեծացրէք, ինչ որ նրա հիմքն է — ասար-
 կութեամբ : Իսկ յանցուորներին դանելը հեշտ է . . . Մհա, դժ, էն
 Գրանչիսիւանը, որին էս մտա օրերս բանտը գցեցին . . .

— Հովհաննէս Մելիքանը, աղաղակեց Մ. բբուէսը . օ, ես նրան
 բանտի մէջ կրմաշեմ . նա մինչև վերջին շունչը սչովի չ'ի կարող
 տեսնել, սչովի ինձանից և իրա բանտապահներէից ջուկ :

— Դատաւարտել նրան ծածուկ, որ մինչև մահը մնայ բան-
 տումը լաւ է, պատասխանեց սիրելին : (Երկնակ է հարկաւոր, ձերդ
 սրբաղնութիւն . էդ Գրանչիսիւանը տարածեց կաթօղիկական հաւա-
 տայ հակառակ վարդապետութիւն : Կանչեցէք նրան պատասխան տալ
 հրատարակական տետանի մէջ, և ժողովուրդի աչքի առջևը յայտ-
 նի դատաւարտեցէք մահի պատիժի : Թող ամէնքը տեսնեն, թէ
 նա էլ, որին սղ Մ. կալուղիան ջերմեռանդութեամբ յարգում է,
 ոչինչ է ձեր հզօր կարողութեան դէմ և դուք էստով
 ոչ միայն կը յաղթէք ցոսկոտ մարդկերանց մտքերին, այլ և հաճոյ
 կը լինիք մեր սրբաղնագոյն հօրը — պապին և նորին մեծութեանը —
 թագաւորին, որոնք, ինչպէս ձեզ յայտնի է, լուտերականութեան
 խիստ թշնամի են :

Մ. բբուէսը լսեց իրօղէին աստիճան աստիճան զօրացած մտադ-
 բութիւնով . սիրելին նրա ձեռը քսելու խաւը դտաւ :

— Հա՛, ասաց նա, երբոր սիրելին լսեց . դու ճշմարիտ ես ա-
 սում, իրօղէ : Ես շատ անգամ մտածում եմ էն, ինչ որ պէտք է
 լինի իմ կեանքի նսրատակը : Ես անչափ հնազանդում եմ իմ կրթ-
 քերիս բայց ինձ դժար է կռուիլ նրանց հետ : Իմ հո-
 գիս մարմնոյս առջևը տկար է : Մհա՛ դու, իրօղէ, դու բաղդա-
 ւոր ես . քո զգացողութիւնը հանգիստ է, ինչպէս երեխանցը, կամ
 աւելի լաւ ասել, դու իշխում ես նրանց վրա քո կամքի զօրու-
 թեան շնորհիւ : Եւ մեր ամէնքի մէջ միայն դու կարող ես չը-
 յանդիմանել քո անձը տկարութեան մասին :

— Աւրիշի վրա իշխելու համար պէտք է գիտի, ձեր գործը
բազմութիւն, իշխել իրա անձին: Մեր ամենից մեծ լեզուակներն է
ձեր ետեւի-նը: Չեր կարողութիւնը էն ժամանակ կրկինի անտան մնա
երբ որ դուք կարող կրկինիք հեռացնել ձեզանից որպիսի և իցէ
կերբ, որպիսի և իցէ ցանկութիւն:

— Արհնում եմ, ինչո՞ղէ, դու ճշմարիտ ես ասում, ինձ միայն
զարմանալի է, թէ դու առաջ ուրիշ տեսակ էիր մտածում, առաջ
դու իմ կրքերի դէմ չէիր կանգնում, և շատ անգամ խորհուրդ
էիր տալիս ինձ՝ չը զրկել ինձ հնդուրից, ինչ որ դու հիմի ցանկա-
թիւն ես անուանում:

— Ես էն խորհուրդը տալիս էի ձեզ էն ժամանակ,
երբ գիտէի, թէ ձեր սրբադնութեան բազմանքի կատարելը
չէր կարող մնասել ձեզ: Իսկ եթէ ես սկսեմ գովել հի-
միկուայ ձեր Մարգոզո կոմսի աղջկայ վրա սիրահարուիլը,
յայտնի կրկնասեմ ձեր սրբադնութեանը: Ի՞նչ կատակցու-
թիւնը գովելը կրնանակէ խորհուրդ տալ հետադուրեւ Քոլո-
րէսին, իսկ հիմի նրան հետադուրեւ աւելի կ'ապստամբայնի ժո-
ղովուրդին ձեր դէմ, որոնք առանց էն էլ կատաղած են, որոնք
գեռ էլի սիրում են իրանց առաջուայ կառավարչին: Իստուրհա-
մար, մտացէք առ ժամանակ նրան և նրա հօրը . . . Ես ա-
սում եմ առ ժամանակ, հնդուր որ, յետոյ եթէ կամենաք, դուք
նրանց կրգանէք: Իսկ հիմի, ձերդ սրբադնութիւն, հարկաւոր է
մտածել ձեր իշխանութեան համար, հարկաւոր է տարաւիեցնել
մտքերը . . . արդէն դուք գիտէք ինչով:

— Իշխանութիւն, աղաղակեց ինկվիզիթորը ոգևորեալ. նրա
համար կարելի է, նրա համար պէտք է ամենայն բան զոհել: Եւ
ի՞նչ է կինը, անունը թէ կ'ուզէ Քոլորէս լինի, թէ կ'ուզէ Պաուլայ,
Իսպանիոյ նախարարի աղջիկ, թէ վերջին խիտանի. նրանք ա-
մէնքը — խաղալիկ են, բոպէական դքսանք . . .

— Արջապէս, ձերդ սրբադնութիւն, պատասխանեց Քո-
լէն, որ վեր թռաւ Պաուլայ անունը լսելիս, վերջապէս լսում եմ
ձեզանից էն, ինչ որ ուզում էի: Հա, կանայք մարդկերանց համար
պիտի լինին, ուրիշ բան չէ, բայց միայն խաղալիկ, ծառայ . . .
Աւրեմն, ձերդ սրբադնութիւն էդուց Գրանչիսկեանին կրկանէք
ատեան:

— Ընայառաւ: Ընտրը ես պարտական եմ Հոռնի օգու-

տը պահպանել :

— Միայն ես տեսնում եմ, ձերդ սրբազնութիւն, դուք դադարած էք, ասաց խօզէն, դուք էս ամբողջ օրը հանգիստ չէք ունեցել :

— Հա՛, դու էլ, խօզէ : Ուրեմն մինչև էգուց, պատասխանեց ինկվիզիթօրը վէր կենալով :

— Ձերդ սրբազնութիւն, ասաց սիրելին, կըհրամայէք ինձ երեք օր մնալ իմ վանքումը :

— Դու ուզում ես, իմ բարի խօզէ, առժամանակ առանձնանալ : Բարի միայն, խնդրում եմ քեզանից, վանքումը երեք օրից աւելի չըմնաս : Ախր դու գիտես, որ ես առանց քեզ չեմ կարող ապրել : դու վերադարձիր կիրակի առաւօտը և քարոզից յետոյ, անպատճառ գտնուիր գլխաւոր խորանումը :

— Կըկատարեմ, ձերդ սրբազնութիւն :

— Ուրեմն, մինչև կիրակի, խօզէ :

— Մինչև կիրակի, ձերդ սրբազնութիւն :

Ինկվիզիթօրը դուրս գնաց, խօզէն նրան ճամբու դրեց, և յետոյ դառնալով իրա սենեակը, վէր ընկաւ մեծ աթոռի վրա և աղաղակեց սաստիկ ուրախութեան ձևով :

— (), Աստուած իմ, վերջացան իմ տանջանքները. ես հասայ իմ կենաց մէջ կեղծաւորութեան վերջին օրին :





XI

ՅԱՄԱՆ ԵՒԻՒՆԵՆՆԵՐ

Մեր վերոյգրեալ գլխի մէջ նկարագրած Խօղէի Լ. ընդհանր
հետ ահաւթիւնն անելու միւս օրը, սիրելին առաւօտը շուտով
գուրս գնաց անկց, ուր բնակուում էր:

Բայց նա ոչ թէ վանքը գնաց, ինչպէս առաջի օրը խնդրեց
Խնկիւղիթօրից, այլ Բուհնայ Աւետարայ պանդոկը:

Ինտեղ նա մտաւ Սոխոյի հետ մին սենեակ, գոնեւրը կոխակեց
և մին ժամի չափ խօսեց նրա հետ բջիշտով:

Յետոյ Խօղէն գնաց գէպի էն կողմը, ուր էր Սանդամի-
կնաօթի պալատը, իսկ Սոխոն գէպի գեանամիտրները, ուր մտն-
ում էին Ինկիւղիցեացի զոհերը:

Բանախ գրանը Լ. ընդհանրը տուեց բանտապահին մին թուղթ
Խօղէի ստորագրութեամբ և Խնկիւղիթօրի կնիքով: Թղթի մէջ
հրամայած էր թողնել Սոխոյին Յովհան Լ. իլեանի մօտ,
որ նրանից դուրս գալի ճշմարիտը. — էս բանս շատ անգամ անում էին
ուրիշ գատապարտեալներին էլ:

Հրամանը կատարուեցաւ և Սոխոն յանձնեց Պրանչիսկեա-
նին, Խօղէի տօմսակը, որ կարգացողներին արդէն յայտնի է: Լ. յն
թուղթը կարգաց Յովհան Լ. իլեանը, և իրա կողմից դրեց թուղթ
գլխաւոր խորհրդարանի նախագահին (սրբեղիղենաին) և տուեց Լ. ըն-
դհանրին: յետոյ Սոխոն գուրս գնաց բանակից:

Պրանչիսկեանի գրած միւս բանի տող բանը • հասաւ իրա տեղը:
Լ. յժմ, կարգացօղ, կրկին գնանք մտքով էն զարհուրելի
զահլիճը, ուր լինում էր Սեւիլիոյ Խնկիւղիցեացիան ժողովոյ ատե-
նակադութիւնը:

Իս անդամ, ինչպէս արդէն յայնի է, Արքուհար միտը դը-
րած էր հրատարակաւ հարցութիւնը Յովհան Աւիլեանին:

Իս բանի համբար տարածուեցաւ Աւիլեայ մէջ առաւօտը
կանուխ, և Աւիլեայիք խուռն հաւարուեցան Ինկվիզիցիայի պա-
լատի առջևը, դեռ առնակալութիւնից շատ առաջ: Արանք ան-
համբեր սպասում էին, աղաղակներով օդը լքցնելով: Արքայիս
ժամը հասաւ, դռները բացուեցան: Ժողովուրդը հեղեղի պէս լք-
ցուեցան ժողովոյ տանանը և մին բանի բոպէսմը խլեցին իրարից
բոլոր տեղերը, որոնք նշանակւած էին օտարաց համար: Ելի մեծ
բաղմութիւն, որոնց չըյաջողեցաւ դահլիճը մտնել, կացան դրան
առաջը, սանդուխտի վրա և բուշումը:

Արանից յետոյ շուտով դէմուդէմից դահլիճը մտան Արքուհար
և Յովհան Աւիլեանը:

Առաջինը ամբարտաւանութեամբ նստաւ իրա վառարտը ա-
թուի վրա: Արքայուրդը սրաաչարժ հեղութեամբ նստաւ դատա-
պարտելոյ աթուի վրա:

Արքուհարի դէմը ուրախ էր: Արժապետի դէմը ցոյց էր
տալի հանդարտութիւն մարուր խղճի մտաց:

Մեծ Ինկվիզիթօրը Յովհան Աւիլեանի վրա յաղթօղ հան-
դիսանալու յուսով էնքան բարեբաղդ էր, որ էս բոպէսներին, հա-
մարեա՛ թէ, ամենեին չէր ցաւում Դօլօրէսի համար:

Սա մտացաւ նաև սրահայանել հարցման սահմանեալ կարգը,
և չըհարցնելով դատապարտելոյն անունը և տարին, ասաց նրան
կցկտուր խօսքերով, ահարկութեամբ՝

— Ա՛ր կաց:

Բայց իսկոյն հասկացաւ նա, թէ էդ ձեք համաձայն չէ նրա
ներկայ վիճակին և յաւելցրուց կեղծաւոր հեղութեամբ՝

— Ա՛ր կաց, եղբայր իմ, և պատասխան տուր մեզ:

Յովհան Աւիլեանը կատարեց Արքուհարի հրամանը:

Ժողովուրդի մէջ, թէ և մեծ Ինկվիզիթօրը էնտեղ էր, լե-
տուեցաւ սաստիկ տրտունջ:

— Աղբայր իմ, շարունակեց Արքուհար, երբ կրկին դահլիճի
մէջ տիրեց լուութիւնը: Չեղ, ձեր կոչման համաձայն, արժան
էր ձեզ մօտ լոյս փրնտրողներին բարոզել փրկութիւն: այլ դուք
ձեր համոզմամբ զցում էք նրանց յաւիտենական կորստեան մէջ
. . . , դուք տարածում էք ամենայն տեղ նորոզիչների կորստա-

կան վարդապետութիւնը :

— Այլ թէ նորոգչաց վարդապետութիւնը , այլ ես աշխատում եմ Մատթոյ բանը տարածել , հանդարտ պատասխանեց Գրանչիսկեանը :

— Արանից ջոկ , ասաց մեծ Խնկվիզիթօրը , ձեր սիրելի ընկերներն են — Հրէաներ , Մաւրեր , աղքատներ

— Այդ մարդիքը , ձերդ սրբազնութիւն , հեզութեամբ պատասխանեց Գրանչիսկեանը , էդ մարդիքը տարօրաղդ են . ուրիշները ինձ մօտ կարիք չ'ունին :

Պահլիճի մէջ լսուեցաւ գովութեան քչիչոց :

Մեծ Խնկվիզիթօրը աւսաւ , թէ որպիսի զգացմունք է ոգևորում բազմութեանը , բայց չըկտրեց հարցումը , և ասաց՝

— Պուք վիզդ չ'էք առնում , եղբայր իմ , թէ ջանք էիք անում տարածել էն վարդապետութիւնը , որ եկաւ էս կողմը Վերմանիից : Բայց վեց վկայք հաստատում են , թէ դուք ձեր վարդապետութեան մէջ հերքել էք կրօնական ծէսերի անշուշտ հարկաւորութիւնը :

— Այլ երբէք , ձերդ սրբազնութիւն , պատասխանեց Գովհան Ալիկեանը , ես միայն հաստատում էի , թէ հաւատը առանց գործքի մեռեալ է : Այս ասում էի իմ ունկնդիրներին՝ եղերուք հեզ , մարդասէր և անարատ հոգւով , ինչպէս էր հեզ , մարդասէր և անարատ հոգւով Նա , Որ չարչարուեցաւ . մեզ համար : Այս ասում էի նրանց , ձերդ սրբազնութիւն՝ մեկզմեկու սիրեցէք և կարիք ժամանակը իրարու օգնեցէք : Վճինին ես սորվեցնում էի միւսնայն բանը և շատ անգամ , խիստ շատ անգամ ես լսում էի օրհնութիւն , երբ ուրիշները լսում են անէծք և հառաչանք , որոնք արձակում են վայտակոյտներէ բոցերի միջից :

— Սա հայհոյութիւն է անում , աղաղակեց Արքուէսը , հայհոյութիւն սուրբ դատարանի դէմ :

Գրանչիսկեանը ամենեւին պատասխան չըտուեց , բայց նա գցեց Խնկվիզիթօրի վրա այնպիսի համարձակ հայեցումածք , որ Արքուէսը դեղնեցաւ և աչքերը քաշ արաւ :

Բայց մեծ Խնկվիզիթօրը շուտով հեռացրուց իրա շիտթուիլը և պահանջեց Պրատօկօլը (օրագիրը) , որի վրա սեկրետարներից մինը գրում էր դատապարտելոյն պատասխանները :

Արքուէսը հասկացաւ , թէ անպատճառ Գրանչիսկեանը յաղ-

Թող կըհանդիսանայ և վստահացաւ կարճել հակաճառութիւնը
Նա կարգաց էն Գրոտոկոլը. յետոյ կրկին մտիկ տուեց մեզա-
պարտելու դատաւճախն և սասց, բարկութեամբ ասթելով յօն-
քերը՝

— Ահայքը միտանալ էն ցոյց տուել, խի դատապարտեալը
ոչինչ բանով չըհերքեց մեղապարտութիւնը. նրանք բոլորը
հաստատում են, թէ Յովհանն, որի մականունն է Նշիլեան,
Գրանչիսկեան կարգի քարոզիչը, ոչ միայն հաստատ յարակցու-
թիւն էր անում լուսերականների, հրէաների և մաքերի հետ,
այլ և հրատարակաւ քարոզում էր կաթոլիկական դաւանութեան
հակառակ հոգւով: Հարցմունքները արած են երդումով, և մենք
չենք կարող չըհաւատալ նրանց: Աւտի, եթէ դատապարտեալը
չի հաստատիլ հիմի, տասներկու վիճաների ցուցմամբ, թէ նա ան-
մեղ տեղն է մտանուել, մենք սախպեալ կըլինինք դատապարտել նրան
մեր կանոնի համաձայն:

Հենց սասց նա վերջին խօսքը, ժողովրդեան մէջ սկսուեցաւ
բարձրաձայն արտունջ, և « վկայից աթուի, մտա, ուր մինչև էն
ժամանակը ոչով չըկար, դուրս եկան ամբողջ խումբեր, որանք ցան-
կանում էին վերջել վարժապետի անմեղութիւնը:

Գրանչիսկեանը, դիտելով, թէ նրանք էս կարեկցութեան
համար կեանքից կըզրկուին, ձեռքով նշան տուեց նրանց որ հե-
ռանան. բայց նրա ցանկութիւնը էս անգամ չըկատարուեցաւ և արը-
տունջը աւելի սաստկանում էր:

— Սա անմեղ է, սա անմեղ է, աղաղակեցին մին բանիտը:

— Սա կերակրում էր մեզ, երբ մենք սոված էինք, աղաղակե-
ցին միւսները:

— Հաշտեցնում էր մեզ, երբ մենք մէկզմէկու հետ խռոված
էինք . . . սա մեր բարերարն է . . . սա մեր պաշտպանն է,
աղաղակում էր միւս խումբը:

Վրբուէսը փութացաւ դէպի իրա սովորական սատանութիւնը.
Նա դարձաւ դէպի իրա աջկողմը կանգնած օրկրներին և սասց՝

— Ժողովը կըմնայ ուրիշ անգամի, դատապարտեալին տարէք
բանտը:

Սակայն ժողովուրդը հասկացաւ, թէ էս միայն սատա-
նութիւն էր, թէ վարժապետին ամենեւին չ'են կանչել կրկին հարց-
նելու, և թէ մեծ Վնկվիդիթօրը միտը դրած է իջայնել Յովհա-

նին ծածուկ, բանախ մէջ :

— Դսկ վիաները, առային յանկարծ մին բանի անձինք, լսեցէք վիաներին :

— Սրերներ, աղաղակեց Նորբուհոր, վերկենալով իրա տեղեց, որ դահլիճից դուրս գնայ, ևս ըսպէիս դուրս արէք ևս տեղեց օտարներին :

— Հանգիստ կայէք, բարեկամք իմ, հանգիստ կայէք, ևս իրաւունք կը գտնեմ, առայց Գրանչխակեանը մտիկ տալով շորս կողմը, և նոյնպէս վեր կենալով տեղեցը :

Նրա աչքերը, երևում էր, որ սքովնի էր ման գալի և չէր դանում բազմութեան մէջ :

Գրանչխակեանը արդէն պատրաստուում էր գնալ սրերների ետևից, երբ յանկարծ մեծ դուռը բացուեցաւ կըրնիկի վրա և դահլիճի մէջ մտաւ ծայրագոյն խորհրդարանի նախագահը անդամների հետ միասին :

Դողախւրդը յարգանքով ևտ բաշուեցան նոր եկածների առաջից : Նորբուհոր նրանց անմեղով, դեղնեցաւ :

Ծայրագոյն խորհրդարանի նախագահը ուղղակի մտակացաւ Յովհան Նիկեանին և առայց հրամայական ձևով՝

— Նշատե՛լ ևս մարդին :

Նշատե՛լի կապերը հետ արին Յովհանից :

— Ի՞նչ իրաւունքով, շարունակեց նախագահը, դառնալով դէպի Նորբուհոր, դուք ևս մարդին դցեցիք դատաստանի տակ : Դուք խորհրդարանին իմաց տալն էլ հարկաւոր չը համարեցիք, թէ սա բանան է գցած, դուք դիտէք, որ ևս կարող եմ . . .

— Ի հարկէ, պատասխանեց Նորբուհոր գողգողալով, ևս բանը արած չէր . . . բայց միայն անզգուշութեամբ . . . մեր մտացմամբ . . . և յետոյ . . .

— Իս անգամ, առայց նախագահը, առաջուայ պէս հրամայական ձևով, ևս անգամ ձեզ ներում ենք : Դսկ եթէ միտանգամ էլ պատահի սյուպիսի անզգուշութիւն, յանցաւորը կընկնի սաստիկ պատասխանատուութեան տակ : Նորին մեծութիւնը, Թագաւորը, և ծայրագոյն խորհրդարանը ցանկանում են, որ հերետիկոսներին արժանի հատուցումն լինի, բայց նրանք չեն ցանկանում, որ յանցաւորը պատժուի առանց պահպանելու օրէնքումը սահմանած բոլոր ձևերը : Աւրիշ կերպիւ մեզ անկարելի կըլինի

դատել՝ ձեր դատակնիքները իրաւացի են, թէ ոչ. — Դուք ազատ էք, հայր իմ, յաւելցրուց նա դառնալով դէպի Գրանչիսկեանը:

— Ա՛նձա, մե՛նձա, (կեցցէ՛, կեցցէ՛), աղաղակեց բազմութիւնը:

Եւթմեալ Մարբուէսը հեռացաւ. ծայրագոյն խորհրդարանի նախագահը և անդամները նմանապէս դահլիճից դուրս գնացին: Յովհանն Մելիքանի արդար դուրս գալը հասարակութեան համար ընդհանրական ուրախութիւն պատճառեց: Աւելիկացւոց աչքումը այնպէս երևեցաւ, թէ Ապրիլ Եւթմեալի միտքը գրած է կատարել իրախոսումը:

Իսոյց ծայրագոյն խորհրդարանի ընթացքի ստիպող պատճառը բոլորովին ուրիշ էր: Մեծ Խնկիկիկիթօրը, ինչպէս ձեռ յայտնի է, չը յայտնեց խորհրդարանին, թէ Գրանչիսկեանին դղել է բանտը: Խորհրդարանը էս բանը համարեց իրան անարգանք, նաև նախատինք իրա համար — և նրա անարգեալ ինքնասիրութիւնը ազատեց Յովհաննին:

Իսոյց Աւելիկացիք, ինչպէս մենք ասինք, ուրիշ կերպ էին մըտածում և մեծ յոյս ունէին: Արանց էս յոյսը խարէական էր: Սակայն Գրանչիսկեանի ազատուիլը նրանց ուրախացրուց աւելի, քան թէ ասպագայ հանգստութեան յոյսը:

Արանք հաւաքուեցան Յովհաննի բոլորքը, նրանք լաց էին ըլում, համբուրում էին նրա շորերը. և երբ նա ասաց նրանց, թէ մտադիր է հեռանալ, նրանք դուրս տարան նրան դահլիճից ձեռերի վրա:

Յետոյ ժողովուրդը գնաց Յովհաննի ետևից մինչև նրա բընակարանը և բաժնուեցան իրանց խրատողից նոր արտասուներ թափելով:



Գրք



X

ՀԱՐԱՆՆԻՒՆԻ ԵՒ ԹԼՂ ՈՒՄՆ՝

Ահա գիշերուայ մօտ էր: Գարդունի ընկերութեան ընդարձակ գետնափորներից մինի մէջ, որ փորւած էր Մաւրերի կաթօլեկաց հետ պատերազմի ժամանակը, և պէտք էր դալի էն ժամանակը զօրքի հետ հաղորդութիւն ունենալու ծածուկ ճանապարհի համար, երկու փայտէ աթոռի վրա դրած էր մայր փայտից շինած դագաղ. էս դագաղի մէջ դրած էր Մանուէլ Արդօղօ կոմսի մարմինը:

Հանդուցելոյ երեսը ծածկած էր և ձեռերը կուրծքին խաչած: Գագաղի մօտ հեկեկում էր Գօլօրէսը ծնկան վրա չորած և գլուխը մեռելի վրա ծռած: Արա կողքումն էին Ղաստիվանը, Կուլանան, Յովհանն Ալիլեանը և Կոզէն: Աերջի երկուսը հանդստեան աղօթք էին կարդում: Գագաղեց փոքր ինչ հեռու սիպտակ պատառով ծածկած սեղանի վրա կանգնած էր մեծ խաչելութիւն. երկու կողմումը վառած էին մեղրամոմներ մեծ արծաթեայ աշտանակների մէջ:

Աս աշտանակները Մանդամիենտոյինն էին, որ Թաքրցել էր իրա մօտ Գօլօրէսին, Ղաստիվանին և Կուլանային. դագաղն էլ նա բերեց, ՚ի հարկէ ձրի չէ: Ընդհանրապէս նա էս դիպուածումը արած ծառայութեան փոխարէն Ղաստիվանից առատ վարձ ստացաւ:

Արորինակ էր հանդէսի տեսարանը, որը որ մենք կրնկարագրենք: Տխուր, նսեմ գետնափորը, մեղրամոմերի դեղնած լուսի, աղօտանալը դագաղը, որի մէջ դրած էր չարչարեալ, շահատած

տանջանքով մեռելը, տխրագին լութիւնը Ղառաւանի և Խուանայի, հեկեկանքը Վառլորէսի և երկար ընթերցումը աղօթից, — էս ամէնը կազմում էր մին բոլոր, սաստիկ արիւնքուցիչ երեւակալութեան տեսարան:

Յանկարծ կարգալը կտրեցաւ և դեանաւորը մտան երկու Ղարդունտներ:

Հասկանալով, թէ ամէն բանը վերջացել է, թէ յաւիտեանական բաժանման բազին հասել է, Վառլորէսը կամաց համբուրեց հանդուցելոյ ճակատը. յետոյ վեր կացաւ, շտապով հեռացաւ դագաղից, սրբան կարաց հեռու, և նստաւ կոպիտ փայտե աթուռի վրայ, ծածկեց ձեռերով իրա դէմքը, որ ոչինչ չբեւանէ: Բայց Ղառաւանը և Խուանան, ինչպէս ասում են, աչքերը չբեւանցրին նրանից:

Ղարդունտները զգուշութեամբ վեր առան դագաղը և տարան մին սերիչ աւելի ընդարձակ դեանաւոր:

Ենտեղ սպասում էին նրանց մին քանի Ղուապօսներ և երկու պառաւներ Ղարդունեան ընկերութիւնից:

Էս վերջինների կերպարանքները էին զարհուրելի և զղուելի: Նրանց դէմքը կրկնաբէին մարդու սիրտը իրանց ազեղութեամբ. նրանց խռուեալ սիպտակ մազերը հաղիւ մնում էին ճենճոտ մանտիլի տակին: Նրանց ջղալից, լղար, արեակէզ կռները վեր քաշած էին մինչև արմունկները: Նրանց սե բրդէ շորերը մաշածութիւնից չէին ծածկում նրանց վեղերը և կուրծքերը, իսկ նրանց ոտները բոլորովին բոպիկ էին:

Հէնց որ Ղարդունտները դագաղը դրին դեանի վրա, էն պառաւները մարմինը հնտեղաց հանեցին և դրին բարձր երկայն սեղանի վրա:

Մասնից յետոյ նրանք մերկացրին մարմինը, կտրեցին ծուռ դանակով կուրծքը և փորը, և խիստ ճարպիկութեամբ հանեցին սիրտը և փորոտիքը:

Հանած փորոտիքը Ղարդունտները դրին դագաղի մէջ: Յետոյ խառնելով նրա հեռ մին քանի անուշահոտ համեմունք (պահարեղէն) և ծածկելով նրան ատլասով, Ղարդունտները չոքեցան դագաղի կողքին և մտքով աղօթք էին կարդում: Աղօթքը վերջանալից յետոյ, նրանք իջեցրին դագաղը գերեզմանի մէջ, որ առաջուց պատրաստած էր նոյն դեանաւորի մէջ, ուր կատարեցաւ մեր նը-

կարագրած հանդէսը , և լքցրին նոյն գերեզմանը հողով :

Իս միջոցումը պառաւներկց մինը մեծ ջանքով լուաց մարմինը մին անուշահաս ջրով , իսկ միւսը զմռսեց սիրտը թանկագին անուշահաս գեղերով , որ ծանօթ էին միայն խիտաններին , և դրեց նրան փոքրիկ արծաթէ արկղի մէջ :

Յետոյ պառաւները ցամքեցրին մարմինը և փռեցին նրա տակին բաւական երկար և լին զօլ ամիանթեայ (անկէզ քարի) քաթան : Ամիանթի քաթանի զօլը էր , ՚ի հարկէ , հաղուազիւտ և թանկագին զատ , բայց ինչ դժուար բան էր գարդուհոսների համար գտնել ոչ միայն էն , այլ և աւելի հաղուազիւտ և աւելի թանկագին զատեր :

Իսկոյն սրանից յետոյ , պառաւները չոքեցան և սկսան իրանք իրանց աղօթք անել , սրսկելով երբեմն երբեմն մեռելի վրա մին անուշահաս ջուր :

Ա երջացնելով իրանց աղօթքները , նրանք վեր կացան , և ներանցից մինը տուեց մին ջահիլ գուապօսի արծաթէ արկղը , հրամայելով պահել նրան մինչև ուղելը :

Յետոյ նրանք կարեցին մարմինը ամիանթէ քաթանի մէջ , նայն քաթանից դուրս քաշած թելերով :

Ամէն բանը վերջանալից յետոյ , զգուշութեամբ մտիկ տուին , թէ բոլորովին պինդ կարած է մարմինը , և տեսնելով , թէ ինչպէս պէտքն էր արած են , ստացին գարդուհոսներին :

— Այժմ ամէն բանը կատարեալ է :

Գարդուհոսները դրին կարած մարմինը երկաթի կասկարայի վրա , որ դրած էր նոյն գեանափորումը փորած փոսի վրա , և որի տակին արգէն վաւում էր սաստիկ կրակ :

Կասկարանքը տաքութիւնից կարմրել էր : Բոցը անց էր կենում նրա ծակերկց , և շուտով մարմինից սկսու գուս գալ ճենճահոտ :

Իս ճենճահոտը կամաց կամաց սկսու լինիլ անախորժ , բայց համարեալ թէ , ամենեւին չէր նեղացնում Գարդուհոսներին : Արանք հանդարտ կանգնած էին էն փոսի մօտ , մտիկ տալով ամիանթեայ քաթանին , որ պսպղում էր կրակի մէջ , հալած արծաթի նման :

Ա երջապէս մարմինը բոլորովին էրուեցաւ . Գարդուհոսները վեր առան ամիանթեայ քաթանը կասկարայից և կրակը հանգցրին :

Յետոյ , երբոր քաթանը պլսիուեցաւ , նրանք քանդեցին կարերը ,

Ժողովեցին մարմնից մնացած մոխիրը , Լըցրին սրտիկ հաշիկ պարկի մէջ և հապեցին Թասմաներով :

Թաղումը վերջացաւ :

Ներեցէք Հէմի պատմել ձեզ , Թէ ինչ էր անցկենում էս ժամանակը միւս գեանաւորումը , ուր Թողինք մենք Յովհաննէ Աւելեանին , Խօղէին , Լաստէվանին , Վօլօրէսին և Խոուանային :

Երբ Վարդուհանները տարան էնտեղից մեռելին , Ֆրանչիսկեանը մօտեցաւ Վօլօրէսին (որ , ինչպէս մտացած չէր լինիր , նստած էր երեսը ձեռերով ծածկած) և ձայն տուեց նրա անունը :

Վօլօրէսը գլուխը վերցրուց . նրա դէմքը արտասուներով Թրջած էր :

— Վնասոր իմ , շարունակեց Ֆրանչիսկեանը , դուք պէտք է յաղթէք ձեր տխրութիւնը , դուք դեռ ամէն բանը չէք հատարել , ինչ որ պէտք է անել :

— Ելե ի՞նչ պիտի հատարեմ , հարցրուց Վօլօրէսը , էն րոպէին մտածելով միայն իրա կորուստի համար :

Յովհաննէ Աւելեանը փոխանակ պատասխանելու բռնեց նրա ձեռից , օգնեց նրան վեր կենալ իրա տեղից և բերեց Լաստէվանի մօտ , որ խորը մտած մտքի մէջ կանգնած էր նրանից մին քանի քայլ հեռու :

Յետոյ դնելով նրա ձեռք երիտասարդի ձեռումը , ասաց բարձր ձայնով :

— Լսա է ձեր հօր կամքը :

— Իմ կամքն էլ է , պատասխանեց Վօլօրէսը աղնուական համարձակութեամբ :

Լաստէվանը ուրախութեամբ հուփ տուեց նրա սիրուն ձեռք իրա ձեռի մէջ :

Խօղէն մտիկ էր տալի նրանց լռութեամբ . բայց նրա հայեցուածքն էր վայրենի և նրա դէմքը ցոյց էր տալի մին նորանշան տեսիլ :

— Եղբայր իմ , շարունակեց Ֆրանչիսկեանը , դառնալով դէպի նրան , Վնք կրմիացնէք սրանց :

— Ե՛ս . . . աղաղակեց Խօղէն համարեալ Թէ վախենալով . . .

Մէթէ կարելի է էս բանը ջէ , հայր իմ , նչ Թէ ինձ , այլ ձեզ կրվայելի օրհնել սրանց , յաւելցրուց նա աւելի հանդիստ ձեռով և աչքերը վեր դրելով Ֆրանչիսկեանի փորցող

Հայեցուածքի առջևը :

— Աթէ դուք չ'ունիք յօժարութիւն, պատասխանեց Յովհանն Լուկեանը, ևս կրմխուտրեմ սրանց, Ղանանք, որդեակք իմ, յաւելցրուց նա, դառնալով գէպի նշանածներին :

Յետոյ նա մօտկացրուց նրանց սեղանին, որի վրա, ինչպէս վերը ցոյց տուինք, կանգնած էր խաչելութիւն :

Նշանածները չորեքան, սրահիւան ծէսը սկսաւ :

Երբ որ պսակը վերջացաւ, Խոզէն մօտկացու նոր ամուսիններին և ասաց ներքին աղմուկից հատկեալ ձէնով՝

— Հիմի, բարեկամք իմ, գնացէք, բարեբաղդ լինիք, և մեներին շքածնուիք :

Ինչ բոպէին գեանաւորի մէջ ներս մտաւ մին Ղարդունոս : Նրան զրկել էր Մանգամիննտօն իմանող, թէ կարօղ է նա տեսնել դօն Իստիվանին : Պատասխան տուին, թէ Ղարդունի մեծաւորը կարօղ է ներս գալ :

Ղարդունոսը դուրս գնաց :

Շուտով եկաւ Մանգամիննտօն, իրա սովորութեամբ, ու ուրախ և ինքնահաւան :

Բարեկելով գեանաւորի մէջ լինողների հետ, նա ասաց Իստիվանին՝

— Չեք ողորմածութեան գնալու համար հիմի ամենայն ինչ պատրաստած է : Չեզ սպասում են արդէն երկու լաւ ջորիներ, ձեզ ուղեկից են ընտրեցի իմ ստորադրեալներից երկու խիստ լաւերին : Եւ ասի պարօլ (1), յաւելցրուց նա, տալով Իստիվանին մա-

(1) Ղարդունոսները, և յետոյ նրանց վերջանալից յետոյ, Խապանիոյ երեւելի աւագակները, ունէին, համարեալ թէ, բոլոր քաղաքներումը և ըստ մեծի մասին մեծ ճանապարհների վրայի պանդոկներումը գործակալներ, որոնք վարձով տալիս էին ճամբորդներին պարօլ, որով ազատուում էին ճանապարհի ընդարձակութեան մէջ : 1823 տարումը Մադրիտից Կադիս գնալը անվտանգ էր միայն Պեդրօ Տիւրիսի ֆուրգանով : Բայց հատուր համար նրա ֆուրգանի մէջ նստելու տեղը դիլիժանսի տեղից թանկ էր : Եւ և Պեդրօ Տիւրիսը հարիւրին հինգ շահ էր առնում բոլոր նիւթեղէններից, ինչ որ լինում էր նրանց հետ, որոնք նստած էին նրա էկիպա-

զաղաթի կտոր , որի վրա գրած էր խիստ վատ ձևերով
մին բառ : Եւս պարօղը , դուք ցոյց տուէք , եթէ ճանապարհ
հաւմը մին տեղ հանդիպիք իմ արժանայարգ բնկերակիցնե ընն ,
Գարդուհաններին : Եւս թէ ոչ , ձեր ողորմածութիւնը կարեւ
րէ է հանդիպիք արգելքի և զանազան անակնունելի նշոյթներ :

— Ս'ը կարող ենք մենք հանդիպիլ ձեզ , հայր իմ , հարց
րուց Եսակ վանը Յովհան Աշիլեանին :

— Կադիկաուսը , պատասխանեց Յովհան Աշիլեանը :
Օգուշութեան համար ես կ'երթամ էնտեղ աւրիշ ճանապարհ
հով :

— Իսկ ձեզ հետ , դոն Խօղէ , մենք էլի կրտսանութիւնք ,
հարցրուց Գօլօրէսը թախծազին :

— Ի՞նչ հետ , հա՛ , եթէ Եստուած կամենայ , պատասխա
նեց Խօղէն վշտազին :

Յետոյ նա շուռ եկաւ դէպի իրա ծծմէրը և ասաց նրան՝

— Դու , իմ բարի Խուանայ , դու՛ էլ խամ գնում ես :

— Ե՛ս , ազադակեց պառաւը . հգի՞նչպէս կարելի է . ես գը
նամ , իսկ դուք մնաք էստեղ

— Ես կըհամենեմ ձեզ . . . Կադիկաուսը . . . պատաս
խանեց Խօղէն , շուտով ասելով և երեսանց ջանալով ծածկել
իրա ներքին աղմուկը . ոչ քեզ , ոչ ինձ հնար չ'է մնալ էստեղ :
Մենք էստեղ վտանգի մէջ ենք :

— Ես կ'երթամ միայն էն ժամանակ , երբ կ'երթաք դուք ,
դոն Խօղէ , պատասխանեց պառաւը հաստատ :

— Իայց , իմ բարի Խուանա , մեզ միասին գնալ անկարելի
է . Մեզ կրտսանեն . . . կ'արգելեն : Քեզ աւելի լաւ է գնալ
մեր բարեկամների հետ . . . իսկ ես . . . ես , կրկնում եմ ,
կըհամենեմ ձեզ Կադիկաուսը . . . Սրանից ջոկ ես անպատճառ

Ժու՛մը : Իսկ պարօղները , որոնք յիշատակեցինք վերը , էին ամէնից
յուսապի արձակագիր աւաղակներ պատահելիս : Երբոր լսում էին
աւաղակները , ոչ միայն չ'էին կողոպտում ճանապարհորդներին ,
այլ և քաղաքավարութեամբ գդակները վեր էին առնում , և ասում
էին , որքան կարելի է քաղաքավար ո՛ հրամայեցէք , ողորմած տէր ,
աստուած բարի ճանապարհ տայ , , ,

պիտի վերջացնեմ էստեղ իմ գործերս . . . փողերս ստանամ . . .
. . . Սերեմն դու կ'երթաս, Խուանա, էս գիշեր:

— Այ, ասաց Խուանան կտրական:

— Աս պահանջում եմ, յաւելցրուց Խօզէն բարկութեան ձեով:

« Աս պահանջում եմ », բառը լսելիս պառաւր թախծազին գլուխը քաշ արաւ և յետոյ ասաց հազիւ լսելու ձէնով:

— Աս կ'երթամ:

— (), շատ լաւ է, աղաղակեց Ղօլօրէսը. դօն Խօզէն էլ մեզ հետ կը հեռանայ Խապանիայից:

Խօզէն դեղնած էր մեռելի պէս. նրա սովորական փայլուն հայեցումաձքը էր այժմ մութ և անլօր. նրա ձեռերը դողդողում էին, նա հազիւ ստի էր կանգնած:

Սակայն նա յաղթեց իրա անձին. նրա հոգւոյ զօրութիւնը յաղթական հանդիսացաւ նրա մէջ էս անգամ:

« Աս հուի տուեց Աստէվանի և Ղօլօրէսի ձեռերը, գրկեց Խուանային և ասաց բաւական հառտաա ձէնով:

— Միամիտ կայ, Խուանայ, մենք էլի կը տեսնուինք:

— Աս կասկած չ'ունիմ էդ մասին, պատասխանեց Խուանան. Մենք անպատճառ կը տեսնուինք, դօն Խօզէ:

— Ղօն Աստէվան, ասաց Սանդամիենտօն, համարձակում եմ յայտնել. Այժմ ուշանալը վտանգաւոր է. Ղօն բաւական երկար ճանապարհ ունիք կտրելու մինչև առաջին հանդիսար, և ճանապարհ գնալ կարող էք դուք միայն գիշերով . . .

Խօզէն պահանջեց, որ մին ջորի էլ պատրաստեն, Խուանայի համար:

Արբ նրա հրամանը կատարուեցաւ՝ Աստէվանը, Ղօլօրէսը և Խուանան երեք դարդունոսների առաջնորդութեամբ սկսան գրնալ դէպի Մադիկսի ճանապարհը:

Խօզէն և Ֆրանչիսկեանը մնացին Ղարդունիի ընկերութեան պալատի դռանը:

— Հայր իմ, ասաց Արբուէսի սիրելին, մեր բաժնուելից առաջ օրհնէ ինձ:

— Որդեակ իմ, պատասխանեց Յովհան Աւելեանը, կամաց կամաց աւելցնելով իրա զարմանքը Ղօմիսիկեանի դործքերի և խօս-

քերի վրա : Արդեակ իմ , կոմսուհի դէ Արդաար էսօր էնքան
Թախծեալ չ'էր , որքան դուք . ինչ պատահեցաւ ձեզ :

— Դաւորէսը ունէր իրա պատճառը տրտում լինելու , ես էլ
իմա ունիմ , հայր իմ , պատասխանեց Մարութի սիրելին , հեռա-
նալով ուղղակի պատասխանից :

— Եղեցի՛ ուրեմն ՚ի վր քո ողորմութիւն Չարչարելոյն վասն մեր ,
ասաց Ֆրանչիսկեանը , կատարելով Դավինիկեանի ցանկութիւնը :

Խօսէն հեռացաւ շուտ շուտ քայլերով . նա , համարեալ թէ ,
վախեցում էր դուրս ասել էն , ինչ որ ունէր սրտումը :





XI

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՂՕԹՆՆՈՅԻ ՄԷՋ:

Յովհաննէս Աւերբախից բաժնուելից յետոյ, Խօզէն գնաց Խոռա-
նայի առանձին տունը և իրակուեցաւ նրա մէջ:

Ամբողջ երկու օր անցկացրուց նա հնտեղ բոլորովին մինակ:

Եւ երկու օրումը նա ոչինչ չըկերաւ. նա աղօթք էլ չ'արաւ:

Նա մին անպատմելի, մին հիւանդագին զմայլութեան մէջ
էր: Նրա մտքերը խառնուում էին, երեակայութիւնը նկարագ-
րում էր մինը միւսից զարհուրելի պատկերներ:

Ամէնից աւելի նրան թուում էր, թէ նրա առջևը ներկա-
յանում էր մին սիրուն, հեղահամբոյր էակ, որ նշանացի
կանչում էր նրան իրա մօտ, և հեռանալով, ասում էր կաթոգին
ձէնով:

— Եւ ամանակն է, սիրելի՛ դ իմ, ժամանակն է... գնանք... . . .

Եւ տեսիլքի ազդեցութեամբ Խօզէն վեր էր կենում իրա
տեղից, որ գնաց գաղտնի եկաւորի ետեւից. բայց հէնց նոյն րոպէին
նրան երևում էր, թէ որմնի զօրաւոր ձեռք նրան կանգնեցնում էր և
մին աներևոյթ որմնի ահարկութեամբ ասում էր նրան՝

— Դեռ հիմի չէ՛:

Եւ Դամիսիկեանը զարհուրած ծածկում էր ձեռերովը իրա ե-
րեսը և երկար ժամանակ լաց էր ընում:

— Ապասել, բռնուում էր նա լացի մէջ, էլի սպասել

եօթը տարի է ես սպասում եմ

Հասաւ երրորդ օրը , — օրը , որի մէջ նա պէտք էր տեսնուէր Վրբուէսի հետ եկեղեցւոյ խորանումը :

Խօզէն կէսը նստած էր , կէսը պառկած դիւանի վրա , որ կարել էր նրա համար Խուանան : Նա սովորականից աւելի գեղնած էր , նրա փոս ընկած աչքերը պղտոր և վայրենի էին . էն ժամանակը մտիկ տալով նրան կրկարժէիք , թէ նա նոր քաշել է երկար և ծանր հիւանդութիւն :

Յանկարծ նա տեսաւ Խուանայի կիսատ թողած կարը , որ առանց ծածկելու դրած էր սեղանի վրա , բրդէ կծիկներէ հետ միասին : Ինչ կարը , կարծես թէ , սպասում էր էն ձեռերին , որոնք նրան սկսել էին :

Խօզէի աչքերը լքցուեցան արտասուքով , և նա կաթոգին համբուրեց քաթանը , որի վրա արդէն փռած էին վարդի ճոխ թերթերը :

— Խեղճ Խուանայ , յետոյ աղաղակեց նա . քո կեանքն էլ ինձանով թունաւորւեցաւ () , եթէ տեսնէի քեզ հետի , տեսնէի թէ կ'ուզ մին բոպէ Ի՞նչքան հեշտ կրլինէր ինձ լաց ըլլել քո կուրծքի վրա Ի՞նչ մխիթարութիւն կրլինէր ինձ համար քո սէրը Քայց , յաւելցրուց նա փոքր ժամանակ լռելից յետոյ , նրան հստեղից հեռացնելը անպատճառ հարկաւոր էր հեռու տեղումը նա աւելի հեշտութեամբ կրդիմանայ մեր յաւիտենական բաժանմանը Հա՛ , էնտեղ էլ կրլինի շատ ու շատ արտասուք :

Խօզէն մտիկ տուեց ջրեղէն ժամացուցին (կլեպտիդին) : Ժամը մօտենում էր :

— () , ժամանակը ամէն բանը տանում է իրա հետ , ասաց նա թախծազին . տրամութիւնը , ուրախութիւնը , գեղեցկութիւնը , ջահելութիւնը , փառքը : Միայն նա չի տանում իրա հետ ատելութիւնը :

Խօզէն մտածմունքի մէջ ընկաւ . սենեակի մէջ տիրեց գերեզմանական լռութիւն :

Քաւական երկար լռութիւնից յետոյ նա կրկին մտիկ տուեց կլեպտիդին :

— Ժամանակն է , աղաղակեց նա յետոյ , մեր թռչելով իրա տեղից : Հատուց ցանկացած բոպէն վերջասպէս հասաւ :

Մրանից յետոյ իրա ճխլտած վերարկուն դրստելով , և գցելով ուսի վրա քղամիդը , Վօսիլինիկեանը հանեց փոքրիկ արկղից

Խաւանայի պատրաստած առողջարար էլէքսիրը և խմեց :

Իսկ էլէքսիրը ցոյց տուեց իրա յուսալի ներգործութիւնը :

Խոզէի դէմքումը երևեցաւ թեթև կարմրութիւն, նրա մըթնացած աչքերումը երևեցաւ իրա առաջուայ փայլունութիւնը : Նրա ձեռերը էլ չէին դողում, և նա դուրս գնաց տանից հաստատուն քայլերով :

() րը խիստ զարմանալի էր : Նրեզակը պայծառ փայլում էր անմառախուղ, մութ—կապուտ երկնքումը, և, հենց գիտենաւ, լուսով հեղեղեալ քուչէքումը լքողած էին ժողովուրդը դուզսի շրքերով :

Հենց էն էր որ պատարագը վերջացել էր :

Խոզէն գնում էր անչափ արագութեամբ, ող ձեռովը բռնած վերարկուի տակը թաքցրած դաշնակի կոթը : Նա, համարեալ թէ, ոչովի չէր տեսնում, նրա հայեցումըը հաստատ ուղղագիծ իրա առջևն էր մտիկ տալի : Հեռուից կարելի էր կարծել թէ նրան առաջնորդում էր աներևոյթ ինչ, և թէ նա գնում էր նրա ետեւից :

Բայց քուչէքումը հաւաքուած Սեւիլիացիքը, ՚ի հարկէ, չէին կարող չտեսնել Վոսիլիկեանին, որ գնում էր այնքան շտապով, և որի դէմքը ցոյց էր տալի այնքան ներքին սաստիկ աղմուկ : Նրանցից ոմանք, Խոզէին հանդիպելիս, հիացած կանգնում էին. և մին սիրուն աղջիկ հարցրուց իրա ընկերին՝

— Իսկ ո՞ւր է հասէս շտապում հայր մեծ Վնկվիզիթօրի սիրելին, և ինչի՞ էգպէս դեղնած է, իսկ և իսկ մեռելի պէս :

— Չոյնդ կարէ, շատախօս, ասաց մին պառաւ կին, որ կանգնած էր նրա մօտ. մեր գործը չէ : Հայր Վնկվիզիթօրնեքի համար չէ պէտք խօսիլ :

Չհիւ աղջիկը գլուխը քաշ արաւ և կտաւ իրա ընկերին, վախեցած եղնկի (Չէյրանի) պէս :

Նոր Խոզէն մօտեցաւ աղօթանոցին, ուր հրամայեց նրան ներկայանալ Նրբուհար, նրա առջևի հրապարակի մէջ, համարեալ թէ, ոչով չըկար. բայց մօտի քուչէքից լուում էր իրանց աները գնացող Չերմեռանդ քաղաքացւոց անորոշ գոչումը :

Խոզէն մտաւ աղօթանոցը :

Նրա մէջ հանդարտութիւն և խորհրդական լուութիւն էր էն րուպէին :

Այլ անհազարն սիւների մէջ անց էր կենում մին խորհրդա-
կան կիսալոյս, որն որ անց էր կենում նրա պատուհանների դոյն
զգոյն շուշաներից, նրա բարձր կամարների տակ դեռ տարածւում
էին ծխանելեաց անուշահոտ ծխերը: Այլ մարմարեայ յատակների
վրա, ուր ըստ մեծի մասին գերեզմաններ էին, էստեղ էնտեղ ծըն-
կան վրա չորած էին ու մանտիլների մէջ կօլօլված կնանիք:

Իսկ կանանցից ոմանք էնպէս անշարժ էին, որ կարծես թէ
գերեզմանի արձաններ էին:

Բնիք բաժնուած էր դասի միւս տարածութիւնից միայն ցածր
վանդակով (մուհաճարով): Այլ մէջ փոքր ինչ աւելի մութն էր,
քանց աղօթարանի մէջ: Ինտեղ ծագում էր միայն մին լուսի ճա-
ռագայթ, բայց Խօղէն լուսայանի ջոկեց, որ էնտեղ կանգնած է
Արբուէսը մտածմանց մէջ:

Մեծ Խնկիլիզիթօրը սպասում էր իրա սիրելւոյն:

Բոլոր մարմնովը սարսափելով, Խօղէն ահամայ կանգնեցաւ
սիւներից մինի ետեր:

Բայց շուտով նրա վստահութիւնը վերադարձաւ, և նա մը-
տաւ բեմի մէջ:

Արբուէսը նրա մէջ մենակ էր:

Նա շուռ եկաւ, երբ լսեց ոտի ձայնը:

Տեսնելով սիրելին, մեծ Խնկիլիզիթօրը կամենում էր նրան
մօտեանալ, բայց Խօղէն դեմքի տեսիլը այնպէս զարհուրեց էր, որ
Արբուէսը մնաց, և հարցրուց տկար ձեով՝

— Ի՞նչ է պատահել քեզ:

Խօղէն ամենեին սրատասխան չրտուեց. միայն նրա հայեցումը,
վայրենի և աստանդական, յանկարծ ընկաւ Արբուէսի աչքերումը:

Մեծ Խնկիլիզիթօրը երկու կամ երեք քայլ յետ քաշուեցաւ,
կարծելով թէ իրա սիրելին դժուել է:

Հէնց էն ըսպէին Խօղէն ընկաւ նրա վրա վազրի պէս, և
թափ անցկացրուց իրա դաշնակը նրա խոչափողը (բօղաղը):

Սիրելին գիտէր, որ Արբուէսի կուրծքը զրահով պաշտպա-
նած է:

Արբուէսի ձեռերը դողդղալով ձգուեցան, աչքերը սղտորե-
ցան, և նա երեսի վրա վէր ընկաւ: Արիւնը նրա վերջից գնում էր
ինչպէս ասում են, ազբիւրի պէս:

— Դու . . . դու, Խօղէ . . . կամաց ասում էր

Մարտի տոհմի շարժարանաց մէջ :

Մերեւելն կռուցաւ նրա երեսին, որ արդէն ծածկուած էր մահաւոր զեղնութիւնով, և ասաց Մարտի տոհմին, ցած ձայնով՝

— Մի՛ տղ բեր Պսուլային . . .

Իսկ խօսքերի ժամանակը մեծ Խնկվիղիթօրը բաց արաւ աչքը, որ արդէն խփուում էր մահուան յաւիտենական քնովը, և մտիկ տարով իրա սիրելւոյն ասաց հաղիւ լաւելու ձէնով՝

— Մտուած արդարադատ է . . .

Մին քանի վայրկեանից յետոյ նա մեռաւ :

Իսկ մարդասպանութիւնը տեսնելու վերը յիշատակած կանանցից մին քանիսը զարհուրելով դուրս վտարան աղօթարանից սուր աղաղակաւ՝

— () րնեցէք . . . օղնեցէք, մարթում են . . . հայր մեծ Խնկվիղիթօրին մարթում են :

Նրանց ձայնը լսեցին, և շուտով եկաւ Մլղվաղիլ սբիրնելի հետ :

Մարտի տոհմի մարմինը քնկած էր առաջուայ պէս գետնի վրա . նրա կողքումը, ձեռքը խուլած, կանգնած էր Խոզէն :

Մերեւելի աչքերումը, որմը մտիկ էին տալի հանգուցելոյն, երեւում էր մին գժուածութեան նման բան. նրա ախտէքները մին նորօրինակ ծեծում էին մին մինի. նրա բոլոր մարմնոյ վրա երբեմն տարածուած էր ջգտին գոգ : Բայց Խնկվիղիցիայի յարգանքը այնքան մեծ էր, որ Մլղվաղիլը չէր համարձակուի Խոզէի վրա կասկածիլ, և նրան հարցաց յարգական ձևով՝

— Հայր իմ, արդեօր ջրանսաք, ո՞վ ուրանեց նորին սրբաղնութեանը :

— Նրան ուրանեցի ես, հանդարտ պատասխանեց Խոզէն :

Մ. յոքան յայանի խստով նութիւնից յետոյ . . . տարակուսիլ անկարելի էր. Մլղվաղիլը հրամայեց Խոզէին տանել բանտը :

Խոզէն գէ՛մ ջրկացաւ, և համարեալ թէ, ուրախանում էլ էր Մլղվաղիլի հրամանի վրա :

Մլղօթարանի մօտ արդէն շատ մարդեր էին կանգնած : Նրք սիրելին դուրս եկաւ, ամէնքը անթիթ աչքով նրան էին մահատիկ կենդանի հետաքրքրութեամբ : Նա կնքան ջահիլ, կնքան սիրուն, և կնքան արտում էր, որ նրա կերպարանքը ազդում էր ակամայ կարեկցութիւն. սրանից ջոկ ժողովրդեան Մարտի տոհմի վրա

ունեցած ասեւլութիւնը էնքան մեծ էր, որ ամէնքը ամառում էին
սէ թէ սպանածի, այլ սպանողի համար :

— Արդեօք ի՞նչը ստիպեց սրան սպանել հայր Խնկիլիզիթ օրին . Խոզ-
զէն, կարծենք, որ շատ բարի մարդ էր, հարցնում էին ոմանք՝ բաղմու-
թիւնից :

— Հա՛, նրա վրա վատ բան չ'ենք լսել, պատասխան էին տալի
միւսները . զարմանալին այն է, որ մեծ Խնկիլիզիթ օրը նրան շատ
սիրում էր :

— Վիտն, ասաց մին աւանկ էին, շատ ամառ, նրան հիմի
մահուան պատիժի տակ կրգցեն, լսկ նա ամէնի հետ քաղցր էր . . .
և աղքատներին շատ օգնում էր . . .

Բաղմու թեան մէջ էր մեզ ծանօթ ծեր Ալլերօն : Վա,
իրա սուրբութեամբը, խօսում էր Խնկիլիզիթ օրների արարմունքի
հակառակ . նրա խօսքերը լսեց Խնկիլիզիցիի գործակալներից մինը :

Դողովուրդը հեղեղէ պէս գնացին սիրելիի քամակից :

Յետոյ շուտով Դոմինիկեանք և Խնկիլիզիցիայի ծառայողները
Արբուէսի մարմինը աղօթարանից դուրս տարան մառաւոր դա-
գաղի վրա դրած շքեղ դիպարդի : ^{Ընդ}

Եւ Դոմինիկեանք և Արբուէսի առաջուայ ստորադրեալները
գերազանց վարպետութեամբ ախուր էին ձեանում . նրանցից
մին քանիսը լաց էլ էին ըլում . էս միջոցումը ուրիշները երես-
պաշա բարեպաշտութեամբ հաւարում էին Թաշկինակների (աղ-
լուխների) վրա արեան կաթիլները, որոնք երբեմն երբեմն
կաթում էին վերքից :

Խոզէին տարան բանտը, որ նշանակուած էր մարդասպան-
ների համար :

Հէնց էն օրումը Տօդրիգէզ Ալլերօն և դօն Խիմենէս գէ
Դերրերաին մասնեցին և գցեցին Խնկիլիզիցիայի բանտը :



— Ի՞նչ էր ստիպողական պատճառը ոչդպիսի ծանր եղեւնազործութեան:

— Ի՞նչ պատճառը կը հասկօնար միայն էն ժամանակ, երբ հրաման կըրտար ինձ պատմել մին բաւական առաջ պատահած անցք:

— Պատմեցէք:

Իջողէն մին ըստէ մտածեց, և ապա տասց՝

— Սրանից եօթը տարի առաջ, Արքուէսին յանձնեցին Սեւիլիոյ մեծ Ինկվիզիթորի պաշտօնը. նա էն ժամանակը էր ջահել, սիրուն, մարդկայն (յետ եկած): Սեւիլիոցիք քաջալերեցան յուսով: Արանք կարծում էին, թէ Արքուէսը անպատճառ իրա նախորդների պէս խստասիրտ լինելու չ'է թէ նրա ժամանակումը Ինկվիզիցիայի զոհերի թիւը կըղակտի (1) Անձնապէս նրանց յոյսը չըկատարուեցաւ: Հալածանքը սչ միայն չըբիչացաւ, այլ տատկացաւ էլ, փչացան չարախօսութիւնով շատ բարեմիտ և արժանաւոր անձինք. փչացան միայն էն դուր համար, որ նրանք ունէին հարստութիւն, որոնց ցանկանում էր Ինկվիզիցիան արել

— Ղաթապարտելի, ասաց նախագահը, դու հեռանում ես առարկայից:

— Ամենէին, պատասխանեց Իջողէն, բոլոր ասածներս հարկաւոր են իմ պատմելիքիս կապակցութեան համար. և ասա նրա շարունակութիւնը՝

— Ինչ իմ ասած ժամանակումը, Սեւիլիոյի մէջ բնակում էր մին կաթոլիկ դերգաստան, իրա տոհմի հետ թեամբը երեւի, բարեպաշտ, և ամէնից յարգեալ: Ինչ դերգաստանը բաղկանում էր ծեր—հօրից, երեք արու որդիերանցից և մին սղջկանից. ջահելները զրկուած էին մօրից Արքուէսի մեծ Ինկվիզիթոր նշանակուելէց քիչ առաջ: Մօրից յետոյ մնաց նրանց համար ժառանգութիւն:

(1) Ռուսերէն թարգմանութեան մէջ, հստակ ծանօթութեան տակ գրուած է Ինկվիզիցիայի զոհերի ցուցակը, հանած մեր թարգմանած Իօրէնտի Ինկվիզիցիայի պատճառներից. մենք աւելորդ համարեցինք նոյն ցուցակը կրկին հստակ դնելու, ցանկացողները կարող են տեսնել մեր նոյն թարգմանութեան վերջումը առանձին տղեւտակի մէջ:

Մ. Ժ. Հարսառ թիւն:

Եւ երեք եղբայրներէց երկուք մտան հոգեորական կոչման մէջ, երրորդը . . . երրորդը էր քաջ, Սիգի նման, և սիրուն, աւելի քանց Սիգը. նրա անունն էր Ֆերեանդ:

Երջէն թարցրուց ծանր հառաչանքը, և մին ըուպէ լռելից յետոյ շարունակեց՝

— Ինկվիզիցիան մտար դրեց ջահիլներէ մօրից յետոյ մտայած հարսառ թեանը տիրել: Արա համար անխաղ ճանապարհ ընտրեց, Տարաբաղդ կնկայ վրա բարդեցին մեղապարտութիւն, իբրու թէ նա իբր մեռնելից մին քանի տարի առաջ, կաթողիկական դաւանութիւնը թողել է, և մեռել է ուրացութեան մէջ: Արդեցին դատ, ներկայացրին սուտ վեճներ, դատը վերջացաւ էնդրով, որ Ինկվիզիթիօնները հանեցին գերեզմանից հերետիկոս կարծուածի մարմինը, մինչև հիմքը քանդեցին նրա տունը, որի մէջ բնակուի էր նա իրա գերդատանի հետ, և որդիերանց համար թողած ժառանգութիւնը յաւիշտակեցին:

— Գատապարտելի՛, ասաց նախագահը. էդ անկարելի է. մերք չենք կարծում, թէ դուք գիտու թեանք սուտ էք հնարում. բայց կարծում ենք թէ դուք սխալում էք:

— Չեմ սխալում ես, պարոն նախագահ, և ոչ մին մանր պարագայումս էլ. էդ գործը ինձ խիտ լաւ յայտնի է, պատասխանեց Երջէն. կրհրամայէք շարունակել:

— Երբ— հայրը մեռաւ լշտից գատի ժամանակը, որդիերանցը գցեցին բանտը, էնդուր որ համարձակեցան տրանջալ իրանց մօր հողը անպատուելու համար . . .

— Իչի պէտք է ասել ձեզ, որ նրանց տանը կենում էր նրանց հեռու ազգակոններից մին որք աղջիկ, որ նշանած էր Ֆերեանդի հետ: Իս որբին խնայեցին. և ի՞նչ պէտք էր նրան լիչացնել. նա հարսառութիւն չ'ուներ. նրան իրա հովանաւորութեան տակ առու մին կին, որ նրան սնուցել էր . . .

— Յետոյ ի՞նչ պատահեցաւ ջահիլներին, հարցրուց դատաւորը ահամայ զթութեան շարժելով:

— Ի՞նչ պատահեցաւ նրանց, պարոն նախագահ. դուք գիտէք, որ նրանք Լորուէսի իշխանութեան տակն էին, և էլի հարցնում էք նրանց վիճակի համար . . . Եւ, ես կը պատմեմ ձեզ:

ի՞նչ պատահեցաւ նրանց: Արկու մեծ եղբայրներին՝ Ազգուստինին
 և Պրանցիսկին մեղապարտեցին էնդրով, թէ նրանք վարդապետում
 են կաթոլիկական դաւանութեան հակառակ հոգւով, — նրանք,
 ՚ի հարկէ դուք չ'էք մտացել, հոգեորական էին: Քուերը նմա-
 նապէս մեղապարտեցին . . . մեղապարտեցին էնդրով, թէ նա
 համաձայն է իլեւ իրա եղբարց դատողութեանը — և նրանց բողո-
 բին էլ հրապարակաւ այրեցին:

Արը նրանց տարան հրապարակը՝ Ազգուստինը փայտակոյտից
 վախենալով յայտնեց, թէ նա յանցաւորութիւնը վեզն է առ-
 նում, թէ նա ազաշումում է:

— Աւրեմս, խեղճել դրան և յետոյ այրել, սառնութեամբ
 ասաց Արբուհար:

Իսն նշանակում էր ողորմութիւն ցոյց տալ:

Ազգուստինի քոյրը և մուս եղբայրը փչացան հատաատութեամբ:

Խօզէն լռեց:

Պատաւորներն սիրտերը շարժեցան, թէ՛ և սուխը՝ էլին այս
 տեսակ զարհուրելի բաների:

— Շարունակեցէք, ասաց նախագահը, շարունակեցէք՝ եր-
 բորդ եղբայրը ի՞նչ իլաւ:

Խօզէն գոզաց բոլոր մարմնովը, նրա հայեցումները էր վայրենի,
 կուրծքը սաստիկ խփում էր:

— Արբորդ եղբորը, ասաց նա մին ըստէ լռելից յետոյ,
 պահեցին հետևեալ աւելի հանդիսաւոր աֆտո—դա—ֆէի համար:
 Արբիկը, որի հետ նշանած էր նա, մտածեց ազատել նրան:

Նա քսան տարեկան էր . . . և ո՞ր քսան տարեկան կլինարմատը
 չի յուսալ թէ կարող է շարժել աղամարդի գթութիւնը, — թէ
 և էն մարդը լինէր Արբուհա:

Մնցկացաւ վեց ամիս մեծ եղբորը և քուերը փայտակոյտի վրա
 փչանալու օրից, նոր աֆտո—դա—ֆէի համար նշանակած օրը մօտ
 կանում էր:

Պատւան (էս էր օրբիկի — երբորդ եղբորը նշանածի անու-
 նը) — յուսահատութեան մէջ էր: Նա սիրում էր իրա նշանա-
 ծին . . . (), սաստիկ, դժուած սիրում էր նա նրան:

Շատ գաղափարներ ծնան և մեռան նրա անփորց մտքի մէջ:
 Վերջապէս նա մնաց մին մտքի վրա՝ գնալ Արբուհաի մօտ, ընկնիլ
 նրա ոտքերը և խնդրել Պերնանդին ողորմիլ:

() Երհասական միտք

Ինչ ժամը, որ ընթերց Պատուլան իրա խորհուրդը կատարելու համար, էր շարագուշակ և դարհուրելի ժամ: Այն օրի մօտ էր արեգակը մառախաւ դով ծածկած չէր, բայց համարեալ, թէ, ամենեկն լոյս չէր տալի. նրա հոյակապ սկաւառակի վրա արածուած էր մեծ սև դիժ . . . Պատուլան դուրս գնաց ծածուկ իրա ծրմմէրի տանից—տշխարքումը իրա միակ բարեկամի տանից: Իսկզ՛ աղջկը թարցրուց նրանից իրա միտքը:

Երբ նա հասաւ Մարտիտի պալատի դուռը, մին սբիր, որ պահապանի տեղ էր բռնում, ահարկութեամբ հարցրուց նրան, թէ ի՞նչ է ուղում:

— Ինձ հարկաւոր է տեսնել նորին սրբազնութիւն հայր մեծ Ինկվիզիթօրին, պատասխանեց Պատուլան երկխոյզից դողալով:

— Ինչի՞ համար, շարունակից սբիրը:

— Ես նրա մօտ խնդիր ունիմ, ասաց ջահել աղջկը:

— Ուրեմն համբերեցէք էստեղ:

Իսկ խօսքերից յետոյ սբիրը գնաց:

Մա շուտով վերադարձաւ. նրա դեղնած սրածները մին նոր տեսակի կերպ էին թեքում ժայտից . . .

— Հրամայեցէք գալ իմ ետեից, տիրուհի, ասաց նա Պատուլային. դուք կը տեսնէք նորին սրբազնութեանը:

Պատուլան գնաց նրա ետեից:

Նրանք անցկացան մին քանի ահագին, զարդարած դահլիճներից և մին քանի երկար սրահներից, որոնց յատակները մարմարից էին, իսկ օձոճփները փայլում էին արարեսկներով. պալատի ամէնից հեռու մասումը բացուեցաւ դուռը և իսկոյն էլի փակուեցաւ, հէնց որ Պատուլան մտաւ սենեակը: Ասբիրը կորաւ: Պատուլան յանկարծ մնաց մենակ մեծ Ինկվիզիթօրի հետ:

Իսկզ՛ աղջկը բոլոր մարմնովը դողաց. մին անսահմանելի, բայց անտեղի ծանր զգացմունք նեղացնում էր նրա կուրծքը . . .

Մարտիտը նստած էր լէն, փափուկ դիւանի վրա, որ դրած էր նոյն սենեակի պատի առջևը:

— Իստեղ մօտ արի, ասաց նա Պատուլային:

Պատուլան յետ դցեց իրա ծածկոյը, և մօտկացաւ Մարտիտին: Յետոյ նա նրա առջևը չորեցաւ և աղաղակեց խղճալի ձայնով:

— Ինչպեցէք, ձերդ սրբազնութիւն, ինչպեցէք իմ նշանա-

ծին . . . նա անմեղ է . . . () , 'ի փառս Աստուծոյ , նը-
րան ինձ տուէք :

Արբուէսի դէմքի վրա երեւցաւ անբաւականութիւն :

— Ա՛յլ է քո նշանածը , հարցրուց նա կցկտուք :

— Արա անունը է Ֆերնանդ դէ Ազալայ , պատարխանեց
Պատւան :

Սե՛ծ Ինկվիզիթորի հայեցուածքովը փայլեցաւ բարկութիւն ,
բայց փայլուեցաւ մին ըսպէ . էս հայեցուածքը շուտով դառաւ
հեղ , և նա անթարթ մտիկ տալով Պատւային , երկար ժամանակ չը-
հեռացրուց նրանից :

Պատւան սիրուն էր . () , հաւատացէք ինձ , պարսն նախա-
գահ , շատ , շատ սիրուն էր :

Նրան լաւ մտիկ տալից յետոյ , մե՛ծ Ինկվիզիթորը ասաց նը-
րան քաղցր ձեռով .

— Ա՛յր կաց , որդեանկ իմ , և խօսիր աներկիւղ : Ինկվիզիցիայի
օրէնքները խիստ են , բայց ինձ շարժում է քո վիշտը :

— Արկնքի օրհնութիւնը գոյ ձեր սրբազնութեան վրա ,
աղաղակեց Պատւան , որի համար էս խօսքերն էին յուսոյ ճառա-
գայթ . ուրեմն , դուք կ'աղաատէք Ֆերնանդին :

— Այ՛թէ ես խոստացայ՞ աղատել նրան , որդեանկ իմ , ա-
սոց Արբուէսը կ'նայիսի ժպտալով , որ կարելի էր աեանել վազ-
րի մօտ , եթէ վազրերը կարողանային ժպտալ :

Նա խաղում էր իրա օրսի հետ . . .

— () , աղաչում եմ ձեզ , շարունակեց Պատւան , մի՛ յեւ
դառնար ձեր խօսքից . ակորո դուք ասացիք , թէ կը գթար իմ վիշ-
տերի վրա :

— Իսկ եթէ ես աղատեմ քո նշանածին , դու իմ ողորմու-
թեան գինը կը տամ :

— Իմ բոլոր կենացս մէջ ձեզ համար աղօթք կ'անեմ Աստ-
ծուն , իմ կենացս իւրաքանչիւր ըսպէումը ես կը յիշեմ ձեր բարե-
բարութիւնը . ուրիշ ի՞նչ բանով կարող եմ ես վտխարէն շնոր-
հակալ լինել . . .

— Իսկ շատ սիրուն ես , որդեանկ , աղաղակեց Արբուէսը այն-
պէս մտիկ տալով , որ ստիպեց նրան վեր թռչիլ :

Իսոյց խեղճ աղջիկը անշուշտ հարկաւոր համարեց թորցնել
իրա երկիւղը :

Մի՞տ Ինկվիզիթօրը նշանացի ասաց նրան նստի՛ր իրա կող-
քումք դիւանի վրա: Պատււան դողալով կատարեց է՞տ հրամանը:

Նա սուս էր կայել: Արբուէսը նոյնպէս ոչինչ չ'էր խօսում,
միայն նրա հայեցումը աւելի ահարկու դառաւ:

— Դօն Գերնանդ դէ Վազալւան, վերջապէս ասաց նա կըր-
կին դառնալով դէպի իրա առաջուայ միտքը, — դօն Գերնանդ դէ
Վազալւան դատապարտուած է այրելու, և պէտք է շարշարանաց
տակ ընկնի . . .

Տարբաղդ Պատււան սուր ձէնով աղաղակեց, շարշարանքները
թուեցան նրան աւելի զարհուրելի, քան թէ պատիժը:

— Ի՞նչ պատահեցաւ քեզ, հարցրուց Արբուէսը:

— Նրան տանջանքի տակ պիտի գցեն, պատասխանեց Պա-
ուււան:

— Ես կարող եմ նրան աղատել:

Պատււան աղաա շունչ քաշեց:

— Իայց դրա համար, շարունակեց Արբուէսը, քո կողմից
զո՛հ պէտք է . . .

— Իմ կողմից, աղաղակեց տարբաղդը: Առէք իմ կեանքս,
եթէ նա կարող է նրան վրկել:

— Ո՛չ թէ քո կեանքն է հարկաւոր նրան վրկելու համար. . .
պատասխանեց Արբուէսը, առնելով նրա ձեռք և սաստիկ հուփ
տալով իրա ձեռերի մէջ:

— Դատապարտելի՛, ասաց նախագահը, դուք զրպարտութիւն
էք անում էն մարդու վրա, որ մեր խորին յարգանաց արժանաւոր
աստիճան ունէր:

— Ես չ'եմ զրպարտում ոչովի վրա, պարոն նախագահ, այլ
պատմում եմ ինչպէս որ էր, պատասխանեց Խօզէն. բայց եթէ իմ
ձեր առաջը տուած երգումից յետոյ էլ դուք չ'էք հաճում ինձ հաւա-
տարմութիւն տալ, ես կըրնեմ . . .

— Չ'է, շարունակեցէք, ես պէտք է լսեմ ձեզ, իմ պաշ-
տօնիս համաձայն:

— Արկատարեմ ձեր հրամանը, պարոն նախագահ, պատաս-
խանեց Խօզէն. ահա՛ իմ պատմութեանս շարունակութիւնը:

Պատււան կրկին շոքեցաւ Արբուէսի առաջը: Արբուէսի խօս-
քերի զարհուրելի միտքը նրան յայտնի էր . . . Նա երկար ժա-
մանակ գրկելով Ինկվիզիթօրի ոտները և լաց ընկելով աղաչում էր

նրան խնայել — Ֆերնանդին էլ, իրան էլ Այս յուրա-
հասութիւնը, ոչ նուազութիւնը Պաուլայի չըշարժեցին գաղանի
սիրտը:

— Միայն քեզանից է կախուած նրա վիճակը, ասաց նա
ժանկոտաձ:

Պաուլան, գոյնը թռած սպիտակ մարմարի պէս, վերկացաւ,
և մօտենալով դրանը, բղաւեց Մարբուէսի վրա՝

— Ընթեալ լինիս դու, քարասիրտ մարդ . . . սպանիր Ֆեր-
նանդին. ես էլ կը մեռնեմ նոյն օրումը:

— Դու չ'ես իմանալ, թէ երբ կը մեռնի քո Ֆերնանդը, ասաց
Մարբուէսը: Եւ կը իջանայ բանտումը չարաչար տանջանքներով:

Պաուլան կրկին աղաղակեց սուր ձայնով. յետոյ ուղում էր
մին բան տակ և չըկարաց. զօրութիւն չունաց . . . ձեզ արդէն
յայտնի է, որ տանջանքը նրա համար մահաց աւելի զարհուրելի էր:

— Բայց, կրկնում եմ քեզ, դու կարող ես նրան աղատել,
ասաց Մարբուէսը մօտենալով Պաուլային:

Պատասխան չըկար. Պաուլան հազիւ շունչ էր քաշում. նրա
հայեցուածքն էր խորթ և զարհուրելի:

— Ես ասցէք պրծէք, շարունակեց Մարբուէսը բարկութեամբ,
նա պէտք է ապրի թէ ոչ: Եթէ չ'է, էս բոպէին ինձանից հե-
ռացէք:

Պաուլայի աչքերը խփուեցան. նրա սիրտը, համարեալ թէ, էլ
չ'էր խփում, և նա պատասխանեց հազիւ լսելու ձէնով՝

— Թող ապրի նա . . .

Խօղէն լռեց: Եւ բոպէին ինքն էլ հազիւ շունչ էր քաշում.
բայց կամաց կամաց նրա զօրութիւնը վերադարձաւ և շարունակեց:

— Մին ամսից յետոյ, աֆտօ—դա—ֆէի համար նշանակած
օրը, Ինկվիզիցիայի բանտի դրանը կանգնած էր մին դեղնած, լզար,
և ինչպէս երևում էր, դարդամահ, կինարմատ: — Եւ Պաուլան էր:

Ինչպէս Ինկվիզիցիան առաջուց յայտնել էր, էս անգամ
էրելու դատապարտած էին տասներեք անձինք. բայց Մարբուէսը
խոստացել էր Պաուլային, թէ կ'այրուին միայն տասներկուքը, իսկ
տասներեքերորդին կը տայ նրան իսկոյն աֆտօ—դա—ֆէից յետոյ,
առաջուց ձայն տարածելով, թէ նա մեռել է բանտի մէջ:

Պաուլան անպատմելի նեղութեամբ սպասում էր Մարբուէսի
խոստման վախճանին:

Հրատարակի մէջ արդէն լքցուած էին խիստ բազմութիւն .
բայց ոչ թէ հետաքրքրութիւն, այլ երկիւղ և թախիծ էր երևում
էն ժամանակը Անեղիոյ քաղաքացւոց երեսներումը . շատ կը
նանիք լաց էին ըլում :

Սերժապէս բանտի դռները բացուեցան, — և զարհուրելի հան-
դէսը սկսեց գնալ դէպի պատժելու անդը :

Մեղապարտներից էս սարսափելի հանգէսի մէջ, առաջինն էր
բոլոր Խապանիումը յարգոյ մին պրիլատ . Դողովուրդը սիրաբ
թռթռալով մտիկ տուեց նրա կօրացային :

Նա ևս եւից գալիս էին առաջ երկու կնանիք, և յետոյ մին
ջահիլ Մարրանո : Իսկ Սերժինին մեղապարտել էին հնգրով, իբր
թէ նա ծածուկ պաշտում էր իրա նախնեաց հաւատը . սակայն
նրա յանցաւորութեան ապացոյցը էր նրա տան մէջ գտնուած մին
Ղուրան :

Բայց տարաբաղդութիւնը չէր յողթել ջահիլին . նա գնում
էր վեհ և հանդարտ մտիկ տալով բոլորքը : Նա, կարծես թէ
մտքումը համեմատում էր Մաւրերի անցեալ դարումը Մուխլայի
վրա ակրապետութիւնը հեմիլուայ Կնիլիդիցայի նրա վրա տիրելու
հետ : Եւ յիրաւի եթէ կար նրա մտքումը էս համեմատութիւնը,
ուրեմն նա կարող էր մտիթարել իրա անձնասիրութիւնը :

Մարրանոն հեռացաւ աչքից, դուրս եկան ուրիշ մահու գա-
տապարտեալներ : Պատւան մեռուցիչ անհանգստութեամբ համ-
րում էր նրանց, մտիկ տալով նրանց ամէն մինի երեսին :

Նա համարեց վերջապէս տարներկու զոհեր . նրանց հաշուումը
Քերնանդը չըկար :

Մին ծանր բեռը վեր ընկաւ խեղճ աղջկայ սրտի վրայից . նրա
աչքերումը ծագեց յուսոյ ճառագայթ, կուրծքը սկսաւ ազատ շունչ
քաշել :

Բայց յանկարծ, մին քանի ըտպից յետոյ, դուռ եկաւ էլի մին
դատապարտեալ :

Նա էնքան լղար էր, էնքան դեղնած, որ դէմքը աւելի մե-
ռածի նման էր, քան թէ կենդանի մարդու . կեանքի նշան կարելի
էր տեսնել միայն նրա փոս ընկած սև աչքերումը . նրանց փայ-
լումը զարհուրելի էր . նրանք նման էին մինչև տակը վառած մոմի
փլփլոցի, որ երբեմն, կարծես թէ, բոլորովին հանդուում է, երբեմն
էլի վառում է և պայծառ լոյս է տալի բոլորքը : Նրա ձեռքերը

և ստաները տանջանքից կտրտած էին, և նա էնքան տկար էր, որ նրան համարեան թէ վերցրած տանում էին երկու սբիւներս:

Պատւան առաջի անգամ տեսնելիս չըճանաչեց, թէ ով էր էն տարաբաղդը:

Բայց նա, տեսնելով նրան, ձգեց գէպի նրան իրա չորացած ձեռերը, և յանկարծ կենդանացածի պէս, բղաւեց՝

— Պատւա . . . Պատւա . . .

Պատւան աղաղակեց վայրենաբար սուր և ուղում էր ընկնիլ Ֆերնանդի վրա, — նա հիմի ճանաչեց իրա նշանածին, բայց սբիւները չըթողին նրան վշտակրի մօտ, որ իսկոյն թուլացաւ:

Պատւան մտիկ տուեց նրան մին րոպէ, յետոյ վերաւորած առիւծի պէս ճեղքեց իրա ճամփիսն կապող բազմամբօխ ժողովուրդին, շուտով անցկացաւ ընդարձակ տարածութիւնը, որ նրա և Մորբուէօի պալատի մէջ էր, և կանգնելով էն պալատի դրանը, սկսաւ աղաղակել խելագարի պէս, թէ նրան հարկաւոր է մեծ Քնկվիզիթօրին տեսնել:

Նրան պատասխանեցին, թէ Մորբուէսը արդէն հրապարակումն է, ուր պէտք է լինի աֆտօ—դա—ֆէ:

Պատւան արդէն վաստակած (բէղարած) էր երկար և շտապ դէս դէն վազելից. բայց յուսահատութիւնը նրան զօրութիւն տուեց, և նա էլի էն տեսակ շտապով գնաց պատիժի տեղը:

Երբ նա հասաւ էնտեղ, փայտակոյտներից արդէն բարձրանում էին սև մուխի թանձր կծիկները, որոնց մէջերումը հստեղ էն տեղ բոցը շրջապատում էր . . .

Քնկնայն ինչ վերջացեալ էր . . .

Իսկ նա, իսկ Ֆերնանդի գահիձը հանգիստ և վեհ նստած էր իրա փառաւոր աթոռի վրա:

Հուսահատութիւնից յտիշտակած Պատւան մտացաւ, թէ ժողովրդեան խումբի և Քնկվիզիցիայի հազարաւոր լրտեսների մէջ է. նա աղաղակեց ձեռները երկինքը վերցրած և դառնալով էն կողմը, ուր նստած էր մեծ Քնկվիզիթօրը՝

— Մի՞ծեալ լինիս դու, Պետր Մորբուէս . . . գաղան, վախեցիր իմ վրէժխնդրութիւնից:

Բայց էս խօսքերը չըլսեցին, ոչ նա, որին ասում էր և ոչ Քնկվիզիցիայի մարդերը. բազմութեան ձայնը ծածկեց Պատւայի աղաղակը:

Խօզէն լռեց . նրա կուրծքը բարձրանում էր, առաջաւայ էն քան դեղնած երեսի վրա փայլում էր պայծառ կարմրութիւն .
Նա զարմանալի գեղեցիկ էր էս րոպէումը :

— Ի՞նչ իլաւ Պաուլան, հարցրուց նախագահը, իրա կամքի դէմ շարժելով դէպի հետաքրքրութիւն :

— Պաուլան վրէժը առաւ մեծ Ինկվիզիթօրից . պատասխանեց Խօզէն խուլ ձէնով . նա սպանեց Մ. Բրուէսին :

— Ի՞նչպէս թէ սպանեց, կրկին հարցրուց նախագահը . ձեր խօսքը չ'է հասկացւում : Ի՞նչ կցորդութիւն կարող է լինիլ Չահիլ աղջկայ՝ սրի պատմութիւնը խօսեցար մեզ, և դովինիկեան Խօզէն մէջ :

— Ա՛յ թէ դուք թոյլ կրտաք ինձ կցել իմ պատմութեանս հետ եզրակացութիւնը, իմ խօսքերս ձեզ համար կրպարղուին :

— Մե՛ք ականջ ենք դնում ձեզ :

— Ահա տարի անցնելից յետոյ, Սեւիլիոյ Պովինիկեանների արքայութիւնը եկաւ մին Չահիլ մարդ քան տարեկան, խնդրելով ընդունել նրան սուրբ դովինիկի կարգը : Չահիլ մարդուն նշանակեցին անկէպի : Իս ունկնդրութեան ժամանակումը, որ քաշեց երեք տարի, նա սորվեցաւ լատինաց լեզուն և աստուածաբանութիւն . յետոյ նրա խնդիրքը կատարուեցաւ :

Իսոյց հասուրից առաջ, Չահիլ մարդը կարաց դարձնել դէպի ինքը Սեւիլիոյ մեծ Ինկվիզիթօրի մտադրութիւնը : () ր քան զոր Մ. Բրուէսի սէրը նրա վրա աւելանում էր : Նա սկսաւ խորհրդակցիլ նրա հետ շատ մեծ գործերի մասին . նա տարաւ նրան իրա մօտ բնակելու . նա հաւատաց նրան իրա բոլոր գաղտնիքը և վերջին ժամանակներումը Մ. Բրուէսը Խօզէնի կամքից ջոկ ուրիշ կամք չ'ունէր :

— Խօզէ՛, աղաղակեցին գատաւորները զարմանալով :

— Հա, Խօզէն, պատասխանեց մեղաւարտը . Խօզէն-որ վաղաբշօղ ծառայի պէս հաճոյանում էր Մ. Բրուէսին, էնդուր համար, որ նրա կամքը իրա իշխանութեան տակ գցի . Խօզէն, — որ կրակը բորբոքող քամիի պէս գրգռում էր Մ. Բրուէսի կրքերը, էնդուր համար, որ վնասի նրան . Խօզէն, — որ քարասիրտ և անսուակ մարդուն շինեց հրէշ, էնդուր համար, որ դարձնի նրա վրա բոլոր Ինկվիզիթի ատելութիւնը և անէծքը . Խօզէն, — որ հասնելով իրա նպատակին, սպանեց Մ. Բրուէսին . Խօզէն, — վերջապէս, որ Պաուլայի ժողիարէն վրէժն առաւ :

Արք դատաւարանին ասում էր էս խօսքերը, նրա ձայնի մէջ կար
մին վառաւորութիւն, իսկ նրա աչքերումը երևում էր վայրենի
խնդութիւն:

Ղատաւորները նրան համարեցին խելացնոր, նրանք դեռ չէին
հասկանում նրա խօսքերը:

— Ձեր խօսքերը իրարու հակառակ են, ասաց նախագահը
երկար լռութիւնից յետոյ. վերջապէս ո՛վ սպանեց հայր Պետրին,
Խօզէն, Թէ Պաուլան:

— Խօզէն էլ, Պաուլան էլ, պարոն նախագահ, պատաս-
խանեց մեղապարտը. էնդուր որ Խօզէն և Պաուլան մի և նոյն է.
էն Պաուլան ես եմ, պարոն նախագահ, ես տղամարդ ձեացայ
և մտայ Ղօսիմիկեան կարգի մէջ էնդուր համար, որ Արքուէսի
վրէժը առնեմ:

— Ղառ երկդատիկ յանցաւոր ես, ասաց նախագահը ահար-
կու ձեռով, և քո հատուցումը կրէնի մահ:

— Մահը ինձ համար բարերարութիւն կրէնի, պատասխա-
նեց Պաուլան, որին մենք այժմ պէտք է անուանենք իրա իսկա-
կան անունով. ես մահի ջանկանում եմ, և ձեզանից խնդրում էլ
եմ նրա համար:

Ղատաւորները գնացին միւս սենեակը խորհրդակցելու և դա-
տակները գրելու համար:

Իսաւահան ժամանակից յետոյ, նրանք վերադարձան, տխուր,
ահարկու, և նախագահը բարձր կարգաց հետեւեալը.

« Մտադրութեան տակ գցելով՝

« 1) Թէ նորին սրբազնութիւն Սեւիլիոյ նախկին մեծ Ինկ-
վիզիթօր Պետր Արքուէսը փչացաւ բռնաւորական մահուամբ:

« 2) Թէ էս բռնաւորական մահը պատճառել է նրան մարդա-
պանը, որի անունն է Պաուլա, և որ ստութեամբ անուանում էր իրան
Խօզէ, և խաբէութեամբ ստացել է Ղօսիմիկեանի աստիճան:

« 3) Թէ յիշատակեալ Պաուլան վիղն առաւ իրա զորհու-
րելի չարագործութիւնը:

« և 4) Թէ էս չարագործութիւնը կատարուել է երկար ժա-
մանակեայ մտադրութիւնից և կղեռնական խաբէբայութիւնից յետոյ:

« Օսյրագոյն ժողովը (Տրիբունալը) իրա պարտաւորութիւ-
նը լաւ ճանաչելով և մաքուր խղճմտանքով սահմանում է, ահ-
րութեան օրէնքներէ համաձայն՝ վերագրեալ Պաուլային սպա-

անկէլ անալ (հելեոսլաթ) և յետոյ չորս հարս անկէլ :
Բայց որովհետեւ նրա ծանր շարադարձութիւնը նմանում
է հայրաստանու թեան, վանորոյ առաջ պէտք է կարուի նրա աջու
ձեռք, որ դահլիճը պէտք է մատնէ կրակի :

« Իս դասակները կատարելից յետոյ, պատժածի անդամները
պէտք է կախուին մեծ ճանապարհներէ վրա զիշակեր գաղանաց
կերակուր, նրանց թողու մը արդեւա՞ծ է : »

Մինչև բանը « պատժածի անդամները պէտք է կախուին մեծ
ճանապարհներէ վրա : » Պատւան լուսւմ էր իրա մահաւան վճիռը
հանդարտ, բայց էս խօսքերը ստիպեցին նրան սարսամիտ : Վսելով էս
խօսքերը, նա ձեռով աչքերը ծածկեց, իբրու թէ, զարհուրելի
և միանգամայն զղուելի տեսարանից, որ պատկերացնում էր նրա
երեւակայու թիւնը


Մին բանի ընդմէջ յետոյ նրան տարան բանախ աղօթարանը,
որ պէտք է սպասէր մահաւան :

Քուչան դուրս գալու ժամանակը նա բազմութեան մէջ
պատահմամբ տեսաւ մին բարձր, դեղնած պառաւ, որ անթարթ
մտիկ էր տալի նրան արատաւոր աչքերով, և որի հայեցումքը,
համարեալ թէ, առւմ էր նրան :

— Գաւ խօսքեցիր ինձ—բայց ես էլի կստեղ եմ :

Իս պառաւ կինը էր Խուանան : Պատւայի համար շիտթ
ուելով, նա ճանապարհից յետ էր դարձել Մեմլիխա, թողնե
լով Իսախ վանին և Կօլքոքիսին ճանապարհաւոր :

— () , ասաց Պատւան քչիչալով, տեսնելով Խուանայի
հայեցումքը . հիմի ես կարող եմ հանդիսա մեռնել . նա ինձ
մեռնելից յետոյ էլ չի թողնիլ :





XIII

ՄԱՀՈՒՄԵՆ ՊԱՏԻՃԻ ՕՐԻՅ ՄԵՆ ՕՐ ԼՈՒՆՔ:

Խաղանիսուսը վաղուց մտադամ սովորութիւնով, կնտեղի մահաւ գառապարտած յանցաւորները, դատակնիքը լսելից յետոյ մին կամ երկու օր մտում են ըանախ աղօթարանումը: Ինտեղ միշտ նրանց մօտ լինում են սեղանի պաշտօնեայքը, որոնք խօսում են նրանց հետ, յորդորում են զղջալ, յոյս են տալի, թէ Կատուծոյ պղոր մութիւնը մեծ է, և համոզում են տրիարար կրել արժանաւոր պատիժը: Ինտեղ հրաման է նրանց տեսնուել իրանց ազգականների և բարեկամների հետ:

Բողհանրապէս մահապարանների կենաց կս վերջին օրերումը կատարում են նրանց ամենայն ուղածները:

Պատուլային էլ, ինչպէս մենք վերը տեսանք, տարան ըանախ աղօթարանը:

Սեղապարտի կս վերջին ապատարանը տխուր էր: Նրա մին պատի առջև սեղորով ծածկած սեղանի վրա դրած խաչելութեան երկու կողմումը վաւում էին մեծ մեղրամսներ: Ինտեղից վարը հեռու, էլի պատի տակ, բնկած էին դեանի վրա՝ կային, թոկեր, երկու մեծ եղենեայ տախտակներ մինը միւսի հետ կցաց կս տեսակ X, և ծանր երկաթի նիզ: Կատուք մահաւան պատիժի դործիքնե մ էին:

Մտի անդամը Պատուան օրանց չըտեսաւ: Ինպատմելի ազգախ լքուած էր հիմա նրա սիրտը. նրան մաշում էր էն խորհարարը, թէ գերեզմանից յետոյ ի՞նչ է մնում իրան . . .

Պատուան չըբեցաւ Նրա պատիկերի առաջը, Ար չարչարուեցաւ:

Handwritten mark or signature in the top right corner.

մեզ համար, և երկար աղօթք արաւ Չերմեռանդ արտասուքով, խոնարհութեամբ և բեկեալ սրտով:

Սա վերկացաւ. աղօթքը փարս ինչ հանդարտեցրուց նրան: Արկին մտիկ տուեց Հաւիտենական Փրկչի անային պատկերին, հեռացաւ աղօթք արած տեղից և նստաւ սեղանից հեռու դրած երկու աթոռներից մինի վրա:

Պատւան մտածմունքի մէջ ընկաւ. նրա մտքումը զարթում էին մին մինի ետեից կարդալ իրա կեանքումը տեսածները:

Մհա նա անհագո, ուրախ և բարեբաղդ մանուկ է. ահա նրա սրտի սիրեկան մանկական խաղերը ահա բացադոյն և արագաթռիչ թիթեռը, որ իրա սուխորութեամբը թռչում է մին ծաղկից միւսի վրա, մին խոտից միւսի վրա, և որին ուզում է բռնել Ահնաց առաջի տարիներէ՛ երջանկութիւն, ինչի՛ էդ պէս շուտ էք անցկենում դուք

Մհա հասակի գայլը և հոգսի մէջ մտնիլը կամաց ման է գալի նա Մլգամբրի կարմրագոյն խիտ նարնջի ծառերի տակը. արեղակը փայլում է դէսուդէն իրա վերջին օսկեմայլ ճառագայթներով զմրխտեայ կանանչների վրա ամէն տեղ լաւ թիւն, ամէն տեղ հիացումն և օրիորդը միտք է անում ջահիլ, աներկիւղ և սիրուն բիցարի համար, իրա սիրելւոյն համար:

Մհա նրա առջեն են իրա ծնած քաղաքի եկեղեցիքը, ուր երբեմն մարտը խղճիւ Չերմեռանդ աղօթք էր անում Մհա էն հոգեւոր հանդէսներից մինը, որ երբեմն սատիկ ափշեցնում էր նրա երեւակայութիւնը. սրբազան երգերի ձայները օդումը գնում են հեռու, խնկոց ծուխերը կապառոյն ամպերով բարձրանում են երկինքը: Պլխաւոր հանդիսականաց շքեղ զգեստները և ճոխ անօթները շողշողում են և ակամայ քաշում են աչքերը դէպի իրանց: Քարեմիտ ժողովուրդը Չերմեռանդութեամբ դնում են իրանց պաշտելի առարկայի հետ

() , ինչպէս չ'է նմանում նրա ներկան էն ժամանակուայ սրտի մարբութեանը:

Մհա նա բնակւում է Ֆերնանդի հօր տանը: Մհա ինքը Ֆերնանդը ահա անդրանիկ սիրոյ առաջին ուրախութիւնները . . .

Բայց լուսաւոր պատկերները աներեւութացան, նրանց տեղը գալիս է այժմ զարհուրելի, թախծագին և սրտաբեկ տեսարանների կարգ:

Հարսույց

Ահա Գերնանդին մնաս բարով է ասում, երբ նրան տանում էին Ինկվիզիցիայի բանտը

Ահա Արթուրի հետ օրհասական տեսու թիւնը . . . աղա-
չանքը յուռահատու թիւնը, արատանքնեքը . . փայրենի կիր-
քը . . խարէու թիւնը . . բուրբը, բուրբը զարթեցան նրա սրտումը :

Ահա մին գեղնած, լղար, հաղիւ շունչ քաշող, չարչարանքից
շահատած իշաակիր սրկրներէ ձեռին . . նրա վրա կոյ զօրհուրելի սան
Բէնիթո շապիքը . նրան մնում են փայտակոյտի բոցերը . . բայց ահա
նա իբրու թէ կենդանացաւ մին րոպէ և յարու թիւն առաւ : Պա-
ուլա . . . Աստուած իմ . . . էս Գերնանդն է :

Ահա վերջապէս կեղծաւորութեան տալիները և Արթուրի
մահը

Պաուլան պատահաբար զլուխը դարձուց. էս անգամը տեսաւ մա-
հուան գործիքները, որոնք յիշեցինք վերը : Սակայն նրանց տե-
սիլը չըվախեցրուց Պաուլային. նա սկսաւ հետաքրքրու թեամբ զննել
նրանց — այնքան արու թիւն կար նրա սրտումը :

Մին քանի րոպէից յետոյ գուռը բաց իլաւ և աղօթարանը
ներս մտան մարդասէր ընկերութեան երկու անդամները, որոնք
քրիստոնէական սիրով չէին զրկոււմ իրանց հոգացողութիւնից
նրանց՝ որոնք դատապարտած էին մեռնելու իրանց յանցանքների
համաձայն :

Աչոզներից մինը հարցրուց Պաուլային, թէ արդե՞ք ընկերու-
թիւնը չ'է կարող մին բանով նրան պէտք գալ :

— Ի՞նչ կեանքումը, պատասխանեց Պաուլան, ինձ խիստ
քիչ բան է հարկաւոր ես միայն ցանկանում եմ տեսնել
իմ ծծմէրին . նա բանտի դրանը կանգնած էր, երբ ինձ էստեղ
բերին. լու գիտեմ, որ նա էլի հնտեղ կըլինի Նրա անունը
Խուանայ է և նրան ձանաչելը դժար չէ. նա բարձրահասակ, ջը-
ղային կնիկարմատ է, սև շորերով, գեղնած և տխուր երեսով :

— Չեք ցանկու թիւնը կըկատարուի, ձեր ասած կնկան շուտով
կըգտնենք : Մենք, մեր կողմից, կամենում ենք ուրիշ էլի բան կա-
տարել ձեզ համար : Աչինչ չ'ունիք հասցնելու ձեր աղգականներին,
եթէ նրանք հեռու են :

— Ես աղգական չ'ունիմ ամենեին. բայց ձեր « հասցնել »
բառը իմ միտքս բերեց : Աշխատեցէք էս խաչը տալ Մեմիլիումը
շատ աղքատ և շատ արժանաւոր աղջկայ : Պէտք չ'է ասել

ու միցն է: Թող լինի նրա համար անձանօթից դրկած:

Իստակով, Պատւան հանեց իրա կարծքից արմանելով զարդարած ոսկի խաչ, և տուեց մարդասէր ընկերու թեան անդամ ներից մինին:

Ինչքան վեր առաւ նա լռութեամբ:

— Ուրիշ մին խնդիր էլ ունեմ, շարունակեց Պատւան, և էս վերջինն է. աղօթք արեք ինձ համար, իմ հոգւոս հանդատեան համար:

— Չեր էդ ցանկու թիւնն էլ կրկնաարեմք մեք:

Իստակովից յետոյ մարդասէր ընկերու թեան անդամները աղօթարանից դուրս գնացին:

Մնակ մնալով նա աչքը դցած ունէր դէպի դուռը. նրա խելքն ու մտքը հիմի մին բանի վրա էր, — տեսութիւն անել իրա ծծմէրի հետ:

Նրա յոյսը դարդակ չ'անցկացաւ: Մարդասէր ընկերութեան անդամները շուտով մտան աղօթարանը Խոսանայի հետ. առաջինները խոսին հեռացան:

Ոչ Պատւան, ոչ Խոսանան առաջի դամբ չըկարացին մին բառ էլ խօսել. բայց առաջինը ընկաւ պառաւի կարծքի վրա և երկուսն էլ երկար լաց իրան:

Լաց բլեւով, Պատւան գլուխը բարձրացրուց, խանդակաթ մակի առեց իրա ծծմէրին և ասաց նրան:

— Ուրեմն դմ էլ ուղում ես մեռնիլ:

— Հա՛, պատասխանեց Խոսանան, միայն քեզանից յետոյ:

— Ի՞նչ ես անում, իմ բարի Խոսանայ. ի՞նչ պիտի անես հասնող մեծակ. ի՞նչպէս կարող ես ասորիլ առանց ինձ:

— Իստակով էդպէս էի մտածում, Պատւա:

Կրկին տիրեց լռութիւն, և նրանք մէկգմէկու ձեռք բռնած, երկար ժամանակ թախծադին մակի էին տալի իրարու անպատմելի կաթողին սիրով:

Ներս մտաւ սքիւրը: Նա ասաց նրանց, թէ նրանք պէտք է բաժնուին: Պէտք էր հնազանդիլ անհրաժեշտ հարկին:

Պատուը դրկեց Պատւային և համբուրեց նրա ճակատը:

— Խոսանա՛, ասաց յետոյ Պատւան յուսահատութեամբ, իմ բարի Խոսանա՛, ինձ մաշում է մին զարհուրելի միտք՝ դերեզման մանկից յետոյ արդեօք ներողութիւն կրդանեմ:

— Ինչու՞ ծոյ սղորմութիւնը անսահման է, որդեակ իմ, պա-

տասխանեց պառաւը , կամելով քաջալերել իրա սնուցածին .

— Մենք էլ չենք տեսնուիլ էստեղ :

— Մենք կը տեսնուինք էնտեղ

— Դու աղօթք կ'անես Խուանա՛ . դու կը խնդրես ինձ հա-
մար ողորմութիւն երկնաւոր Հօրից :

— Մինչև իմ կենաց վերջե ըսպէն , Պաուլա՛ :


— Դու , աւելցրուց Պաուլան քչիչալով , ինձ չեո թող-
նիլ մեռնելիցս յետոյ էլ , դու հասկանում ես , ինչ եմ ու-
զում ասել :

— Միամիտ կաց , սիրելի որդեանկ , պատասխանեց պառաւը
նմանապէս քչիչալով :

— Պրծա՛ք , թէ չէ՛ , հարցրուց սբիրը , որ նրանցից հե-
ռու կանգնած էր նրանց ըսլոր խօսակցութեան ժամանակը :

— Մնաս ըարով , որդեանկ իմ , ցկրկին տեսութիւն կ'ստեղ ,
ասոց Խուանան , համբուրելով Պաուլային :

— () . հա՛ , կ'ստեղ պատասխանեց Պաուլան :
Լը նրանք ըստնուեցան :





XIV

ՄԱՀՈՒՄՆ ՊԱՏԻԺ

Ընաւօտուայ վեց ժամն էր:

Պահիճը մտաւ աղօթարանը, ուր էր Պաուլան:

Պաուլան ցանկանում էր մեռնիլ. նա արդէն ընտելացել էր մահուան պատիժի մտքի հետ. բայց նա վեր թռաւ տեսնելով էն մարդուն, որ նրան զրկելու էր կեանքից: Ներքին բնութեան ձայնը էս անգամ յաղթող հանդիսացաւ հոգեկան բնութեան աղղմանց վրա:

Նա, վերջապէս, յաղթեց իրա երկիւղին և առաց հանգարտութեամբ:

— Ես պատրաստ եմ:

Պահիճը առանց խօսելու դրեց նրա գլխին յունական ֆիսի նման կանանչ գգակ, որ առաջի կողմը ունէր փոքրիկ սիպտակ խաչ: Յետոյ հանելով Պաուլայից նրա սիպտակ շորերը, հազցրուց իր զոհին վերարկու, որի կէտը սև էր, կէտը կարմիր:

— Պրծար, հարցրուց Պաուլան:

— Ըն այժմ պրծայ, պատասխանեց դահիճը:

— Ես հիմի՞ պիտի մեռնեմ:

— Դեռ չէ:

— Ո՞վ Ըստուած, էլի պէտք է օպասեմ:

Պահիճը մտիկ տուեց Պաուլային զարմացմամբ: Նա չէր կարողանում հասկանալ, թէ ինչպէս կարելի է մեռնելու ցանկալ:

Յետոյ նա դուրս գնաց աղօթարանից, ասելով Պատւային՝
— Չեղ տրոււմ է փոքր ժամանակ վերջին աղօթքի և զըզման համար:

Պատւան չարեցաւ խաչելութեան առաջը: Նա դեռ աղօթք էր անում, երբ ներս մտաւ բանալի խոստովանահայրը

Մին քանի ըստէից յետոյ ներս մտան սրիւրներ, կապեցին նրա ձեռերը թակով և սկսան տանել մահաւան տեղը:

Պատւան չընդդիմացաւ:

Քանտից դուրս գալիս նրա հետ սկսան գնալ դռնինիկեաններ, մարդասէր ընկերութեան անդամները, մին գունդ զօրք և քաղաքացիք, որոնցից շատերը ձեռերին բռնած սենեին վառած մամլեր:

Իսա բոլորը գնում էին դէպի մեծ հրապարակը:

Ճանապարհումը հանդիսի հետ միացան շատ Սեւիլիացիք:

Խուժանը, ամէն տեղ խուժան է. մահը նրանց համար ամէն տեղ հետաքրքրութեան տեսարան է. սակայն էս ուամիկները ասիտուում էին Պատւայի համար. բայց որովհետեւ նրան յայանի չըգատեցին, էնդուր համար նրանցից ոչով չէր իմանում նրա իսկական սեռը: Շատերը զարմանում էլ էին, թէ շնոցաորը՝ այնքան լղար և պղտիկ էր: Նրանց կարծիքով մեծ Քնկվիլեթօրի ուղանողը պէտք էր ունէնար գերբնական զօրութիւն և պէտք է լինէր հսկայ:

Հանդէսը վերջապէս հասաւ հրապարակը:

Տեսնելով էն տեղը, ուր էրուեցաւ Պերմանդը, և որի վրա դեռ քանի օր առաջ փայտակոյտների բոցերումը փչացան էնքան ուրիշ զոհեր, Պատւայի աչքերից ցայտեցին տրտասունքներ և նրա աչքերը ահամայ տեսան զարհուրելի էշաֆօթը:

Բայց էս անցածների համար նրա վերջին մտածելն էր:

Պատւան սրբեց իրա արտասուներները, և առանց գեղնելու գնաց էշաֆօթի վրա խոստովանահօր հետ:

Մօտենալով մահու գործիքներին, նա չարեցաւ և փոքր ժամանակ ջերմեռանդութեամբ աղօթեց. յետոյ նա վերկացաւ և աչքը գցեց դէպի հրապարակը. նա յանկարծ տեսաւ էն ջղային, բարձրահասակ կնկան, որ ուրիշներից աւելի մօտ լինելով էշաֆօթին, անթարթ մտիկ էր տալի նրան:

Նա էր Խուլանան: Նրա համար ծանր էր տեսնել իրա սնուցածի մահուան պատիժը, բայց նա զօրացուց իրան. նա յոյս ունէր թէ իրա ներկայութիւնը կ'ազդէ Պատւային աւելի հաստատու:

Թիւն մահը մօակայած ժամին :

Պատւան հազիւ տեսնելու ձեով ժպտաց և աչքերը բարձրացուց երկինքը :

Պատւայի պատասխանի լիտարին , խուանան ծածկեց երեսին իրա մանտիլը , և շուտով վերցրուց . նա երևի թէ , կամենում էր սրանով ասել իրա սնուցածին՝ « մենք կը հեռանանք մին վայրկեան , »

Համարեա՛ իսկոյն սրանից յետոյ խոստովանահայրը Պատւային նշան տուեց , որ համբուրէ ձեռին բռնած խաչելու թիւնը :

Պատւան խորին եռանդեամբ կայցրուց իրա պաօշները սրբութեանը :

Խոստովանահայրը օրհնեց նրան :

Ինչ էր վերջին թոշակ ճանապարհի վշտաց մէջ մսի թարիչ — կրօնի :

Ղահիճը սկսաւ կատարել մահուան պատիժը :

Ըմէնից առաջ նա յետ արաւ Պատւայի ձեռերը . յետոյ դնելով աջ ձեռը կոճի վրա , նա ուղում էր կապել թակով , բայց Պատւան արգելեց նրան ասելով՝

— Կապել պէտք չ'է , ես չ'եմ մոխոցնիլ ձեռս , կտրէ :

Ղահիճը բարձրացրուց իրա կայինը , և էն ժամանակը Պատւան աչքով նրա բոլոր շարժմաներին մտիկ էր տալի :

Կայինի բերանը պսպղաց , կայծակի պէս հասաւ կոճին և ձեռի կտորը թռաւ տախտի վրա , ներկեալ արիւնով , որ աղբիւրի պէս շթիտուեց կտրած ջղերից :

Ետդուլուրդը զարհուրելով աղաղակեց , բայց Պատւան ոչ աղաղակեց , ոչ տընքաց . միայն նրա դէմքը առաջուանից աւելի դեղնեցաւ , և բոլոր մարմնոյն տիրեց ցնցական դող :

Ղահիճը կամենում էր կապել նրա կուռը կտաւի կտորով , որ գոնէ մտքը ինչ արգելէ արեան ընթացքը , բայց Պատւան չը համաձայնեցաւ , ասելով՝

— Թող ինչպէս որ կայ . շուտով ամէն բանը կը վերջանայ :

Պատւայի հաստատութիւնը արիւնցուցիչ էր , բայց զօրութիւնը արգէն սկսել էր տկարանալ :

Նա մտիկ տուեց ղահիճին և ասաց մտղթողական ձէնով՝

— Պրծիր , երգում եմ տալի քեզ . պրծիր մահու պատիժը . . .

Ղահիճը իրա ծառայի օգնականութեամբ պառկեցրուց իրա ղոհը խաչաձև տախտակի վրա , որի համար մենք վերը յիշեցինք :

էնպէս, որ նրա մօրմինը դառաւ էս տեսակ X. յետոյ Պատուլայի
ստները և ձեռերը կապեց տախտակի վրա, նաև էն ձեռք, որի դաստա-
կը արդէն կարած էր, և բարձրացրուց իրա երկսթի նիգը էլի էնպիսի
անտարբերութիւն, ինչպէս մին քանի թուի առաջ բարձրացրուց կացինը:

Նիգը դիպաւ Պատուլայի աջ կռանը և շուշայի պէս լիշուր լիշուր
արաւ: Իսկ անգամ Պատուլի բերնից դուրս եկաւ խորին երկար անբոց:

Ղաւճիճը մին թուի կացաւ. բազմաթիւնը անզգայի պէս լուռ
էր կոցել:

Իսկ կարճատե կենալու ժամանակը, Պատուլան ցնցմամբ շը-
փոթւում էր բոլոր մօրմնովը, թէև նրա ձեռերը և ոտերը պինդ
կապած էին թակերով տախտակի վրա. — էնքան սաստիկ էր տարա-
բաղդի զգացած ցաւը:

Իսկ նրա աջ կռանից էլի գնում էր արիւնը:

Նիգի առաջինի պէս երեք նոր հարուածները լիշուր լիշուր
արին Պատուլայի ձախու կուռը և երկու ստները, և ամէն մէն խփե-
լիս նրա արնբոցը կամաց կամաց սկսեցանում էր:

Իսկ զարհուրելի հարուածների վերջինից յետոյ, Պատուլայի ար-
դէն միտ ընկած աչքերը բոլորովին խփուեցան, պռօշները հուժ-
եկան, կուրծքը մին վայրկեան բարձրացաւ և էլի լիճաւ, արիւնը կըտ-
րուեցաւ բացուած ջրերից:

Ղաւճիճը դրեց ձեռը պատժածի սրտի վրա. նա էլ ձէր խը-
փում բոլորովին:

— Մեռաւ, հայր իմ, ասաց նա խոստովանահօրը, որ դեռ
էշափօթից չէր հեռացել:

Յիրաւի, Պատուլան արդէն մեռած էր:

— Ներեացէ դմա Տէր էն կեանքումը հստեղ գործածնե-
րին, ասաց սեղանի պաշտօնեան: Աղբարք, յաւելցրուց նա դառ-
նալով դէպի ժողովուրդը, աղօթք արէք ննջեցելոյ հոգու հոն-
դատեան համար:

Մինչև էս խօսքերը Խուանան կանգնած էր յուսահատու-
թիւնից ապանածի պէս, բայց էս խօսքերը լսելով, նա իբրու թէ
կենդանացաւ և ազատ շունչ քաշեց: Նա, որին աշխարհումը
ամէն քանից աւելի էր սիրում, և որին չըկարաց ազատել, այժմ
չարչարանքից սրճաւ:

Ղաւճիճը և նրա սպասաւորները վերիջան էշափօթից. ժո-
ղովուրդը սկսաւ ցրուիլ, մեկնելով իրանց ուղածի պէս էս բանը,

նմանապէս էն էլ թէ ի՞նչպէս ինկիլիզիթօրը սպանեց ինկիլիզիթօրին:

Հրապարակը քիչ քիչ դարդըկուեցաւ բոլորովն, միայն էշաֆօթի մօտ մնացին մին քանի մարդիք: Նրանք պահապաններ էին, որոնք պարտաւոր էին պահպանել Պաուլայի մարմինը, մինչև դահիճը դայ և չորս կտոր անէ նրան: Նա պէտք է դար գիշերուայ տասը ժամին:

Իյուանան հեռացաւ ամէնից յետոյ. նա գնաց հրապարակի մօտի եկեղեցին, որ էնտեղ մնայ գիշերուան. նա դեռ պէտք էր իրա հանդուցեալ սնուցածին տուած խոստումը կատարէր:

Իրիկուայ դէմ մեծ հրապարակումը հաւարուեցան նորից էլի շատ հեռաքրքրիւներ. բայց հէնց մ' թնացաւ թէ չէ, նրանք ամէնքը զրուեցան. հրապարակի մէջ էլի մնացին միայն պահապանները: Սակայն շուտով էնտեղից անցկացաւ մին մարդ, հագած Սեւիկիոյ քաղաքացւոյ շորեր, ինչպէս հագնում էին մեր պատմութիւնն արած դարումը: Յետոյ երկրորդը, երրորդը, յետոյ էլի մին քանի մարդիք: Բայց նրանք ամէնքը անց էին կենում հրապարակից էշաֆօթից հեռու, տասնևհինգ կամ քսան բուլէ յետոյ մինը միւսից ետև, իբրու պատահաբար, իբրու թէ տուն կամ մին տեղ էին գնում գործի համար:

Մրանք էին իյուանայից կաշառած գուապօսները. այլ թէ ի՞նչ էին ուզում նրանք անել, յետոյ կ'իմանաք. մենք հիսի կ'ասենք միայն, թէ էն ծառայութեան համար, որին սպասում էր դարդունեան ընկերութիւնից իյուանան, նա տուեց Վանդամիենայոյին բոլոր մնացած փողերը և թանկագին զատերը:

Նշանակած ժամին դահիճը եկու հրապարակը իրա երկու սպասաւորների հետ: Դահիճը ձեռին բռնած ունէր դանակ և կտակ պարկ թեփով լիքը, ծառայքը շալակած էին երկայն սրածայր երկաթի տէգեր:

Նշաֆօթի վրա ելելով, նա յետ արաւ մարմինը խաչաձև տախտակից, որի վրա ընկած էր մեռնելից յետոյ. մարմինը դեռ փոքր ինչ տաք էր, անդամները դեռ բաւական կահուղ էին:

Յետոյ կերտնի լուսի առջևը, որի երերուն ճառագայթը արձակում էր մին տեսակ զարմանալի լոյս շրջակայ առարկաների վրա, դահիճը Պաուլայի կապան քամակից պատուեց երկու կտոր, մերկացրուց մեռածի մարմինը և սկսաւ չորս կտոր անել:

Բնաջ կտրեց հանգուցելոյ ձեռերը, յետոյ ոտները, և վերջապէս գլուխը:

Հէնց որ նա աւարտեց իրա զարհուրելի գործը, էշաֆօթին մօտկացաւ մարդասիրութեան անդամների մեծերից մինը մին քանի ուրիշ անդամների հետ, և ընկերութեան պատկանեալ իրաւունքով պահանջեց, որ նրան տան մեռածի դին թաղելու համար:

Նրա պահանջմունքը կատարեցին առանց խօսելու, բայց երգում տալով, որ ընկերութիւնը չըյայտնի Պատւայի սեռը:

Մարմինը դրին եղենեայ դագաղի մէջ և տարան հրապարակից: Յետոյ դահիճը դրեց կտրած ձեռերը, ոտները և գլուխը վերոյ յիշեալ պարկի մէջ, առաւ շալակը և դնաց իրա սպասաւորների հետ դէպի մարդիտեան ճանապարհը, Տրիանի արուարձանի միւս կողմը:

Պարզունոսները շուտով գնացին նրանց ետեւից փոքր ինչ հեռու:

Երբոր քաղաքի գծից դուրս գնացին դահիճը և նրա սպասաւորները զցեցին գետնի վրա իրանց հետ բերած սրածայր տէգերը. յետոյ էն տէգերի վրա քաշ արին մեռածի ձեռերը, ոտները և գլուխը:

Եւ յապէս կատարելով դատակնիքի վերջին յօդուածը, նրանք հեռացան:

Երբ նրանց ոտների ձայնը բոլորովին կտրեցաւ, նրանց ետեւից գնացող պարզունոսները դուս եկան տէգերի մօտ: Մինչև էս ժամանակը նրանք թաքուն կանգնած էին հեռուն:

— Դէ, շուտով, ասաց Պարզունի արդոյ ընկերութեան անդամներից մինը, ապա թէ ոչ կարելի է որմին վրա դայ:

— Ես հիմի էլ զարհուրում եմ, պատասխանեց միւսը. ախրը սատանան գիտէ, էս ի՞նչ տեսակ անջափել է. իմ օրումս էսպէս չեմ արել: Եւ ի՞նչ պէտք է խօսիլ, ահա՛ պարկը:

— Եւ դրստէ դրան, ասաց երրորդը, և բռնէ, իսկ մե՛նք վեր կ'առնենք ինչ հարկաւորն' է:

Յետոյ շուտով վեր առնելով պատժածի անդամները ձողերի վրայից և դնելով պարկի մէջ Պարզունոսները գնացին իրանց որսով դէպի ընկերութեան պալատը:

Նրանք ճանապարհումը սչովի չըհանդիպեցան:

Երբ նրանք հասան իրանց պալատը, նրանց առաջը եկաւ ինքը Մանդամիենտօն:

— Ի՞նչ է, կա արեցի՞ք, հարցրուց նա իրա ստորագրեալ ներին:

— Կատարեցինք, պատասխանեց նրանցից մինք:

— Որեմն զն՝ նք, այսինքն եկէք իմ հետ. ես կըտանեմ ձեզ ուր պէտք է:

Ղարդուհասները կատարեցին զլիաւորի հրամանք: Մանդա միենտօն տարաւ նրանց էն դեանախորը, ուր, մին քանի օր առաջ, էրուեցու Մրդօղօ կուսի մարմինը:

Ինտեղ սպասում էր նրանց Խուանան: Նա նստած էր դեանախորի մէջտեղումը փորած գերեզմանի մօտ:

Նրանից երկու կամ երեք քայլ հեռու դրած էր միջեց սիպտակ բեհէզով պատած դադաղ:

Ղարդուհասներին տեսնելով, Խուանան կանգնեցաւ, մօտ կացաւ նրանց, և առնելով նրանց բերած պարկը, ասաց Մանդամիենտօյին՝

— Հիմի ինձ փոքր ժամանակ մենակ թողէք, ես ինքրս կը թաղեմ իմ որդուն:

Մանդամիենտօն և Ղարդուհասները հեռացան:

Մին բոպէից յետոյ զարհուրելի որսը դուրս հանուեցաւ պարկից: Խուանայի հաստատութիւնը, թէ և մեծ էր, սասանեցաւ, երբ տեսաւ նա իրա սնուցածի գլուխը: Խուանան լաց էր ընում:

Բայց շուտով էն հրաշալի հաստատութիւնը կրկին վերագարձաւ նրա մօտ. Խուանայի լացը դադարեցաւ. նա սրբեց աչքերը, որոնց մէջ դեռ արտասուքներ կային, կամաց համբուրեց կապտացած պռօշները, որոնք դեռ մօտ օրերումը սիրով և աղէտիւ մօտկանում էին նրա պռօշներին, և ասաց անթիթ մտիկ տալով նրա սիրուն դէմքին՝

— Կարճօրուայ, օ՛, կարճօրուայ է մեր բաժնուիլը:

Իսա ասելով, նա դրեց պատժածի յօշոտած կտորները դադաղի մէջ, և մին անգամ էլ մտիկ տուեց նրանց:

Որքան կաթոգին սէր, որքան տխրութիւն կար էս մտիկ տալումը, — խօսքով պատմել անկարելի է:

Յետոյ ծածկեց դադաղը, և չորեցաւ աղօթք արաւ սրտի և բերանով:

Ահա ժամից յետոյ, գեանախորը ներս մտաւ Մանդամիենտօն իրա մին քանի մարդկերանցով:

Խուանան նրանց տեսնելով , վերկացաւ , մտեցաւ նրանց և
ասաց Ղարդունոսների գլխաւորին՝

— Դուք, Մինեօր Մանգամիենտօ, կատարեցիք ձեր խօստումը,
եւ ել իմ կողմից նմանապէս բողոքը կատարեցի, ինչ որ խոստա-
ցել էի ձեզ . հիմի առէք էս իմ յիշատակ :

Եւ իսկոյն պառաւը հանեց մատիցը շատ թանկագին մատա-
նիք և առեց Ղարդունի ընկերութեան մեծաւորին :

— Մինեօրա, պատասխանեց Մանգամիենտօն, ուրախանալով ըն-
ծայի վրա : Ինչո՞վ կարող եմք վճարել ձեզ ձեր առատութեան
փոխարէն : Եթէ մենք էլի հարկաւոր եմք ձեզ , հրամայեցէք :

— Ես ձեզանից մին բան կըխնդրեմ — Թող առէք ինձ մնալ
կտեղ մինչև էգուց , ես ուզում եմ աղօթք անել իմ Պաու-
լայի դագաղի մօտ , և էգուց դուք կ'իջեցնէք նրան փորած գերեղ-
մանը և կըծածկէք :

— Դուք կարող էք մնալ կտեղ , Մինեօրա , որքան կըբարե-
հաճիք . իսկ դագաղի թաղումը կըլինի ձեր նշանակած ժամանակը :

— Ես էն էլ եմ ուզում , շարունակեց Խուանան , որ մին-
չև առաւօտը կտեղ ոչով չըգայ :

Մանգամիենտօն համաձայնութեան նշան զլուխ տալով հե-
ռացաւ իրա Ղարդունոսների հետ :

Մենակ մնալով պառաւը կրկին ընկաւ ծնկան վրա դագաղի
մօտ և նորմէկանց սկսաւ աղօթք անել :

Առաւօտը հասաւ : Ղարդունոսները եկան թաղելու իրանց
որը — պատժածի յօշոտած անդամները :

Ես անգամ Խուանան նրանց առաջ չըգնաց . նա պառկած
էր դագաղի մօտ , գլուխը նրա վրա կռացրած :

Ղարդունոսները ձէն տուին նրան , նա չըպատասխանեց :

Կարծելով թէ Խուանան քնած է , Ղարդունոսները սկսան
զարթայնել նրան , իսկ Խուանան չըզարթեցաւ :

Ղարդունոսներից մինը դրեց իրա ձեռը նրա օրտին . նա էլ
չ'էր խփում :

Խուանան լուռ , առանց Ֆիզիզական նեղութեան , դնացել
էր յաւիտենական կեանքը :

— Սա մեռել է , ասացին Ղարդունոսները մէկըմէկու . հիմի
ի՞նչ անենք սրա մարմնը :

— Ե՛ , որովհետև մեռել է , պէտք է թաղել , ասաց Ման-

գամիենստօն:


-- Ի՞նչու մը, հարցրուց նրա մարդկերանցից մինը:

— Չեր երեկուայ բերած գագաղը մեծ է, պատասխանեց
Գարդուենիի մեծաւորը. նրա մէջ կը տեղաւորուեն էդ տիրուհիի
մարմինն էլ, երեկուայ ձեր բոլոր բերածն էլ: Ուրեմն թաղեցէք
բոլորը միասին:

Մանգամիենտոյի հրամանը խկոյն կատարեցին:

Հէնց էն օրու մը Մանգամիենտօն, գարդուենիի ընկերութեան
կանոնների համաձայն, գրեց իրա զարհուրելի ցուցակու մը Իսուա
նայից ստացած գումարն էլ, նրա համար ընկերութեան արած ծա
ւայութիւնն էլ, և գեանաւորի մէջ նրա մեռնիլն էլ:





XV

Չ Ո Ւ

213

Բաղմամարդ պանդոկներէց մինի մէջ — որոնք մեր պատմութեան ժամանակումը էին համարեալ թէ Վաղիքսի նաւահանգստի բերնումը, և որոնց մէջ սովորաբար հաւաքւում էին նաւորդները, — նստած էին ցածր սենեակի մէջ՝ Դասեվանը, Վալորէսը և Յուհան Մելեանը: Նրանց կողքումը հասարակ փայտէ աթոռի վրա ընկած էին երկու փոքր արկղներ և բրդէ տոպրակ, էն տեսակ կապած բարակ թուղով, որ կարելի էր ձեռով տանել. կնդուր մէջ էին հեռու ճանապարհորդութեան ամենահարկաւոր բաները:

Դասեվանը և Վալորէսը արդէն երկու շաբաթ էր, որ կենում էին Վաղիկումը. Սարժապետը եկել էր հետեղ նրանցից մին քանի որ յետոյ: Նրանք մնում էին Վաղէի նրանց տուած խոտումը կատարելուն:

Բայց Վաղէն հնքան ուշացուց իրա խոտման կատարումը, որ Դասեվանի սրտումը կրկին սկսաւ զարթիլ կասկած ջահիլ Վամինիկեանի վրա, և թէպէտ նրանք ամենայն զգուշութեան միջոցները դորձ էին գրել, սակայն Դասեվանը ապահով չէր Վալորէսի և իրա վիճակի վրա: Դա մերժին երկուքը կրում էր Սարժապետն էլ:

Ներկայ դիպումումը նրանք բաւական երկօր ժամանակ նստած էին մտածմանց մէջ ընկղված, լուռ:

Սերժապետ էս լուռութիւնը կարեց Դասեվանը:

— Հայր իմ, ասաց նա Յուհան Մելեանին, էս քան

որ է, ինչոր մեք Մեծիկայից դուրս ենք եկել: Հողանդից նաւը, որի մէջ ես տեղ եմ բռնել մեզ համար, կարելի է դնայ. դուք զիտեք, որ նա մեզ չ'է մտում... և յատուկը ասեմ ձեզ, ես հասեղ հանդիտա չ'եմ. մեր ապաստանարանը կարելի է յայտնուի, և էն ժամանակը ինչ կ'անեն Ղաօլօրէսին: Արեմն ինչ անենք մենք, հայր իմ, դուք ինչ էք կարծում. դոն Քոզէն կրկատարի իրախոստումը, կրգայ հասեղ, թէ չէ... ես, վոնց որ է, յոյս չ'ունիմ:

— Ի հարկէ, պատասխանեց Տրանչիսկեանը, հասեղ վախնալու պատճառ կայ. նա ինքը չ'եկաւ, մին լուր չ'էր: Մրանից ջոկ իյուանան էլ էնպիսի դարմանալի բան արաւ... ես չ'եմ հասկանում, թէ նա ինչի՞ թաքիացաւ. այնու ամենայնիւ ես չ'եմ կարծում, որ նա յանձն առնէր...

— () չէ, չէ աղաղակեց պարզապէս Ղաօլօրէսը. Քոզէն ամենեին ցածր գործ չ'ի անիլ. նա հաղուագիւտ սիրտ ունի. աւելի կարելի է կարծել, թէ նրան մին տարաբաղդութիւն պատահեցաւ. նրա կերպարանքն էլ միշտ թախծեալ էր. նա արդէն, համարեա՞ թէ, մտում էր մին դարհուրելի բանի:

— Իմ կողմից, պատասխանեց Ղասէվանը, ես ամենեին լիտ լի հաւատարմութիւն չ'էի տալիս էն Ղաօմինիկեանին:

— Կարելի է, ասաց Տրանչիսկեանը, մին բան արդելք դառաւ նրան:

— Իայց ինչ կ'ուզէ պատահած լինէր, հայր իմ, շարունակեց Ղասէվանը, նրան հասեղ սպասելով ես փոանգի մէջ եմ գըցում նրան, որ ինձ համար կեանքիցս շատ թանկ է:

— Սպասենք էլի գոնէ երկու օր, ասաց Ղաօլօրէսը քաղցրութեամբ, միայն երկու օր, Ղասէվան, և եթէ Քոզէն երրորդ օրը չ'է գալ... երրորդ օրը, յաւելցրուց նա յողոց հանելով, մենք կրթողնենք իսպանիան:

Իս խօսքերից յետոյ, սենեակը մտաւ նաւաւարը, և յայտնեց, թէ նաւը, որի մէջ պէտք է ուղևորին Ղասէվանը և Ղաօլօրէսը, դուրս է գալու էն օրը իրիկնասպահ:

— Ինչպէս կարելի է, աղաղակեց Ղաօլօրէսը ոգևորեալ, հեպէս շուտով:

— Իչօր, Սենիօրա, յաջող քամի է, պատասխանեց նաւաւարը:

Պատճառը անհերքելի էր. քամին — իշխօղ է ծովագնացն:

ըի վրա:

Վալորէսը, առանց խօսելու, Թախծագին քաշ արաւ իրա սիրուն գլուխը:

— Վաւք տեսնում էք, հայր իմ, ասաց Ղաւտէվանը Պրանչիակեանին, մենք էլ չենք կարող սպասել, մենք պէտք է գնանք, հէնց էսօր:

— Հա՛, պատասխանեց Յովհաննէս Ղալիւանը կարեկցութեամբ մտիկ տալով Վալորէսին. անկարելութեան հետ վիճել չէ կարելի, էս բանի մէջ, անկարծիք, Ղստուծոյ կամքը կայ:

— Վաւ, սիրելի բարեկամ, էստունք տար նաւը, ասաց Ղաւտէվանը, ցոյց տալով կոյքը. իրիկնապահը մենք ինքներս էլ կը գանք հնակը:

Վաւաւարը վեր առաւ պատիկ արկղը, որի համար մենք վերը խօսեցանք, և հեռացաւ:

Մին քանի բազկից յետոյ Ղաւտէվանը շոքից նեղացած գնաց ծովի ափը հով քաշելու:

Երկար ժամանակ տխրութեամբ մտիկ տուեց ծովին, յետոյ մտիկ տուեց միւս կողմը հեռուն, և աչքերը արտասունքով լքցած ասաց, ցած և հեկեկաձայն՝

— Ա՛յ ո՞նք ժամանակ տեսնելու չեմ ես քեզ, իմ տարաբանող հայրենիք. չըկարողացայ ես օգնել քեզ, և պէտք է Թողնեմ քեզ, իբրև մեղապարտ. արդեօք արժանի կըլինիս դու ուրիշ օրերի:

Ղաւտէվանից յետոյ նա նկատեց, որ ուղղակի դէպի ինքը գալիս էին մին քանի մարդիք Սիւլիւսացւոց շորեր հագած: Արտմիտքը եկաւ, Թէ նրա նկատած անձանօթները իսկ և իսկ Սիւլիւսացիք են, Թէ նրանք կարող են ճանաչել նրան, — և նա շուտով դարձաւ պանդուկ:

Հազիւ Թէ նա կարաց ներսեանց կողպել էն սենեակի դուռը, ուր էին Յովհաննէս Ղալիւանը և Վալորէսը, իսկոյն որմին սաստիկ դիտարկեցրոց նայն դուռը:

Ղաւտէվանը վեր Թռաւ, և չէր վստահանում դուռը բանալու:

— Ներս առէք մեզ, դօն Ղաւտէվան, ասաց մին որմին, որի ձայնը իսկոյն ճանաչեցին մեր օտարականները:

Ղաւտէվան էր Վօկոյինը:

— Ղստուած իմ, աղաղակեց Վալորէսը, էս խօզէն է:

Իստէվանը փոքր ինչ միամտելով դուռը բաց արաւ :

Բայց եկողը իջողէն չ'էր : Արանք էին՝ Ղօղօն , նրա քոյրը , Սանօֆինան , Սիրենան և նրանց ճանապարհ ցոյց տուող Ղաղփիկի ընկերութեան Ղարդունոսները , որոնց յանձնուած էին Իստէվանը և Ղօլօրէսը Սեւիլիոյ ընկերութիւնից :

Կարելի է երևակայել , թէ էս դիպուածումը որքան մեծ էր մեր օտարականների դարմանքը :

— Ինչը բերեց ձեզ էստեղ , իմ բարեկամներ , հարցրուց նոր եկողներին Յովհան Աշիլեանը :

— Մենք եկել ենք էստեղ խնդրել դօն Իստէվանից և Սինեօրայ Ղօլօրէսից , որ մեզ հեռաները տանեն . մենք ուղու՛մ ենք նրանց ծառայելու , ասաց Սիրենան :

— Ընորհակալ եմ ձեզանից ձեր մտերմութեան համար , ասաց Ղօլօրէսը զգացմամբ . դուք էս առաջին անգամը չ'է , որ ձեր մտերմութիւնը ցոյց էք տալի մեզ . բայց յայտի՛ք է ձեզ , իմ բարեկամներ , որ դուք ուղու՛մ էք մասնակցել աղքատ հալածականների մեծակին , որոնք համարեալ թէ թիրաց հաց չ'ունին :

— Մենք չ'ենք թողնիլ , որ դուք նեղութիւն քաշէք . մենք կ'աշխատենք , ասաց Չապան :

— Եւ ինչպէս , յաւելցրուց սիրենան ուրախ սրտով :

— Աշխատելու մենք էլ պատրաստ ենք , ասաց Ղօղօն . բայց լաւ է որ նոցին սղորմածութիւնը առանց մեր օգնութեանն էլ լաւ կ'ապրին :

— Իսկ դօն իջողէն , ուր է նա հիմի , անհանդատութեամբ հարցրուց Ղօլօրէսը :

« Իջողէ , բառը ասելիս , Ղօղօն թախծագին քաշ արաւ գլուխը , Սանօֆինան սկսաւ դետնին մտիկ տալ , Սիրենան և Չապան լաց իլան :

— Ղուք լա՛նում էք , շարունակեց Ղօլօրէսը , կարելի է նա մեռած է () , ասացէք , աղաչում եմ ձեզ , ասացէք . . .

Իս խօսքերի ժամանակը Ղօղօն էլ լաց իլաւ : Յետոյ ներքին սաստիկ աղմկից կցկատուր ձէնով նա պատմեց զարհուրելի դուռանական (գրամբ) մէպը , որ զարհուրեցրել էր Սեւիլիան :

Պրանչիսկեանը , Իստէվանը և Ղօլօրէսը լսում էին ցամքածի պէս :

— Հիմի , Սենիօրա՛ , ներեցէք ինձ տալ ձեզ էստուր — շարու-

հակեց Կոհոն վերջացնելով իրա պատմութիւնը և հանելով իրա ջէպից մին ծրար, որի մէջ Պատուան, իրա մահու մատնուելից մին քանի որ առաջ, դրած էր բոլոր մութհակները, ստացած սեղանաւորնե-րից (բանկիրներից) . հստոնք ձեզ հասցնել հրամայեց դօն Խօղէն:

— Ի՞նչ, ասաց Վօլօրէսը զարմանալով .

— Ձեզ, Սինեօրա, դօն Խօղէն ցանկանում էր, որ դուք ըն-դունէք հատուր իրա յիշատակի համար:

Վօլօրէսը երկբայելով մտիկ էր տալի վարժապետին:

— Վուք իրաւունք չունիք բացասելու, ասաց վարժապետը. մեռածի վերջի կամքը պէտք է սուրբ լինի:

Վօլօրէսը վեր առաւ ծրարը դողդոջուն ձեռով, բաց արաւ, մտիկ տուեց նրա մէջ իլած մութհակներին, և տուեց նրանց Վստէ-վանին . նա չըհասկացաւ, թէ ի՞նչ օգուտ կարող են բերել նրա համար մին կապոց թղթերը, որոնք գրած էին ըստ մեծի մասին դժուար կարդալու բառերով:

Վստէվանը նրանից աւելի տեղեակ լինելով առևտրական ձե-րի, թղթերին առաջին գամբ մտիկ տալիս, խկոյն տեսաւ, որ շատ մեծ դումարի մութհակներ են:

— Ի՞նչ սիրտ է - և ինչ վախճան, ասաց նա յետոյ Վօլօրէսին. նրա վերջին համարեալ թէ մեռնելու մօտկացած ժամանակի ցան-կութիւններից մինն է իլել աղատել աղքատութիւնից նրանց, որոց սիրում էր նա հստեղ շատ մեծ դումար է, Վօլօրէս:

— Խեղճ Խօղէ, աղաղակեց ջահիլ կիւնք, որի մաքիցը չէր հեռանում Պատուայի զարհուրելի մահը, և որին, հս-րոպէսումը, շատ քիչ էր ուրախացնում իրանց վիճակի անակրնկալ փախիսումը:

Վստէվանը նրան տուեց մութհակները, դնելով էլի ծրարի մէջ. Վօլօրէսը տեսաւ նրանց մէջ ընկած բարովագիր. նրա վրա դրած էին հետեւեալ բառերը՝

« Կոմսուհի Վօլօրէս դե Սարգասին: Խօղէն խնդրում է կար-դալ հս բարովագիրը էն ժամանակ, երբ կոմսուհին կըլինի ապա-հով, իրա հայրենիքից հեռու , , »:

— Պէտք է սպասենք, ասաց Վօլօրէսը, կարդալով հասցէն, և թաքցնելով բարովագիրը ծրարի մէջ: Ալ խեղճ, խեղճ Խօղէ:

Իրիկունք արդէն մօտ էր: Արբ արեգակը սկսաւ խոնարհել, էլի եկաւ նաւաւարը:

— Ինձ զրկեցին ձեզ կանչելու, Մենծօր, ասաց նա Ղստէվա-
նին. նաւի մէջ ձեզ են մնում:

— Մենք պատրաստ ենք, պատասխանեց Ղստէվանը, մտիկ
տալով 'Ղօլօրէսին:

'Ղօլօրէսը արտասուտա աչքերով մտկացաւ Ֆրանչիսկեանին և
ասաց՝

— Հայր իմ, փոխեցէք ձեր միտքը, դնանք միասին:

— Ս'եմ կարող, դուստր իմ, պատասխանեց Յովհան Մե-
լեանը, ես երգում եմ տուել չըհեռանալ Խաչանիայից . . .
եւ պէտք է դառնամ իմ աղքատների մօտ:

— Իայց դուք . . . դուք չէք մտածնալ մեզ:

— 'Ղուստր իմ, ես ձեզ սիրում եմ հայրական սիրով
և մօրութեամբ եւ ամէն ժամանակ կրկնեմ ձեզ մօտ, միշտ կ'ա-
ղօթեմ ձեզ համար:

Մեր օտարականները դուրս եկան պանդոկից. Ֆրանչիսկեանը
գնաց նրանց հետ. նա ցանկանում էր ճանապարհ դցել նրանց մին-
չև նաւը:

'Ղաւ ահանդատի մօտ նրանք ամէնքը նստան մեծ նաւակի մէջ,
որ մին քանի բուպեւմբ հասցրուց նրանց մինչև նաւը. էս վերջինից
խկոյն քաշ արին սանդուղար:

Կօկօն, Ղապան, Մանօֆիհան և Մերենան վեր ելան. կարգը
հասաւ 'Ղօլօրէսին և Ղստէվանին:

'Ղօլօրէսը բռնեց Ֆրանչիսկեանի ձեռը և էլի արտասուալից
աչքերով ասաց՝

— Մնաք բարով, հայր իմ, . . . մնաք բարով յաւիտեան
. . . կատարեցէք մեր խնդիրքը, աղօթեցէք մեզ համար:

— Երթա՛ք բարով . . . Երթա՛ք, դուստր իմ, պատասխա-
նեց վարժապետը, ներքին տղամուկից կցկաուր ձէնով. մի՛ տխրիք
. . . . դուք բարեբաղդ կրկնիք . . .

— (), հայրենիքից քսածների համար բարեբաղդու թիւն չը-
կայ, քչիչալով ասաց նրան 'Ղօլօրէսը:

Եւ խկոյն նա գնաց դէպի նաւը:

Ղստէվանը, սաստիկ աղմկեալ հուփ տուեց Ֆրանչիսկեանի
ձեռը մնաք բարովի մտխարէն, և միացաւ իրա ուղեկիցներին հետ:

'Ղաւակը դալձու ծովափը:


Ղստէվանը և 'Ղօլօրէսը մին անգամ էլ նշանացի մնաք բա-

բով ասացին Սարգսպետին:

Նրանց պատասխանեց Յովհան Նէիլեանը ձեռով ցոյց տալով
երկինքը, իբրու թէ ասում էր՝

— Մենք կբռնանուինք էն տեղ

Յետոյ շուտով նաւի խարխիտը վեր առան, և հայրենազուր-
կերը բարեյաջող քամիով գնացին հեռաւոր երկրի ամբ, ուր գտան
իրանց համար ապահովութիւն և հանգիստ:





XVI

ԻՆՍՏԻՏՈՒՅԻ ՔՆՏՈՒՄԻՆՑ:

Մենք ներկայացրինք ձեզ, ընթերցող, Խապանիոյ Խնկվիզիցիայի բռնաւորութիւններից մէկ անցքը նրա նոր սարքուած ժամանակիցը առած: Հիմի աւելորդ չենք համարում մին քանի խօսք ասել էն վիճակի համար, որի մէջ ընկաւ նա տասն և իններորդ դարումը:

1808 տարուայ "Իսկ" Աին Նապոլէօնը յողթական անուն ժառանգելով հրամայեց փակել Խնկվիզիցիայի ժողովները (տրիբունալները) բոլոր Խապանիումը: Յետոյ, երբ Յովսէփը Խապանիոյ Թագաւոր դառաւ, նրա հրամանով այրուեցան Խնկվիզիցիայի դործերն էլ, բայց առնելով նրանցից մին քանի խիստ վսեմները: Բայց Թագաւորական հրամանները, պապական կոնդակները և Խնկվիզիցիայի բողոքացութիւն կազմող անձանց համար իլած տեղեկութիւնները, բոլորն էլ պահուեցան:

Ին ժամանակը քանդեցին բոլոր Խնկվիզիցիայի պատկանեալ շինուածները. բայց նրանց կործանումը չանցկացաւ առանց արգելքների և արիւնհեղութեան:

Մհաւասիկ, էս մասին օրինակի համար, մին գաղղիացի գընգապետի (պօլիտիսիկի) պատմութիւնը, որին Մարշալ Սուլտը յանձնել էր քանդել Խնկվիզիցիայի շինուածը Մադրիտի մէջ:

“ 1809 տարումը իմ Մատրիգ իլած ժամանակը, դարձուցի ուշք ու միտքս Խնկվիզիցիայի պատկանեալ տան վրա: Ին ժամանակը Նապոլէօնը հրատարակեց հրովարտակ (դեկրետ), որով Խնկվիզիցիան ջնջուեցաւ ամէն տեղ, ինչ տեղ նուաճել էին Ֆրանսիայի զօրքերը: Ես էս հրամանը յայանեցի Մարշալ Սուլտին, որ էն ժամանակը Մադրիտի նահանգապետ էր: Մարշալը հրամայեց ինձ

վարուել կայսեր կամքի համաձայն: Այս յայանեցի նրան, թէ ես
բանը կատարելու միայն իմ գունդս հէրիք չ'է, և ես ձեռք կը-
տամ քանդելու Խնկվիղիցիայի տունը, եթէ ինձ օգնական երկու
գունդ էլ կրտան: Վարչալը համաձայնեցաւ:

Խնկվիղիցիայի շինուածք պատած էր խիստ հասա պարսպով,
և մէջը ունէր պահապան 400 զինուորներ: Վօտեցայ նրան երեք
գնդով և պահանջեցի, որ Խնկվիղիթօրները հրամայեն բաց անել
դռները և շինուելը յանձնել կայսերական զօրացը: Պարսպի վրա կանդ-
նօղ պահապանը խօսեցաւ որմնի հետ, որ մեզ չ'էր երևում, (գոնէ
մեզ հնապէս թուեցաւ,) և յետոյ կրակեց մեր վրա, և իմ մարդ-
կերանցից մինին սպանեց: Այս էր նշան պատերազմի: Այս հրամայ-
եցի իմ մարդկերանց խօսել գնտակով հէնց ովոր պարսպի վրա երևի:

Շուտով երևեցաւ, որ կախը հաւասարակչիւ չ'էր: Պահա-
պան զօրքերը, որոնք պարսպի մէջ էին, կրակում էին մեզ վրա
պատուարի քամակից, իսկ մենք կանգնած էինք բոլորովն բաց տե-
ղումը, ուրեմն պէտք էր ընդունէինք համարեալ թէ առանց պա-
տապարանի նրանց մահաբեր կրակը: Թնդանօղ հետներս մին հաս
էլ չ'ունէինք: Մեր զօրութիւնը դրանք վրա ներդարծել չ'էր կա-
րող, պարսպի վրա ելլելու հնարք չ'ուր: Տեսնելով, թէ ուրիշ
հնարք պէտք է գործ ածել, ես հրամայեցի կտրել մին քանի գե-
րան և նրանցով խօսել պատին:

« Այս յանկարծական որմնաքանդիչները իրանց ցանկալի պը-
տուղը ցոյց տուին, մտիկ չ'ըտալով իմ մարդկերանց վրա կարկ-
տի պէս եկած գնտակներին: Նրանց ջերմեռանդութիւ-
նով պատի վրա շուտով պատառուած բաց իլաւ, և իսկոյն իմ զին-
ուորներս ներս թափեցան:

Անտեղ տեսանք մենք եզուիտական յանդուգն անամօթուե
օրինակը: Արք մենք ստիպում էինք մանել իսկ շինութեան մէջ,
մեր առաջը դուս եկան զգեստաւորած բոլոր Խնկվիղիթօրները, դէմ-
քերը թախծեալ, ձեռերը կուրծքերին խաչած, և նրանցից մինը
ասաց իրա զինուորներին յանդիմանելով՝

— Ինչի՞ էք պատերազմում մեր բարեկամ Ֆրանցուզների հետ:
« Նրանք, երևի թէ, ուզում էին հաւաստացնել մեզ, թէ
ամենեին չ'են հրամայել զինուորներին դէմ դնել և չ'ըզխտէին, թէ
ի՞նչ է անցկացել նրանց մէջ մինչև էս ժամանակը: Բայց մենք
չ'ըխափուեցանք, և ես կարգեցի նրանց վրա պահապաններ: Նրանց

զինուորներին գերի առանք, և յետոյ սկսեցինք տնտղել շինուածքը:

Կոնկրետայով շատ փառաւոր սենեակներից, մենք տեսանք շատ
զոհարաններ, խաչելու թիւներ և մեղքամասներ: Բայց բանաւոր
բազման նշան անգամ չըտեսանք, ամէն տեղ շքեղութիւն, ամէն
տեղ հանգստութիւն: Կայա ուր են էն շարչարանաց գործիքները,
որոնց համար ասել էին մեզ. ուր են էն բանտերը, որոնց մէջ
ինչպէս պատահում էին, կենդանւոյն թաղում էին տարաբաղդ
ներին: Մենք չըգտանք ոչ մինը, ոչ միւսը, թէ և շատ ման
եկանք: Այս էն ժամանակը Ռեկվիզիթօրները հաւատացնում էին
մեզ, թէ շինութեան մէջ էնպիսի բաներ չըկան, թէ նրանց հա
մար քսութիւն են արել մեզ մօտ:

« Այս սկսայ մտածել, թէ Մադրիտի Ռեկվիզիցիան նման
է միւսներին, որոնց համար ասել էին մեզ, և կամե՞նում էի տըն
տղելը վերջացնել, և ահա՛ յանկարծ իմ բնկերներէն մինը, 117
գնդի ղորապետը, ասաց ինձ՝ — Ինչ, գնդապետ, այսօր մեր մե
ծաւորն էք, և ինչ որ դուք հրամայէք, մենք պէտք է հնազան
դենք. բայց ներեցէք խորհուրդ տալ ձեզ մին հնարք էլ. թող էս
մարմարիտեայ յատակը էլի լուս անաղին, թող ամեն նրա վրա
ջուր. կարելի է, լուս կ'ընկնի էնպիսի տեղ, որ ջուրը կըծըծէ
առանց դժուարութեան: — Այս հետեւեցայ նրա խորհրդին, ջուրը բե
րին, և թէպէտ Ռեկվիզիթօրները շատ նեղանում էին, բայց լըցրին
յատակի վրա, որ էր մեծ, գերազանց յղկած մարմարի քարերից:

« Մենք սկսանք լուս մտիկ տալ յատակի վրա: Ըստով էն
բնկերը, որի համար խօսեցայ ես, բղաւեց ինձ, թէ դուստ,
ինչի որ ման էինք գալի: Այս տեսաւ, թէ մին քարի կողքից ջուրը
շտապով ցածր էր գնում, հէնց կարծես մին մեծ դատարկ տեղ:
Իսկոյն մերանք ամէնքը թափեցան էն քարի վրա, օֆիցերները
սկսան կտրել նրան իրանց թրերով, զինուորները շտիկներով
(սիւնկիւ): Ոմանք էլ աշխատում էին փշրել նրան իրանց հրացան
ների կոթերով: Իսկ Ռեկվիզիթօրները աղաղակում էին, թէ մենք
ի՞ դուր տեղը փչացնում ենք այնպիսի գեղեցիկ յատակը: Բայց
յանկարծ մին ղորական պատահմամբ խօսեց հրացանի կոթով զը
տպանակին (պրո՛ւժին) — և քարը բարձրացաւ: Ռեկվիզիթօրները
մեռելի գոյն բռնեցին:

Տեսողցինք քարի տակը, և տեսանք օանդուխտ. շուտով ես
գնացի գէպի սեղանը և վեր առայ աշտանակի վրայից մեծ մեղրա

մամ, որ նրա լուսավոր անաղենք մեր գիւտը: Արքեպիսկոպոս ձեռք տուի նրան, Բնկվիղիթ օրնեբից մինը կամաց գիպու իմ ձեռիս և ասաց ինձ կեղծուտք բարեպաշտա թեան ձեռով: — Արգեակի իմ, դրան չէ կարելի գիպելի արիւնստ ձեռերով, էդ սուրբ իր է: — Ի հարկէ, Բնկվիղիթ օրի խօսքը ինձ չարգելից: Արքեպիսկոպոս մամը աշտանակի վրայից, և վէր եկայ մեր դատած սանդուխտից:

« Բնտեղից վէր ելնելով, մենք մտանք մին մեծ քառանկանի սենեակի մէջ, որի անունն էր դապարան: Արքեպիսկոպոսը ընկած էր մեծ քար, քարի վրա դրած էր աթոռ. — սրա վրա սովորաբար նստեցնում էին դատաւարտեալին: Արքեպիսկոպոսը էլ վարք ինչ հետու դրած էին Բնկվիղիթ օրնեբի աթոռները: Արքեպիսկոպոսը մենք տեղենք բարձր էր մուսնեբից: — Արքեպիսկոպոսը առնակաւ թեան ժամանակ բողմում էր մեծ Բնկվիղիթ օրը: Դապարանից դուս գալիս, մենք տեսանք վերջապէս Բնկվիղիցիական բանտերը: Արքեպիսկոպոսը ձգած էին երկար շարքով, և ամէնքն էլ առանց բացառութեան շատ պատիկ էին: Բնկվիղիցիայի հալածանաց տակ ընկած տարաբաղձները մաշուում էին նրանց մէջ մէն մէնակ մինչև մեռնելու օրը. նաև նրանց մարմիններն էլ չէին հանում էնտեղից, և էն մարմիններից տարածուած հոտը չէր նեղացնում նախահոգ Բնկվիղիթ օրնեբին: Հոտը դուրս էր գնում առանձին սարքած խողովակներից:

Մենք տեսանք էն բանտերի մէջ նոր մեռած բանտարկեալների մարմիններ էլ, և դեռնի վրա ամբարցած ոսկերուսիք: Մին բանտի մէջ մենք գտանք դեռ կենդանի վշտատարներ, էնտեղ կային՝ աղամարդիք էլ, կնանիք էլ, ջահիլներ էլ, և եօթանասուն տարեկան ծերեր էլ: Արքեպիսկոպոսը ոչ մինի հարին մին շոր էլ չըկար:

« Իմ գինուորներս խկոյն աղատեցին բոլոր բռնուածներին տալով նրանց իրանց շորերի մին մասը: Արքեպիսկոպոսը կամենում էին խկոյն դուրս բերել աղատած բանտարկեալներին իստակ օդի մէջ, պարզ երկնքի տակ. բայց ես գիտելով, թէ էն կարող է վնաս տալ այնպիսի մարդկերանց, որանք երկար ժամանակ մաշուած են ծանրահոտ և մութ բանտի մէջ, հրամայեցի, որ նրանց ընտելացնեն օրուայ լուսին և օդին կամաց կամաց, տալով ինչ որ հարկաւորն է:

Տնաղելով բոլոր բանտերը և բաց անելով էն դռները, որանց մէջ դեռ կային կենդանի նահատակներ, մենք գնացինք դապարանի աջու կողմի սենեակը: Բնտեղ գտանք մենք մեծ սենեակ և զանազան չափի շարժարանաց դորձիքներ:



Նրանց տեսնելիս իմ զօրականներն զրա տիրեց անպատմելի
ցատումն. նրանք սկսան աղաղակել, թէ բոլոր Ինկվիզիթօրները և
բոլոր Ինկվիզիցիայի զինուորները արժանի են ամենամեծ : Մենք
աւելորդ համարեցինք նրանց արգելել, և նրանք, առանց վաքր
ինչ աշանաղու, սկսան Ինկվիզիթօրներին շարչարել : Իմ առջևս կա-
տարեցին չորս զանազան տեսակ շարչարանքներ. յետոյ ես հեռացայ :

“ Օտարհարելի տեսարանը միայն էն ժամանակը վերջացաւ,
երբոր իսպառ ամեն շուեցան ամէնքը, որանցից մեր զինուորները ազու-
մէն վրէժ առնել նրանց անհաւատ բռնաւորութեան և հալածանաց
վտարէն :

“ Հէնց որ բռնաւածներին դուրս բերին, նրանց չորս բոլորքը
պատեցին իրանց ազգականները և բարեկամները : Բողոքի մէջ,
նրանցից միքը ինչ առաջ, տարածուելէր համբաւ, թէ մենք ա-
զատել ենք շատ տարաբաղդներն : Այլ, թէ ինչ տեսակ յառաջ գալ
էր էն ժամանակը :


“ Հարիւր մարդի չափ, որոնք կենդանի թաղած էին Ինկ-
վիզիցիայի գեանախորերն մէջ, մենք յետ առինք հասարակուեր :

“ Իս տեսութեան եղբակիս հանդէսից յետոյ իսկոյն պա-
հանջեցի Մադրիտից շատ վաւօդ և հրամայեցի լքցնել Ին-
կվիզիցիայի զինութեան տակը և կրակ տալ : Մին քանի բուպէից
յետոյ նա թաւօդը հազարաւոր հանդիսատեսներն առաջը : ,

“ Իսպանիոյ գերագոյն կօրտէսները (դէպուտատները) 1813
տարուայ մեարտարի 12 ին հաստատեցին Ինկվիզիցիական դատա-
րաններն ջնջուելը . բայց 1814 թուի Յուլիսի 21 ին Ֆերդինանդ
I-ը կրկին նրան կանգնեցրուց : Մեծ Ինկվիզիթօր կարգուեցաւ պրելատ
Տրանցիակ Մեեր է կամպիլիօ : Կրկնածին Ինկվիզիցիայի վերջին զո-
հերից մինը էլաւ Խոսիֆ Մարիօ Մօրելլօ :

Յետոյ, 1821 տարուայ, Ինկվիզիցիան բոլորովին ջնջուեցաւ :
Այժմ նա չըկայ և շնորհիւ լուսաւորութեան յառաջադիմութեանը,
յոյս ունինք, թէ էն Տանատիկական դատարանը էլ կրկին չի
նորոգուիլ Իսպանիոյ մէջ :

Սխառն երբորդ և վերջին հատորոյ :



7

ԱՐԻՊԱՆԻՐ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՆԵՐ

Երի	Գրք	Գրքի	Գրքի
4	2	1854	1434
26	17	աղօթ	աղօթք
43	36	Հեռանկներ	Հեռանայինք
71	12	անհարմար	անհամար
75	2	որանք	որանք
88	15	էր	էլ
114	5	մասին	միասին

Հարյուր Երկրորդ

10	18	շարունակից	շարունակեց
23	10	ամսականից	ամսականից
46	2	գրա-չ	գրազ
52	3	մահապաշտ	մահապաշտ
—	9	խիստ	խիստ
59	34	յամբայն	յամբայն
71	1	խե	խեղճ
75	2	մնաց	մնաց
115	10	փշայնեւ	փշայնեւ
117	11	շարունակում	շարունակում էր

Հարյուր Երրորդ

41	5	թախտեր	տախտեր
46	23	գահիճները	գահիճները
86	6	սե	սե
100	8	գրեց	գրեց
112	15	յայտի	յայտի



22

2595

2013

